



Foreign Language Teaching and Research Press (Beijing)

Գրքի հրատարակությունն իրականացվել է
«Օտար լեզուների ուսուցման եւ հետազոտությունների
հրատարակչության» (Պեկին, Չինաստան) աջակցությամբ:



Ոգի-Նաիրի
Vogli-Nairi

中华思想文化术语

第7辑，亚美尼亚语版

**Key Concepts in Chinese
Thought and Culture**

(Volume 7, Armenian Version)

Translator - Astghik Atabekyan

Stepanakert 2019

**ՉԻՆԱԿԱՆ ՄՏՔԻ
ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՀԻՄՆԱԿԱՆ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

հատոր 7

Թարգմանիչ՝
Աստղիկ ԱԹԱԲԵԿՅԱՆ

ՀՏԴ 1/14:008

ԳՄԴ 87+71

«Գեդարմ» հանդեսի մատենաշար

Չ 590

Չ 590 **Չինական մտքի և մշակույթի հիմնական**

հասկացություններ: Հատոր 7:

Թարգմ. անգլ.՝ Ա. Աթաբեկյան:

Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հր., 2019, 128 էջ

Հայ ընթերցողներին է ներկայացվում չինական միտքն ու մշակույթը հատկանշող հիմնական հասկացությունների հանրագիտարանային մատենաշարի յոթերորդ գիրքը: Հատորաշարն աննախադեպ ու բազմաձևավալ մի աշխատություն է, որ հետաքրքիր ու օգտակար կարող է լինել ոչ միայն փորձագետների եւ «Երկնատակի» երկրի սիրահարների համար, այլեւ կգրավի բոլոր նրանց ուշադրությունը, ովքեր ցանկանում են իրենց համար բացահայտել չինական ժառանգության նշանակությունը համաշխարհային քաղաքակրթության մեջ:

Original Chinese-English Text

© Foreign Language Teaching and Research Publishing Co., Ltd.(FLTRP)

Armenian Translation © Foreign Language Teaching and Research Publishing Co., Ltd.

All rights reserved.

ՀՏԴ 1/14:008

ԳՄԴ 87+71

ISBN 978-9939-1-1047-9

© «Ոգի-Նաիրի»/թարգմանության համար, 2019/

**Չինական մտքի և մշակույթի
հիմնական հասկացություններ.
Թարգմանական և հաղորդակցական նախագիծ**

Խորհրդատուներ

Լի Սյունցին
Ֆլորընս Չյա-ին

Լին Ուսուն
Յե Ջան Ցիջի

Փորձագետների խորհուրդ

Ղեկավար

Հան Ջեն

Անդամներ

Չաո Ֆուլին, Չեն Դեջան, Չեն Մինմին, Ֆեն Ջիվեյ, Հան Չինթայ, Հուան Յուի, Չին Յուանփու, Լի Չիանչժուն, Լի Չաոգո, Լոու Յուլի, Մա Ցյանֆեյ, Նե Չանշուն, Փան Գունքայ, Վան Բո, Վան Նին, Յե Լան, Յուան Չիսի, Յուան Մինփեյ, Ջան Լիվեն, Ջան Միփին, Ջեն Շուփու

Չինագետներ

Գայ Սարվատորե Ալիթո, Ռոջեր Թ.Էյմս, Սարթին Ջ.Փատրըս, Բ.Ր.Դիփակ, Վոլֆգանգ Քուբին, Հարի Անդերս Հենսոն, Փոլ Քրուք, Մայքլ Քրուք, Դոն Սթար, Ջան և Այվըն Ուոլֆ, Չարլզ Ուիլմեն

Գիտական խորհուրդ

Բայ Ջենքույ, Ցայ Լիցյան, Չեն Հայյան, Չեն Շաոմին, Ֆու Ջիբին, Գուո Միաոդոն, Մայքլ Հոար, Հե Շիձյան, Հու Հայ, Հու Չժիֆեն, Հուան Չունյան, Չյա Դեջուն, Չյան Հայլոնգ, Չյան Հաոշու, Լի Ցունշան, Լի Չինլին, Լի Սյունթաո, Լին Ման-Չիու, Լյու Ցին, Լյու Ջեն, Լյու Յուեհուա, Մեն Մինյուան, Մեյ

Յուանյուն, Մեն Յիննան, Թորսթըն Փեյթերզ, Ջոշուա Մեյսոն,
Ցյաո Յուն, Ռեն Դալուան, Շեն Վեյսին, Լինեյթ Շի, Սուն Յիֆեն,
Թաո Լիյին, Թուն Սյաոհուա, Վան Գանի, Վան Հուեյմին, Վան
Քեփին, Վան Լիլի, Վան Լին, Ուան Մինձիե, Վանգ Վեյդոն, Վեյ
Յուշան, Վեն Հայմին, Վու Գենյու, Վու Ջիձյե, Սիա Չիսյուան,
Սյու Մինցյան, Սյու Յանան, Սյու Ին, Յան Վենբին, Յան
Սյուեձյուն, Յան Սյուեդոն, Յան Իրուեյ, Յույ Վենյաո, Յու
Լայմին, Ջան Ցյանմին, Ջան Չին, Ջան Սիյին, Ջաո Թուն, Ջեն
Քայ, Ջոու Յունֆան, Ջու Լյանցի, Ջու Յուան, Յուո Լի

**Հանդարտ վերաբերվիր իրականությանը
անշի-չուշուն 安时处顺**

Պետք է հանդարտ վերաբերվել իրականությանը և հետևել դրա բնականոն ընթացքին: Կյանքի հանդեպ այս վերաբերմունքը պաշտպանում էր հին փիլիսոփա Ջուանցին (մթա. 369?-286թթ.): Նա հավատացած էր, որ աշխարհում ամեն ինչ ենթարկվում է ինքնաբերական ձևափոխությունների՝ անկախ մարդու կամքից, և մարդիկ պետք է հանդարտ վերաբերվեն կյանքի ու մահվան փոփոխություններին: Սակայն սա չի նշանակում պասիվություն կամ համակերպում: Սա նշանակում է, որ մարդիկ պետք է անաչառորեն վերաբերվեն կյանքին, անվրդով ընդունեն փոփոխությունները և հետևեն կյանքի բնական ուղուն: Սա Լաոցզիի «Դաոն գործում է բնական ճանապարհով» սկզբունքի շարունակությունն է:

Մեջբերումներ 引例

Այն, ինչ ձեռք ես բերում կյանքում, բնության փոփոխությունների շնորհիվ է. կյանքի կորուստը նույնպես իրերի բնականոն ընթացքն է: Ես հանգիստ եմ վերաբերվում բնության գործառույթներին և գնում եմ այդ ճանապարհով. ուստի ոչ վիշտը, ոչ էլ ուրախությունը չեն ազդի ինձ վրա: (Ջուանցի)

Ինձ շնորհվում են հարստություն, պատիվ, բարի բախտ և շնորհներ, որ հարստացնեն իմ կյանքը, իսկ աղքատությունը, ցածր կարգավիճակը, վիշտն ու անհանգստությունն ինձ դողում են հաճույքներ փնտրել: Կյանքում հետևում եմ բնական ընթացքին. երբ մեռնեմ, հանդարտ կընդունեմ մահը: (Չան Յայ. «Լուսավորություն՝ կոնֆուցիական ուսմունքների միջոցով»)

Պահպանել օրենքն իշխանության միջոցով
բառ ֆա չու շի 抱法处势

Արտահայտությունը նշանակում է իշխանության միջոցով պահել օրենքը: Սա կառավարման ձև է, որը պաշտպանում էր Հանֆեյցին (մթա.280?-233): Օրենքն այն է, ինչին բոլոր մարդիկ պետք է հետևեն, այն կարգավորում է մարդկանց վարքագիծը, ինչպես նաև տարբերակում ճիշտը սխալից, բարին չարից: «Իշխանություն» ասելով նկատի ունենք կառավարչի դիրքն ու ուժը: «Պահպանել օրենքն իշխանության միջոցով» գաղափարը կառավարչից պահանջում է օգտագործել իր իշխանությունը՝ ապահովելով, որ օրենքն ի կատար ածվի պարզևատրման և պատժի միջոցով, որի արդյունքում կպահպանվեն սոցիալական կարգն ու սոցիալական արժեքները:

Մեջբերում 引例

Սովորական կառավարիչը, որն այնքան լավը չէ, որքան Յան կամ Շունը, բայց և չի իջել Յիեի կամ Ջուուի մակարդակին, պահպանում է օրենքն իշխանության միջոցով, որպեսզի հաստատի սոցիալական կայունություն: Եթե նա մեջքով շրջվի օրենքին և ուրանա իր իշխանությունը, հասարակության շրջանում անկարգություններ կսկսվեն: (Հանֆեյցի)

Եղիր փակ, բայց ոչ մեկուսացած
բիերբուդան 比而不党

Այս արտահայտությունը նշանակում է՝ կապեր հաստատել մարդկանց հետ՝ հիմնվելով ընդհանուր արդար գործի վրա, և ոչ թե եսասիրական նպատակներով: Բի (比) նշանակում է «փակ», ենթադրում է կապվածություն կամ մտերմություն: Այստեղ այն նշանակում է խումբ, որը միավորվել է մեկ ընդհանուր արդար նպատակի շուրջ: Դանը (党), որ նշանա-

կում է «մեկուսացած», ենթադրում է կողմնակալություն և պառակտվելու հակում: Այստեղ այն նկարագրում է խումբ, որը ի մի է բերվել անձնական կապերի և եսասիրական շահերի շուրջ: Առաջինն անանձնական է և կառուցողական, ինչը դարեր շարունակ գովաբանվել է ուղղամիտ մարդկանց կողմից. երկրորդն իշխանությունն օգտագործում է եսասիրական նպատակներով, ինչը դարեր շարունակ խարազանվել է ազնիվ մարդկանց կողմից:

Մեկնաբանություն 引例

Լսել եմ՝ նա, ով ծառայում է ինքնիշխան կառավարչին, պետք է այլոց հետ կապեր հաստատի՝ հիմնվելով արդար գործի և ոչ թե եսասիրական շահերի վրա: Երկրի հանդեպ հավատարմությունից ելնելով ազնիվ մարդկանց երաշխավորել՝ նշանակում է կապեր հաստատել հանուն արդար գործի. իսկ եսասիրական շահերից ելնելով մարդկանց երաշխավորելը նման է խառնախումբ կազմելուն: Ինչպե՞ս կարող եմ կառավարություն ղեկավարել, եթե խառնախմբեր եմ ձևավորում՝ միևնույն ժամանակ ծառայելով իմ ինքնիշխան կառավարչին (*«Դիսկուրսներ պեյությունների կառավարման մասին»*):

Պայքարել արդար գործի համար բին յի յի դուն 兵以义动

Այս եզրույթը նշանակում է՝ բանակն ուղարկել արդար պատերազմում կռվելու, որը նման է «կռվել հանուն արդար գործի» գաղափարին: Հին ժամանակներից ի վեր չինացի ժողովուրդը մեծ հարգանքով է վերաբերվել բանակին, որը պատերազմ է գնացել հանուն արդարության: Այստեղ *յի* (义) նշանակում է դադարեցնել ցանկացած բռնի գործողություն և վերջ տալ մարդկանց տառապանքներին: Պատերազմը բռնի գործողություն է, և ոչ ոք չպետք է պատերազմ նախա-

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

ձեռնի: Ավելին, պատերազմը վերջին ելքն է՝ մարդկանց վրա գործադրված ցանկացած բռնության դիմակայելու և կանխելու համար: Եզրույթն ի ցույց է դնում արդարության և բարյացակամության (բարեգործության) իդեալները, որոնք պահպանում է չինացի ազգը:

Մեջբերումներ 引例

Բանակը, որը կռվում է բռնությունը ճնշելու համար և մարդկանց փրկում է վտանգից, կոչվում է արդարության բանակ: (Ուցի)

Բանակն օգտագործվում է անկարգությունները ճնշելու և ոչ թե որևէ բռնի գործողություն սկսելու համար: (Հուայնանցի)

Այժմ մենք բանակն ուղարկում ենք արդար գործի համար կռվելու: Եթե տատանվենք ու անմիջապես գործողություններ չձեռնարկենք, կհիասթափեցնենք ամբողջ ազգին: (*«Երեք բազավորությունների պատմությունը»*):

**Չենքը մահացու է. պատերազմն անբարոյական է
քին ջե սյունցի, ջեն ջե նի դե 兵者凶器, 争者逆德**

Չենքերը մահվան գործիքներ են. պատերազմը նենգ է ու անբարոյական: *Բինգ* բառի (兵) նախնական իմաստը «զենքն» է, իսկ լայն իմաստով այն նշանակում է «բանակ»: *Չեն* (争) նշանակում է «հակամարտություն» և «պայքար», իսկ այստեղ՝ «պատերազմ»: *Նիդե* (逆德) նշանակում է տմարդի պահվածք՝ ի հակադրություն բարեգործության և կարեկցանքի: Հին չինացիները, այդ թվում և ռազմական ստրատեգները, բոլորն էլ ուժի և պատերազմի կիրառումը համարում էին զարհուրելի, որին պետք է դիմել միայն ծայրահեղ դեպքում, և նույնիսկ եթե ռազմական ուժ էր կիրառվում,

Չինական մտքի եւ սշակույթի հիմնական հասկացություններ

պետք էր հավատարիմ մնալ բարեգործության և արդարամտության սկզբունքներին: Սա այն բարձր հարգանքի ևս մեկ արտահայտություն է, որ չինացիները տաժում են բարյացակամության և լուսավորության գաղափարների նկատմամբ, խաղաղությունը պահպանելու տեսանկյունից, ինչպես մարմնավորում է *ուեն* գաղափարը:

Մեջբերում 引例

Ձենքերը սպանության գործիքներ են. պատերազմը հակադրվում է բարոյականությանը: Ամեն ինչ պատճառ ունի: Ուստի, երբ իմաստուն կառավարիչը պատժում է բռնությունը, նրա նպատակը բարոյականության և կարեկցանքի պահպանումն է (Յուլյանցի):

Հրահանգիր միայն նրան, ով ձգտում է սովորել, սովորեցրու միայն նրան, ով ցանկանում է արտահայտվել, բայց չգիտի, թե ինչպես

բու ֆեն բու ցի, բու ֆեյ բու ֆա 不愤不启, 不悱不发

Պետք չէ սովորեցնել ուսանողին, մինչ նա չի ձգտի սովորել. պետք չէ ուղղորդել ուսանողին, մինչ նա կցանկանա արտահայտվել, բայց չի իմանա, թե ինչպես: Այս եզրույթը կրթության վերաբերյալ Կոնֆուցիոսի փիլիսոփայության հիմնարար սկզբունքն է: Այն ընդգծում է ուսանողների մոտիվացիան պահպանելու կարևորությունը: Ժամանակակից կրթական տեսության մեջ կրթության ուղղորդման սկզբունքը ծագել է այս հասկացությունից:

Մեջբերում 引例

Կոնֆուցիոսն ասում էր. «Ես չեմ սովորեցնում աշակերտին, քանի դեռ նա չի ձգտում սովորել, չեմ ուղղորդում աշակերտին, մինչ նա ցանկանում է արտահայտվել, բայց չգիտի, թե ինչպես: Եթե նրան սովորեցնեմ մի բան, բայց նա չկարո-

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

դանա հետևություններ անել դրա հետ կապված երեք այլ հարցերի շուրջ, այլևս իմաստ չունի որևէ բան սովորեցնել նրան («*Անալեկրներ*»):

**Աղաղակի անարդարության դեմ
բուփինցեմին 不平則鳴**

Այս արտահայտությունն առաջին հերթին մատնանշում է այն դիտարկումը, որ երբ առարկաները կորցնում են իրենց հավասարակշռությունը, հնչյուններ են արձակում: Պատկերավոր ասած՝ այն նշանակում է, որ մարդը, ում հետ վատ կվերաբերվես, բողոքի և դժգոհության հնչյուններ կարձակի: Թան դինաստիայի հայտնի գրող Հան Յուն (768-824թթ.) օգտագործում էր այս արտահայտությունը՝ մատնանշելով, որ գրողները ստիպված կլինեն գրել, երբ արտաքին աշխարհը նրանց մեջ անարդարության զգացողություններ հարուցի: Այդպիսի զգացմունքները գրողներին ստիպում են գրականության միջոցով մերկացնել անարդարությունը: Այս տեսությունը Կոնֆուցիոսի (մթա. 551-479թթ.) «Պոեզիան կարող է անդրադառնալ դժգոհությանը» և մեծ պատմաբան Սիմա Յիանի (մթա. 145 կամ 135?-?թթ.) «Գրիր՝ ազատ արձակելով զայրույթն ու վրդովմունքը» աշխատությունների շարունակությունն ու զարգացումն է: Ավելին, Օույան Սիուն (1007-1072 թթ.) Հյուսիսային Սուն դինաստիայում առաջարկում է. «Լավ բանաստեղծությունը զգալիորեն զգացմունքների արդյունք է»: Նա հավատացած է, որ երբ բանաստեղծը հայտնվում է բարդ և նույնիսկ վտանգավոր իրավիճակում և ստիպված է լինում զսպել զայրույթն ու վրդովմունքը, միայն այդ դեպքում է կարողանում որակյալ բանաստեղծություններ գրել:

Մեջբերումներ 引例

Ընդհանուր առմամբ, երբ իրերը կորցնում են հավասարակշռությունը, հնչյուններ են արձակում (Հան Յու. «*Հրածեչր մեն Դունյեին*»):

Մեծ պատմաբան Սիմա Յիանն ասել է. ««Գժվարության մասին» և «Լքված գայրույթ»․ սրանք այն երկու երկերն են, որոնց միջոցով իմաստունները թոթափել են իրենց գայրույթն ու վրդովմունքը: Այսպիսով, թվում է՝ հին իմաստունները չէին գրում, եթե գայրացած կամ վրդովված չէին լինում: Գրել առանց զգացմունքների՝ նշանակում է դողալ առանց մրսելու կամ տրտնջալ, երբ հիվանդ չես: Ո՞վ կցանկանա նման գործեր կարդալ, նույնիսկ եթե դրանք գրվեն» (Լի Ջի. «Ճահճույթի ավագակները» գրքի նախաբան):

Արագագիր ցառշու 草书

Արագագիրը, որը նաև կոչվում է «վարժ ձեռագիր», չինական վայելչագրության հատուկ ոճ է: Այն անցել է զարգացման չորս փուլ. արագագիր գրասենյակային գիր, կիսաարագագիր, կանոնավոր արագագիր և վայրի արագագիր: Այն հիմնադրվել է Հան դինաստիայում՝ նպատակ ունենալով հեշտացնել ձեռագիրն ու մեծացնել արդյունավետությունը: Արագագրի առաջին տարածված ձևը գրասենյակային գիրն էր: Հետագայում վայելչագիրներն ավելացրին կամ պակասեցրին նրբագծերի քանակը, որպեսզի գրի այս ոճը վերածեն կիսաարագագրի: Հան դինաստիայի ավարտին Ջան Ջին (?-192?թթ.) ենթադրաբար ազատել է կիսաարագագիրը գրասենյակային արագագրի մնացորդներից՝ տառանշանի վերջին գծերը վերից կապելով հաջորդ նշանի առաջին նրբագծի հետ, հեռացնելով որոշ արմատանշաններ, նրբագծեր փոխառնելով հարևան մասերից և կազմելով կանոնավոր արագագիր(որն այսօր հայտնի է «արագագիր ձեռագիր» անունով): Թան դինաստիայում Ջան Սյուն և Հուայ Սուն (727-785թթ. կամ գուցե 737-799թթ.), ովքեր համարվում էին արագագրության և վայելչագրության վարպետներ, լիովին արտահայտում էին իրենց զգացմունքներն ու մտքերը և

գրում էին իրենց տառերն ավելի ազատ ու անկաշկանդ ձևով: Նրանց վրձնահարվածները ձգված էին ու անվերջ, նրբագեղ շրջանաձև շարժումներով, սահուն ուրվագծերով, տառանշանների և բազմաթիվ տարբեր նախշերի զարմանալիորեն խիզախ համադրությամբ, որը հանգեցրեց «վայրի» արագագրի ստեղծմանը: Հետագա սերունդներ վերջինս կոչում էին «մեծ արագագիր», ի հակադրություն «փոքր արագագրի», որն իրականում կանոնավոր արագագիրն էր:

Մեջբերումներ 引例

Ջան Սուն վայելչագրության վարպետ էր և չունեք որևէ այլ հետաքրքրություն: Ամեն անգամ, երբ նրա սիրտը թրթռում էր ուրախությունից, գայրույթից, անելանելիությունից, աղքատությունից, թախծից, վշտից, հաճույքից, վրդովմունքից, կարոտից, արբեցումից, ձանձրույթից կամ անարդարությունից, ազատություն էր տալիս զգացմունքներին արագագրի միջոցով (Հան Յու. «Հրածեչրի մի քանի խոսք Գաոսիանին՝ նշանավոր վանականին»):

Չնայած վարչապետ Ջանը (Շանին) սիրում էր գրել արագագիր ոճով, նրան երբեք չհաջողվեց կատարելության հասնել: Շատերը ծաղրում էին նրան, բայց նա անտարբեր էր: Մի օր նրա մտքով մի քանի բանաստեղծական տող անցավ, ուստի խնդրեց, որ վրձին ու թանաք բերեն, ու սկսեց գրել աշխույժ ու եռանդուն շարժումներով: Հետո զարմիկին խնդրեց կրկնօրինակել տողերը: Տարօրինակ նրբագծերով տառանշաններից շփոթված՝ երիտասարդը կանգ առավ ու հարցրեց, թե ինչ են նշանակում դրանք: Վարչապետն ամենայն մանրամասնությամբ ուսումնասիեց, բայց տառանշանները նրա համար նույնպես անընթեռնելի էին: Ուստի կշտամբեց տղային. «Ինչու՞ ավելի շուտ չհարցրեցիր, քանի դեռ հիշում էի տառանշանների իմաստը» (Շի Հուիհուն. «Երեկոյան գրույցներ Լենջայում»):

Միջատագիր չունչու 虫书

Միջատագիրը գեղագրության հատուկ ոճ էր, որը տարածված էր Գարնան և աշնան ժամանակահատվածում և Պատերազմող պետությունների շրջանում, հայտնի է նաև «թռչնի և միջատի գիր» և «թռչնի և միջատի կնիք» անուններով: Սա կնիքագրի տարբերակ էր: Այս ոճով գրված տառանշանները նման էին բնության մեջ թռչունների և միջատների. այստեղից էլ առաջացել է անվանումը: Միջատագիրը դրոշմում էին զենքի, զանգերի ու կաթսաների վրա: Օրինակ, 8 տառանշանից բաղկացած մակագրությունը Յուեի թագավոր Գոուձիանի թրի վրա, որը պեղվել էր Հուբեյ նահանգում՝ Յիչանի մոտակայքում, արված էր հենց այս ոճում: Յին դինաստիայում կիրառվում էր գեղագրության ութ ոճ, որոնցից չորրորդ տեղում միջատագիրն էր: Ուան Մանը (մթա. 45-23թթ.) գահը բռնազավթելուց հետո հրամայեց, որ միջատագիրը ներառվի վեց պաշտոնական գրերի շարքում և օգտագործվի դրոշմների, պիտակների կամ կնիքների վրա:

Մեջբերումներ 引例

Դրանից հետո Յին դինաստիայում պարծենում էին, որ կա ութ գրելաոճ՝ (1) մեծ կնքագիր, (2) փոքր կնքագիր, (3) փորագրագիր, (4) միջատագիր, (5) հին կայսերական կնքագիր, (6) պաշտոնական գիր, (7) զենքի գիր և (8) գրասենյակային գիր: (Մու Շեն. «Գրի բացատրություն և տառանշանների պարզաբանում» գրքի առաջաբան):

Չինական տառանշանները կարելի է բաժանել վեց ձևի: Դրանք են՝ արխաիկ ոճ, արխաիկ ոճից հարմարեցված գիր, կնքագիր, գրասենյակային գիր, շեղ կնքագիր և միջատագիր: Պետք է իրազեկ լինել գրի բոլոր ձևերի մասին՝ հին ժամանակներից մինչև մեր օրերը, որպեսզի կարողանաք կնիքներ թողնել ու գրել պիտակների վրա: («Հան դինաստիայի պատմությունը»)

**Գրի մեջ հակիրճությունը գնահատվում է
ցի շան քի յաո 辞尚体要**

Հիմնական գաղափարները կամ առանցքային բովանդակությունն արտահայտելիս գիրը պետք է լինի բովանդակային և հակիրճ: «Հակիրճություն»՝ նշանակում է որսալ էությունը: Գաղափարն առաջացել է «Պատմության գրքից», որն ի սկզբանե հղում էր անում այն պահանջին, որ կառավարության հրովարտակները և կարգադրությունները պետք է լինեն սեղմ և ըստ էության: Լիու Սիեն (465?-520?) այս սկզբունքը կիրառում էր գրաքննադատության մեջ՝ ընդգծելով, որ ստեղծագործությունը պետք է լինի թե՛ բովանդակալից, թե՛ սեղմ, և ձգտի ներկայացնել բուն էությունը: Եզրույթն արտացոլում է «հակիրճության» ավանդական ձգտումը չինական մշակույթում, որը նախընտրում է սեղմ ոճով հաղորդել բովանդակալից ասելիքը, այլ ոչ թե փնտրել նոր արտահայտություններ, որոնք կարող են ստվեր զցել ստեղծագործության հիմնական գաղափարի վրա: Հետագայում սա դարձավ ստեղծագործության դասական ոճի հիմնարար պահանջ և կարևոր առաջնորդող սկզբունք գրական ստեղծագործության համար:

Մեջբերումներ 引例

Կառավարման համար ամենաարժեքավոր գործոնը նրա կայունությունը, բովանդակալից և պարզ ձևակերպումներն են, այլ ոչ թե նորությունների փնտրտուքը: («Պատմության գիրքը»)

(«Պատմության գրքի») «Ջուոի գիրքը», քննարկելով գրավոր ստեղծագործությունը, պնդում է, որ հակիրճությունն ամենակարևորն է: Անցյալի դասերը վերաշարադրելիս Կոնֆուցիոսը նողկանքով էր արտահայտվում ոչ ուղղափառ համոզմունքների վերաբերյալ: (Լիու Սիեն. «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը»)

Անսահմանափակ անուն

դամին 达名

«Անսահմանափակ անունը» դասակարգման ձև է, որն օգտագործում էր Մոհիստական դպրոցը: Մա սովորական երևույթների ընդհանուր անունն է: Մոհիստներն ընդգծում էին երևույթներին պատշաճ անվանում տալու կարևորությունը՝ նրանց իրական էությունն արտացոլելու համար: Նրանք ունեին երևույթներն անվանելու երեք ձև՝ անսահմանափակ, դասակարգված և մասնավոր: «Անսահմանափակ անունը» ամենաընդհանուրն է, ինչպես, օրինակ, «իր (երևույթ)» անունը: «Իրը (երևույթը)» վերաբերում է բոլոր օբյեկտներին:

Մեջբերումներ 引例

«Անունը» բաղկացած է անսահմանափակից, դասակարգվածից կամ մասնավորից: (Մոցի)

«Իրը /երևույթը/ բանը» անսահմանափակ է: Իրականում գոյություն ունեցող ցանկացած բան անհրաժեշտաբար անուն է պահանջում: (Մոցի)

Խոշոր կնքագիր

դաջուան 大篆

Խոշոր կնիքագիրը գրելաձև է, որն առաջացել է չինական տառանշանների զարգացման ընթացքում: Ի տարբերություն մանր կնքագրի՝ այն ունի երկու իմաստ: Նեղ իմաստը մասնավորապես վերաբերում է նախացին շրջանի գրին, որը փորագրում էին քարերի վրա (*ջոուուեն* 籀文), և որը ձևավորվել է Պատերազմող պետությունների շրջանում, Յին թագավորության քարե մակագրությունների նմանությամբ: Այն աչքի է ընկնում ծանր վրձնահարվածներով, կրկնակի կա-

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

ռուցվածքով և ընդհանուր առմամբ ավելի կանոնավոր ու ստանդարտ նախշերով, քան ավելի վաղ շրջանում բրոնզե առարկաների վրա արված մակագրությունները: Լայն իմաստը վերաբերում է քարի վրա փորագրված տառանշանների բոլոր տեսակներին, ներառյալ բրոնզե առարկաների վրա արված փորագրությունները, խոշոր կնքագիրը և բոլոր թագավորությունների քարի մակագրությունները Գարնան և աշնան և Պատերազմող պետությունների ժամանակաշրջաններում: Երբ Յին թագավորությունը միավորեց Չինաստանը, այն փոխարինվեց մանր կնքագրով:

Մեջբերումներ 引例

«Շիջուն»՝ երեխաների համար նախատեսված հնագույն դասագիրքը Չինաստանում, բաղկացած է 15 գլխից: Բան Գուի երկտողը. «Ջուուի Սուան թագավորի օրոք մեծն պատմաբան Ջուուն 15 գլուխ գրեց մի հավաքածուի համար, որը կրում էր «խոշոր կնքագիր» վերնագիրը: Մինչ Արևելյան Հան Գուանգուու կայսեր ժամանակաշրջանը նրանցից վեցն արդեն կորած էր» (*«Հան դինաստիայի պատմությունը»*):

Հնագույն գրի ու խոշոր կնքագրի վախճանը տեղի չունեցավ Յին դինաստիայում. այն անհետացել էր դեռևս Պատերազմող պետությունների վաղ շրջանում:

Պատճառն այն է, որ գրելու հնագույն ձևերը փոխվում էին, երբ թագավորություններից յուրաքանչյուրը մշակում էր իր սեփական գիրը, ուստի հետագա ժամանակներում մարդիկ դժվարությամբ էին ճանաչում բոլոր այսպիսի գրերը (Ուու Դաչեն. *«Հնագույն գիրն ու խոշոր կնքագիրը. գրի բացարձակության և տառանշանների լուսաբանման լրացում»*):

**Ի խույզ գիտելիքի
դառ ուրնայուն 道问学**

Այս եզրույթը, որն առաջին անգամ ի հայտ է եկել «Ոսկե միջինի դոկտրինում», նշանակում է գիտելիքի որոնում: Եզրույթը և մարդկանց առաքինի էությունը խորապես հարգելու գաղափարը կարևոր են սեփական առաքինությունը զարգացնելու համար: Ըստ «Ոսկե միջինի դոկտրինի»՝ բարոյական զարգացումը պահանջում է թե՛ ակնածանք մարդկանց՝ երկնքի կողմից օժտված առաքինի էության հանդեպ, թե՛ հարգանք գիտելիքի անվերջ որոնումների նկատմամբ: Գիտելիքի որոնումներում ցանկալի է խորությամբ հասկանալ դասական ստեղծագործություններում շարադրված ուսմունքները և առօրյա կյանքում կիրառել դրանք: Այսպես դրանք կարելի է վերածել իրապես առաքինի արարքների:

Մեջբերում 引例

Հետևաբար, ազնվականը պետք է ակնածանքով վերաբերվի մարդ արարածների առաքինի էությանը և մշտապես ձգտի գիտելիք ձեռք բերել: Այսպես նա բազմակողմանի գիտելիքներ ձեռք կբերի և խորությամբ կտիրապետի դրանց: Այսպես նա կկարողանա հասնել կատարելության և պահպանել Ոսկե միջինի դոկտրինը: Նա կարող է վերանայել այն, ինչ սովորել է անցյալում ու նորովի հասկանալ դա: Նա ազնիվ ու անկեղծ կլինի՝ պահպանելով ծեսերն ու էթիկայի կանոնները (*«Ոսկե միջինի դոկտրինը»*):

**Երկու միջոց
երբին 二柄**

Այս համատեքստում երկու միջոց՝ նշանակում է ինքնիշխան կառավարիչ, որն ունի թե՛ պարզևատրելու, թե՛ պատժելու իշխանություն: Երկուսն էլ կառավարման հիմնական

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ձևերն են և քննարկման առարկա են եղել մտքի տարբեր դպրոցներում: Հնագույն գիտնական Հանֆեյցին (մթա. 280?-233) մեծ կարևորություն էր տալիս կառավարման մեջ պարզևատրումների ու պատիժների դերին և վստահ էր, որ երկուսն էլ պետք է արվեն ըստ օրենքի: Նա, ով ապրել է օրենքով, պետք է արժանանա պարզևատրման, իսկ նա, ով խախտել է օրենքը՝ պատժի: Սա մարդկանց կստիպի գործել օրենքին համապատասխան, քանի որ մարդիկ սիրում են պարզևատրվել և վախենում են պատժից: Նա նաև շեշտում էր, որ ինքնիշխան կառավարիչը պետք է կիրառի իր իշխանությունն այնպես, որ պարզևատրումներն ու պատիժները բաշխվեն ճիշտ և ճիշտ օրենքի պահանջին համապատասխան, և ապահովի, որ այդպիսի իշխանությունը չչարաշահվի՝ որպես սեփական շահերը հետապնդելու գործիք:

Մեջբերում 引例

«Երկու միջոց» եզրույթը վերաբերում է պատժին և պատիվներին: Իսկ ի՞նչ ասել է պատիժ և պատիվ: Մահապատիժը պատժի ձև է, իսկ պարզևատրումը՝ պատվի արժանացնելու ձև: Պաշտոնյաները վախենում են պատժից և ձգտում են արժանանալ պատվի: Երբ ինքնիշխան կառավարիչը գործադրի այս երկու ուժերը, պաշտոնյաներն անկասկած կվախենան պատժից ու կձգտեն պատվի արժանանալ (Հանֆեյցի):

Եթե երկու մարդ համամիտ լինեն, նրանց համատեղ ուժը մետաղ էլ կկոտրի

Էր ռեն թոն սին, ցի լի դուան ծին 二人同心，其利断金

Երբ երկու մարդ նույն կարծիքի են, նրանց համատեղ ուժը նման է սուր շեղքի, որ կարող է մետաղը կտրել: «Երկու մարդ» բառակապակցությունն այստեղ նշանակում է երկու եղբայր, ամուսին ու կին կամ միասին աշխատող ցանկացած

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

երկու մարդ: «Համամիտ» բառն այստեղ նշանակում է, որ մարդիկ կիսում են նույն տեսլականն ու մտածողությունը: Այս փոխաբերական եզրույթը նշանակում է, որ նույն միտքն ունեցող մարդիկ կստեղծեն հզոր ուժ և կարող են հաղթահարել ցանկացած խոչընդոտ: Այն շեշտում է համատեղ ջանքի և համագործակցության կարևորությունը, որը կարող է մեծ ուժ ստեղծել:

Մեջբերում 引例

Եթե երկու մարդ նույն մտքին են, նրանց համատեղված ուժը կարող է մետաղի կտոր կտրել: Համամիտ մարդկանց խոսքերն անուշաբույր են, ինչպես՝ խոլորձը: (*«Փոփոխությունների գիրքը»*)

Ուպայա / Նպատակահարմարություն Ֆանբիան 方便

Այս գաղափարը վերաբերում է համապատասխան հմուտ միջոցներին կամ մեթոդներին: «Նպատակահարմարություն» բառը հաճախ օգտագործվում է «հնարագիտություն» (*կառուսայա*) բառի հետ: Այն վերաբերում է Բուդդային կամ բողիսաստովային, ով քարոզում է հարմարվել հանգամանքներին և վերափոխել մարդ արարածներին: Նա օգտագործում էր հնարամիտ բառեր, եզրույթներ և պատմողական տեխնիկա, որպեսզի տարբեր խորքային գիտելիքներ ունեցող բոլոր ունկնդիրները հասկանան ու ըմբռնեն բոլոր խրթին ներիմաստները: «Նպատակահարմարություն» հասկացությունը բուդդայականության «Մեծ անիվ» (Մահայան) ուղղության առանցքային հասկացությունն է: Այն ընդգծում է, որ բոլոր խոսքային արտահայտությունները, այդ թվում և Բուդդայի ուսմունքը, կախված են եզրույթի և արտաքինի գաղափարից: Նրանք կարող են հասնել բարձրագույն մակարդակի: Որոշակի իմաստով բոլորն էլ նպատա-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

կահարմար միջոցներ են, ինչպես լուսինը մատնացույց անող մատը: Սա է պատճառը, որ դրանք չպետք է մեկնաբանվեն բառացիորեն: Պետք չէ կառչել դրանցից:

Մեջբերում 引例

Այն օրից, ինչ դարձել են Բուդդա, զարգացել են և սովորեցրել պատճառական կապերի մասին պատմություններ և համեմատությունների որոշ տեսակներ: Անթիվ-անհամար հնուտ միջոցներով ուղղորդել են մարդկանց, որպեսզի նրանք զերծ մնան ցանկացած կապվածությունից: (Աստվածաշնչյան տեքստ. «Հրաշալի Դհարմայի լուրուս սուրբան»)

Ժողովրդին լռեցնելն ավելի վնասակար է, քան գետ արգելափակելը

Փան մին ջի քուում շեն յու ֆան չուան 防民之口，基于防川

Մարդկանց լռեցնելը և կարծիքների արտահայտումն արգելելն ավելի վնասակար է, քան գետի հունն արգելափակելն ու հեղեղ առաջացնելը: *Ֆան* (防) նշանակում է «ամբարտակ», որը դադարեցնում է ջրի հոսքը: Բառի իմաստն ընդլայնվել է, և հիմա այն նշանակում է «արգելափակել», «կանխել» կամ «դադարեցնել»: Գետի հոսանքն արգելափակելը կտիպի, որ ջուրը բարձրանա և տապալի ամբարտակները՝ հանգեցնելով անվերահսկելի հեղեղի: Հներն այս նմանաբանությամբ նկարագրում էին այն լուրջ վնասը, որ կպատճառվեր, եթե հանրությանը թույլ չտային արտահայտել իր կարծիքը: Դրական տեսանկյունից դիտարկելիս այն նշանակում է, որ հանրությունը հզոր է ու անդիմադրելի, և որ կառավարիչը պետք է թույլ տա նրան արտահայտվել կամ հակառակ դեպքում ակնկալել ժողովրդական դիմադրություն: Գաղափարը համահունչ է այնպիսի արտահայտությունների, ինչպիսիք են՝ «մարդիկ պետության հիմքն են»,

Չինական մտքի եւ սշակույթի հինական հասկացություններ

«ժողովրդի կամքը պետության հիմքն է», «մարդիկ կարող են թիավարել (պետության) նավը կամ խորտակել այն»:

Մեջբերում 引例

Եթե մարդկանց թույլ չտաս արտահայտել իրենց կարծիքը, վնասն ավելի մեծ կլինի, քան գետն արգելափակելը: Երբ գետը դուրս է գալիս ափերից, բազմաթիվ մարդիկ են վնասվում: Նույնը տեղի է ունենում նաև, երբ արգելափակում ես ժողովրդական զգացմունքները: Ուստի նրանք, ովքեր վերահսկում են գետերը, պետք է վերացնեն արգելքները, որպեսզի ջուրն անարգել հոսի. ովքեր կառավարում են մարդկանց, պետք է հեռացնեն խոչընդոտները և մարդկանց խրախուսեն բարձրաձայնել իրենց միտքը (*«Դիսկուրսներ պետությունների կառավարման մասին»*):

Ուժ և եռանդ Ֆենշեն 风神

Այս եզրույթը վերաբերում է ուժին ու եռանդին, որ կարելի է գտնել արվեստի մեծ գործում: Այն առաջին անգամ հայտնվել է Ուեյ և Չին ժամանակաշրջանում հռչակավոր մարդկանց մասին մեկնաբանություններում: Հետագայում բերվել է ստեղծագործական քննադատության ոլորտ: Թան դինաստիայի՝ գեղագրության մասին տեսությունը յուրացրեց եզրույթը՝ վայելչագրական ստեղծագործության առանձնահատկությունները նկարագրելու համար: Իր «Հետագա մեկնաբանություններ վայելչագրության մասին» վերտառությամբ էստեում Սուն դինաստիայից Չիան Կույը (1155?-1209թթ.), հենվելով «ուժ և եռանդ» հասկացության վրա, մասնավորապես պնդում էր, որ վայելչագրական ստեղծագործության արժանիքը որոշվում է թե՛ գեղագրի բարոյական կերպարով, նրա ոճի ծագմամբ, թե՛ հմտությամբ, նորարարությամբ և վրձնի ու թղթի օգտագործմամբ: Եզրույթը մեծ

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

մասսայականություն ձեռք բերեց, երբ Մին դինաստիայից Մաո Կունը (1512-1601թթ.) օգտագործեց այն իր քննադատական էսսեներում: Նա գովերգում էր «Պատմաբանի արձանագրությունները»՝ որպես դասական օրինակ և բարձր կարծիք էր արտահայտում Օույան Սիուի (1007-1072թթ.) էսսեների մասին, որոնք օժտված էին ուժով ու եռանդով: Նրա չափանիշն էր՝ տեսնել, թե արդյո՞ք պատումի սահուն հոսքն ապահովված է, թե՛ ոչ, և արդյո՞ք էսսեում արտահայտված են զգացմունքի բարդ նրբությունները:

Մեջբերումներ 引例

Ուժ և եռանդ ունենալու համար վայելչագրության վարպետը պետք է լինի բարոյապես զարգացած, հետևի հին ժամանակների վարպետների օրինակին, ունենա որակյալ վրձիններ և թուղթ, խիզախ լինի վրձնահարվածներ անելիս, ունենա լրացուցիչ իմաստություն և հմտություններ, լինի սահուն և հղկված, ինչպես հարկն է վերահսկի վրձնահարվածները՝ անկախ նրանից՝ դրանք մոտենում են իրար, թե հեռանում իրարից, և հաճախ լինի նորարար (Ջիան Կույ. «*Հեղափոխական մեկնաբանություններ գեղագրության մասին*»):

Արևմտյան Հան դինաստիայից ի վեր բոլոր էսսեիստներից ամենից շատ պաշտում են մեծն պատմաբան Սիմա Ցիանին: Գրելու նրա ձևը համոզիչ է, հերոսական և խորապես վշտալի: Նրա էսսեների փառահեղ եռանդը հաճախ բառերից ու հռետորական արտահայտչամիջոցներից անդին է, և հենց դա է նրա իրական մոզական գրավչությունը, ինչպես Սիաոհե գետի, Սիանշույ կամ Դունթին լճի վրա մի փերի, որին կարելի է հեռվից տեսնել, բայց երբեք չմոտենալ: (Մաո Կուն. «*Օույան Սիուի երկերի ընդրանու*» նախաբան):

Համընկնող իմաստներ

գեյի 格义

Եզրույթը վերաբերում է մի մեթոդի, ըստ որի թարգմանությունն ու մեկնաբանությունն արվում են՝ բուդդայական դոկտրինների համար օգտագործելով չինական միտքը: Ուեյ, Չին և Հարավային ու Հյուսիսային դինաստիաների ժամանակաշրջանում, երբ մեծ քանակով բուդդիստական սուրբ գրքեր էին թարգմանվում և ներմուծվում, բուդդայական միտքն արողջությամբ անհայտ էր չինական աշխարհին: Չինացի ժողովուրդը, որ խորապես հետաքրքրված էր Բուդդայի օրենքով, փորձում էր խորամուխ լինել Բուդդայական սուրբ գրերի իմաստի մեջ: Նրանք փոխառում էին Լաոցզիի, Ջուանցզիի, մյուսների գրքերի բառապաշարը: Այս գրքերի հասկացությունները և նույնիսկ գաղափարները լրացվում էին: Նրանք զարգացնում էին իրենց փաստարկները, և դա կոչվում էր «համընկնող իմաստներ»: «Համընկնումը» դարձել էր չափման միավոր: Այսպիսով, այս ժամանակաշրջանը նաև կոչվում էր համընկնող իմաստների բուդդիստական շրջան: «Համընկնող իմաստները» մեկնաբանության յուրահատուկ մեթոդ է: Այն բուդդայականության մեկնաբանությունն է չինական մտքի տեսանկյունից և չինական աշխարհում կառուցում է բուդդիզմի մտքի համակարգ: Հետևաբար, այն հիմնարար ազդեցություն է ունեցել բուդդիզմի չինականացման մեջ:

Մեջբերում 引例

Այն ժամանակ Ջու Ֆայան, Զան Ֆալանը և մյուսները օտար տեքստերի դոկտրինները համադրում էին չինական դասական գործերի նախնական գաղափարների հետ և բերում օրինակներ, որպեսզի մարդիկ հասկանան իմաստը: Սա կոչվում էր «համընկնող իմաստներ»: Ավելի ուշ վանականները, օրինակ՝ Փիֆուն և Սիանթանը, նույնպես օգտագործեցին «համընկնող իմաստների» մեթոդը իրենց աշա-

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

կերտներին դասավանդելիս («Նշանավոր վանականների կենսագրությունները»):

Գլխարկ կրելու արարողություն գուանլի 冠礼

Գլխարկ կրելու արարողությունը ցույց էր տալիս, որ մարդը հասել է չափահասության տարիքի: Հին Չինաստանում, երբ երիտասարդը դառնում էր 20 տարեկան, այդ իրադարձությունը նշանավորվում էր կարևոր արարողությամբ: Արարողության ընթացքում նա կրում էր տարբեր գլխարկներ. այստեղից էլ ծագել է արարողության անվանումը: Ծեսը ենթադրում էր, որ երիտասարդը հասել է չափահասության տարիքի՝ ոչ միայն ֆիզիկական կառուցվածքով, այլև այն բարոյական դիրքորոշման տեսանկյունից, որը նրանից պահանջում էին՝ ինչպես չափահասից: Համարվում էր, որ այս ծեսն անցնելուց հետո մարդը պատրաստ է կյանքում որպես չափահաս մարդ կրել իր պատասխանատվությունը և մասնակցել կարևոր արարողությունների կամ գործունեության:

Մեջբերումներ 引例

Գլխարկ կրելու արարողությունը բոլոր ծեսերի սկիզբն է ու կարևոր բարեպատեհ միջոցառում: («Ծեսերի գիրքը»)

Երբ երիտասարդը կրում էր առաջին գլխարկը, արարողության ղեկավարն առաջարկում էր շնորհավորել՝ ասելով. «Այս երջանիկ օրն առաջին գլխարկը շնորհվում է քեզ: Ակնկալում ենք, որ կազատվես մանկական մտածելակերպից ու ձեռք կրերես չափահասության շնորհները: Այդպես կապրես երկար ու երջանիկ կյանք և բարի բախտ կունենաս» («Ծեսերի և ծիսակատարությունների գիրքը»):

Վսեմությունն արվեստում հուածին 化境

Վսեմությունն արվեստի բարձրագույն վիճակն է: Այն կարևոր եզրույթ էր Հին Չինաստանի գրաքննադատության ոլորտում, որը նման էր «երկինքը և մարդիկ մեկ են» և «բնության հրաշակերտ աշխատանք» գաղափարներին: Այն պնդումը, որ «երկինքն ու երկիրը գոյություն ունեն ինձ հետ ներդաշնակության մեջ, և տիեզերքում ամեն ինչ ինձնից անբաժան է», ինչպես Ջուանցզին (մթա. 369?- 286) է գրում իր «Ամեն ինչ հավասար տեսելու մասին» գրքում, նշանավորեց այս տեսության հիմքը: Այսպիսի գերազանց արվեստի գործը գեղագիտական վիճակ է, երբ մարդը վայելում է իր և շրջապատի միասնության երանությունը, և երկինքը լիովին միաձուլվում է մարդու հետ: Անկախ նրանից՝ բանաստեղծություն է թե նկար, այն այնքան բնական է ստեղծվում, որ ոչ մի նշան չի մատնում, թե մարդն է այն «քանդակել» կամ «փորագրել»: Արվեստում կարելի է հասնել վսեմության, երբ նկարիչն ունենա բացառիկ ձեռքերումներ, խոր ըմբռնում և գեղարվեստական տեխնիկա: Այդ դեպքում նա կկարողանա վրձնահարվածները համապատասխանեցնել երևակայությանը՝ ամեն ինչ ենթարկելով իրեն: Այսպիսի ազդեցության կարելի է հասնել թերևս միայն բնության կախարդական ձեռքով և ոչ երբեք մարդկային ջանքերի միջոցով:

Մեջբերումներ 引例

Մարդիկ չգիտեն, որ եթե վարիացիան երևում է հիմնականում տաղաչափական սխեմաների միջոցով, արվեստում վսեմությունն ամբողջությամբ գեղարվեստական տեսլական է: Առաջինը հեշտությամբ նկատելի է, իսկ երկրորդը դժվար է տեսնել: Առաջինը ենթադրում է որոշակի արտասովորություն. հետևաբար արհամարհում է պայմանականությունը կամ պարզությունը: Վսեմությունն արվեստում, մյուս կողմից, պահանջում է մարդու բնական էության ծաղկում և բար-

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

գավաճում, և որ մարդը մշտապես հետևի սրտի թելադրանքին: Դու Ֆուի՝ տողում հինգ տառանշանով, ինչպես նաև տողում յոթ տառանշանով արտաստվոր տաղաչափությամբ բանաստեղծությունները վարիացիայի հրաշալի օրինակներ են: Սույն դիմաստիայից հետո բանաստեղծները հատկապես ջանում էին կրկնօրինակել նրա ոճը, թեև նրա բանաստեղծությունների վսեմությունն այդտեղ չէ (Հու Յինլին. «Պոեզիայի բազմակողմանի ուսումնասիրություն»):

Պոեզիայի մեջ վսեմությունը վրա է հասնում անապասելի անձրևի ու փոթորկի պես: Երբ աստված կամ դևն է հայտնվում կամ անհետանում, մարդը տեսնում է միայն վայրկենական պատրանքներ ու լսում անորսալի ձայներ, որ հանկարծ գալիս ու անհետանում են: Դրա ձևակերպումը դիմադրում է վերծանման ցանկացած փորձի, և դժվար է հետևել դրա զարգացմանը (Հե Յիսուն. «Պոեզիան հասկանալու գործիքներ և մեթոդներ»):

Ամուսնական արարողություն հունի 婚礼

Ամուսնությունը կարևոր արարողություն է մարդու կյանքում, որի միջոցով տղամարդն ու կինը դառնում են ամուսնական զույգ: Հին չինացիների տեսանկյունից՝ այս արարողությունը հաստատում էր տղամարդու և կնոջ՝ սիրո վրա հիմնված միությունը՝ հաստատելով փոխադարձ հարգանքի վրա ձևավորված հարաբերություններ և կազմելով ընտանեկան միավոր կանոնավոր կյանքի համար: Երկու տարբեր ազգանունով երկու տարբեր կլան ներկայացնող տղամարդու և կնոջ միությունը նաև ծառայում էր երկու կլանների միջև մտերմիկ հարաբերությունների ամրապնդմանը և ապահովում էր ընտանիքի անդամների ավելացումն ու ապագա սերունդների շարունակականությունը: Արդի հասարակության մեջ ամուսնական արարողության ձևի և նշանակության մեջ տեղի են ունեցել բազմաթիվ փոփոխություններ:

Մեջբերումներ 引例

Ամուսնական արարողությունը հարաբերություններ է հաստատում երկու տարբեր ազգանունով երկու ընտանիքի միջև, որպեսզի նրանք երկրպագեն նախնիներին և շարունակեն սերունդների դաստիարակության գործընթացը: Այսպիսով, առաքինի մարդիկ գնահատում են ամուսնական արարողությունը (*«Ծեսերի գիրքը»*):

Փեսան սպասում է տան մոտ: Երբ հարսը ժամանում է, փեսան խոնարհվում է նրա առաջ ու հրավիրում տուն: Երկուսով վայելում են նույն ուտելիքն ու հավասար խմում նույն շշի գինին, ինչը խորհրդանշում է միմյանց սիրող ու հարգող երկու մարդու կազմված մեկ մարմին (*«Ծեսերի գիրքը»*):

Կառուցվածք ծիեզոու 结构

Եզրույթն ի սկզբանե վերաբերում էր շենքի ընդհանուր նախագծին: Ավելի ուշ այն ձեռք բերեց արվեստի և գրական ստեղծագործության ընդհանուր կառուցվածքի և սյուժեի զարգացման իմաստ: Գեղագրության մասին տեսություններում այն վերաբերում է թե՛ անհատական տառանջանի, թե՛ ամբողջ գեղագրական ստեղծագործության կանոններին ու նախագծին: Տարբեր երկարությամբ ու լայնությամբ վրձնահարվածները, ինչպես նաև նրանց վերընթաց կամ վարընթաց գծերը որոշում են տառանջանի ձևը: Հետևաբար, կառուցվածքը կարևոր է գեղագրական արվեստի գործ ստեղծելու համար: Պոեզիա և արձակ գրելու մասին տեսություններում այն վերաբերում է բանաստեղծական կոմպոզիցիայի տարրերին, ինչպիսիք են ներածությունը, գործընթացի ծավալումը, անցումն այլ տեսակետի և ամփոփումը. այն նաև օգտագործվում էր էսսեի կառուցվածքային արժանիքները կամ թերությունները գնահատելու համար: Գեղարվեստա-

կան գրականության և դրամայի մասին տեսություններում եզրույթն օգտագործվում է շատ ավելի լայն համատեքստում: Մին դինաստիայի վերջի և Յին դինաստիայի սկզբի տեսաբան Լի Յուն (1611-1680թթ.) իր «Պատահական գրառումներ՝ թեթև շարժումներով» գործում դիտարկում էր, որ կառուցվածքը նման է բետոնից արարած ստեղծելուն. պետք է, նախ, շրջանակ կազմել, ապա միս ու արյուն տալ, ապա ավելացնել դիմագծերը, և մարմինն ի վերջո տեսք կստանա: Դա նման էր նաև տուն կառուցելուն. շինարարը նախ և առաջ պետք է մտքում կազմի ընդհանուր նախագիծը. չի կարելի փոխել նախագիծը տան շինարարության ընթացքում: Կառուցվածքի մասին Լի Յունի տեսությունը ներառում էր այնպիսի կետեր, ինչպիսիք են կենտրոնացումը հիմնական կերպարների և իրադարձությունների վրա, դրամատիկ ստեղծագործություններում կարծրատիպերից հեռանալը, դրամայի մասերի կապակցվածությունը և ոչ կարևոր բաղադրիչների վերացումը: Այն ընդգծում էր գաղափարը, որ դրաման ընդհանուր նախագծման արվեստ է: Կառուցվածքն ամենահարմար եզրույթն է՝ բացատրելու, թե մասերն ինչպես պետք է համադրվեն մեկ ամբողջության մեջ:

Մեջբերումներ 引例

Գեղագրության մեջ շինարեն բառի ձևը կամ կառուցվածքը պետք է ունենա իր համարժեքն իրական կյանքում. չի կարելի գրել այնպես, ինչպես սիրտդ կուզի: Օրինակ, տառանշանը կարող է ունենալ թռչնի կամ միջատի, որը կրծում է ծառի բունը, կամ սարի, ծառի, ամպի կամ գորտի տեսք: Վրձնահարվածը, լինի ուղղահայաց թե հորիզոնական, պետք է ուղեկցվի այլ վրձնահարվածներով, իսկ դրանց օգտագործումը պետք է համապատասխանի օրենքներին: Այդպիսի աշխատանքն արժանի է կոչվել գեղագրություն: (Յայ Միցուն. «Օրինակելի գեղագրության մասին»)

Կառուցվածք եզրույթն ավելի կարևոր է, քան ձայնանշա-

Չինական մտքի եւ սշակույթի հիմնական հասկացություններ

նր: Այն խորհրդանշում է ճիշտ հանգավորման սկիզբն ու բառերի մանրամասն ընտրությունը: (Լի Յու. «Պայրահական գրառումներ՝ թեթև շարժումներով»)

«Ծղրիդ» բանաստեղծությունն ամբողջական է՝ ներածություն, գործընթացի ծավալում, մի տեսակետից մյուսին անցում և ամփոփում: Այս բանաստեղծությունից կարելի է սովորել, թե ինչպես կառուցել բանաստեղծություն: (Նիու Յունզեն. «Մեկնաբանություններ «Երգերի գրքի» մասին»)

Չանասիրաբար աշխատիր և լավ հարաբերություններ պահպանիր այլոց հետ
ծին յե լե ցուն 敬业乐群

Արտահայտությունը նշանակում է, որ պետք է թե՛ ջանասիրաբար աշխատել, թե՛ պատրաստ լինել շփվել ուրիշների հետ: *Յե* (业 աշխատանք) ի սկզբանե նշանակում էր դասեր. ավելի ուշ այն ստացավ մարդու աշխատանք կամ պարտականություն նշանակությունը: *Յուն* (群 ուրիշներ) նշանակում էր ուսանողներ և ընկերներ, բայց ներառում էր նաև թիմի անդամներին և առհասարակ հասարակությունը: Չանասիրաբար աշխատելը ցույց է տալիս աշխատանքի հանդեպ մարդու վերաբերմունքը, իսկ լավ հարաբերություններ պահպանելը նշանակում է պատշաճ սոցիալական վարքագիծ: Սրանք են այն հիմնական որակները, որոնք պահանջվում է կրթված մարդուց կամ աշխատանք ունեցող մարդուց և նաև լավ ու առողջ հասարակության հիմքն են:

Մեջբերում 引例

Առաջին տարում հետևում էին՝ արդյոք նրանք կարո՞ղ են վերլուծել տեքստերի արտահայտությունները և սյուժեի զարգացումը. երրորդ տարում ստուգում էին՝ արդյո՞ք նրանք ջանասիրաբար են աշխատում և մտերմանում են ուսանո-

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

դական ընկերների հետ. հինգերորդ տարում պարզում էին՝ արդյո՞ք նրանց գիտելիքն ավելացել է, և արդյո՞ք մոտ են իրենց ուսուցիչներին. յոթերորդ տարում պարզում էին՝ արդյո՞ք կարող են դատողություններ անել իրենց սովորածի մասին ու ընտրել լավ ընկերներ: Սա համարվում էր սկզբնական նվաճում: (*«Ծեսերի գիրքը»*)

Անհաղորդ կառավարում ծին յին ջի դաո 静因之道

Այս եզրույթը, որն առաջին անգամ հիշատակվել է «Գուանցիում», նշանակում է անհաղորդ մնալ կառավարելիս: Այն կիրառվում է Գեդին կայսեր և Լաոցզիի դոկտրինները ներկայացնելիս: Մտքի այս դպրոցը, որը կառուցված է Լաոցզիի՝ անգործության գաղափարի վրա, պնդում էր, որ կառավարիչը պետք է խուսափի մարդկանց առօրյա կյանքին միջամտելու նպատակով քաղաքական իշխանություն կիրառելուց: Փոխարենը նա պետք է որոշակի հեռավորություն պահպանի, որպեսզի մարդիկ ընտրեն սեփական ճանապարհն ու պրակտիկան և ապրեն ու աշխատեն բնական ձևով:

Մեջբերում 引例

Հետևաբար, կառավարիչը, ով գործնականում կիրառում է Ճանապարհը (Դաո), երբ մենակ է լինում, թվում է՝ գուրկ է գիտելիքից Եվ նա հարմարվում է այն ամենին, ինչ գնում է զարգացման բնականոն ճանապարհով: Սա կոչվում է անհաղորդ (հեռվից) կառավարում (*«Գուանցզի»*):

Կառավարիչը պետք է միավորի մարդկանց ջուն ջե շան չուն 君者善群

Կառավարիչը պարտավոր է միավորել մարդկանց: Ըստ

հին չինացի փիլիսոփա Մունցիի (մթա. 313?-238թթ.), մարդիկ իրենց էությանը ցանկանում են ապրել համայնքում: Նրանք չեն կարող գոյատևել, եթե դեմ գնան իրենց բնույթին: Կառավարչի հիմնական պարտականությունն է՝ մարդկանց միավորել այնպես, որ նրանք ձևավորեն համայնք կամ հասարակություն: Եզրույթը սահմանում է կառավարչի և ժողովրդի հարաբերությունները և ենթադրում է, թե ինչպես պետք է կառուցված լինի հասարակությունը կամ պետությունը:

Մեջբերում 引例

Կառավարիչը մարդ է, ում պարտականությունը մարդկանց միավորելն է: Եթե նա մարդկանց համայնք ձևավորելիս հետևի այս սկզբունքին, ամեն ինչ կհայտնվի իր ճիշտ տեղում (*«Մունցի»*):

Կանոնավոր գիր քայլու 楷书

Կանոնավոր գիրը չինական տառանշանների գրելաձևերից մեկն է, որը նաև հայտնի է «պատշաճ գիր», «ճշմարիտ գիր» կամ «օրինակելի գիր» անունով: Հան դինաստիայի գրասենյակային գրի կորությունն ու ալիքաձևությունը կրճատելու, չկանոնակարգված և չկարգավորված արագագիրը շտկելու, գրելու գործընթացը հեշտացնելու և ընթեռնելիությունը բարելավելու համար վայելչագիրներն անցում կատարեցին ավելի հեշտ գրելաձևի՝ ուղղելով թե՛ հորիզոնական, թե՛ ուղղահայաց գծերը: Այսպիսով, այն վերածվեց կանոնավոր գրի: Այս ոճով գրված տառանշանները կոկիկ էին և մտածված, ուղղաձիգ և քառակուսի, ինչը ցույց է տալիս ակնածանքը գեղագրության ոլորտը կառավարող օրենքների հանդեպ: Հենց սա սկսեցին անվանել «օրինակելի գիր»: Այն առաջին անգամ ի հայտ եկավ Արևելյան Հան դինաստիայի վերջում, ավելի հայտնի դարձավ Ուեյ և Չին դինաստիաներ:

րում և լիովին հասունացավ ու լայնորեն ընդունվեց Թան դինաստիայում: Այն ծաղկում ու բարգավաճում է մինչ օրս: Եթե բաժանենք պատմական ժամանակահատվածների, կանոնավոր գիրը բաժանվում է երկու ոճի. Ուեյի քարատախտակի կանոնավոր գիր և Թանի կանոնավոր գիր: Առաջինը ներկայացնում էր անցումը գրասենյակային գրից կանոնավոր գրի Ուեյ, Չին և Հարավային և Հյուսիսային դինաստիաների ժամանակաշրջանում: Վերջինս Թան ոճի կանոնավոր գիրն էր: Չարգացման զագաթնակետին հասնելով Թան դինաստիայում՝ այն ականատես եղավ, թե բազմաթիվ գեղագիրներ ինչպես հասան փառքի ու ճանաչման, այդ թվում՝ Յու Շինանը (558-638), Օույան Սյունը (557-641) և Չու Սուիլիանը (596-658 կամ 659) Թան դինաստիայի առաջին տարիներին, Յան Ջենցին (708-784) Թան դինաստիայի կեսերին և Լիու Գունցյուանը (778-865) նույն դինաստիայի վերջին տարիներին: Այս գեղագիրներն այդ ժամանակից ի վեր մեծ պատվի են արժանացել՝ որպես չինական գեղագրության կարկառուն ներկայացուցիչներ: Բազմաթիվ պրակտիկ մասնագետներ դարեր շարունակ օգտվել են նրանց գեղագրական ստեղծագործություններից՝ որպես գեղագրության նմուշներ:

Մեջբերումներ 引例

Արևելյան Հան դինաստիայի Ջիանչու ժամանակաշրջանում (76-84) Ուան Յիջուն անունով մի մարդ աստիճանաբար գրասենյակային գիրը վերափոխեց կանոնավոր գրի: Այն ժամանակներում կանոնավոր գիրը նույնն էր, ինչ այսօր: Վայելչագիրները, որոնք հավատացած էին, որ կանոնավոր գիրը թեթևացնում է գրելու գործընթացը, սկսեցին տարածել այն («Գեղագրության երկերի ընտրանի Կայսերական արքունիքի կողմից Հույցուն կայսեր Սյուանհե տարիներին»)

Լի Չունը գերազանցության հասավ կանոնավոր գրում: Նա բազմակողմանիորեն ու խորապես հասկանում էր Ջոն

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Յառի և Սուո Չինի գեղագրության իսկական նշանակությունը: Թե՛ նրա ժամանակակիցները, թե՛ հետագա սերունդները հարգել ու հիացել են նրա գեղագրական հմտություններով («Չին դինասարիայի պատմությունը»):

Սունյատա / Ղատարկություն բոն 空

Եզրույթի հիմնական իմաստը դատարկությունն է: Այն ցույց է տալիս, որ իրերը չունեն հաստատուն կամ անփոփոխ էություն: Նաև նշանակում է, որ իրերը երևակայական են, ոչ իրական: Անկախ գոյություն ունեցող ցանկացած երևույթի էությունը կոչվում է «ինքնուրույն էություն» կամ «սվաքհավա»: Բուդդայականությունը ժխտում է էության այս տեսակի գոյությունը: Փոխարենը, ըստ դրա, բոլոր աշխարհիկ երևույթները հավաքվում կամ ցրվում են որոշակի պատճառներով ու պայմաններով: «Ինքնուրույն էությունը» միայն ամրապնդում է «կոնցեպտուալ մտածողությունն ընդդեմ ֆե-նոմենալ աշխարհի» գաղափարը: «Սեփական էության բացակայությունը» կամ «նիհավաքիվան»՝ «դատարկության» տեսակետը, մասնավորապես, հայտնի է բուդդիզմի «Մեծ անիվ» (Մահայանա) ուղղության մեջ: Այն ամբողջությամբ հերքում է ցանկացած մշտական իրական էություն, որն անփոփոխ է որևէ եզրույթում կամ արտահայտության մեջ, և այնքան հեռու է գնում, որ ներառում է նաև բուդդիզմի դոկտրինը:

Մեջբերում 引例

Իրերի ծնունդը կախված է տարբեր պայմաններից: Քանի որ իրերը կախված են իրենց պատճառներից ու պայմաններից, դրանք չունեն սեփական էություն: Քանի որ չունեն սեփական էություն, սնամեջ են: Ավելին, դատարկությունն ինքնին իրական չէ: Փոխարենը, այն բացատրում է հայտնի

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

Եզրույթներով, որպեսզի առաջնորդի մարդկանց («Դիսկուրս միջինի մասին»):

Դուռիկա / Տառապանք

քու 苦

Եզրույթը նշանակում է տառապել տանջանքներից: «Տառապանք» եզրույթի ներիմաստները շատ լայն են: Մասնավորապես այն վերաբերում է ֆիզիկական և մտավոր ցավին, որ մարդը զգում է հատուկ դեպքերի պատճառով: Նաև նշանակում է տառապանք, որը զգում ես, երբ ուրախությունը մարում է, և տառապանք առ այն, որ ամեն ինչ ժամանակավոր է ու փոփոխական: Ընդհանուր առմամբ մարդը խոսում է «տառապանքի երեք տեսակի մասին», մասնավորապես՝ «տառապանքն ինչպես տառապանք կամ դուռիկադուռիկատա», «փոփոխության տառապանք կամ վիպարինամադուռիկատա» և «պայմանականությանը ներհատուկ տառապանք կամ սամսկարադուռիկատա»: «Տառապանքի» ըմբռնումը բուդդիստական դոկտրինը գործնականում կիրառելու մեկնարկային կետն է. միայն երբ մարդը գիտակցում է, որ կյանքը տառապանք է, կարող է վճռականորեն տրամադրվել և փորձել հասկանալ ու վերլուծել տառապանքի պատճառները: Դրանից հետո նա կարող է վերացնել այդ պատճառներն արդյունավետ մեթոդներով: Արդյունքում դա կօգնի հեռու մնալ վշտից և նույնիսկ վերամարմնավորումից: Ահա և չորս ճշմարտությունները՝ տառապանք, դրա պատճառը, դրա ոչնչացումը և ճանապարհը:

Մեջբերում 引例

Ի՞նչ է տառապանքը: Մասնավորապես ծննդյան և ծերության տառապանքը, հիվանդության տառապանքը, վշտի, ափսոսանքի ու դժբախտության տառապանքը, նողկալի մարդկանց հետ կապի տառապանքը, սիրելիներից բաժան-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ման տառապանքը, և տառապանքը, երբ հնարավոր չէ հասնել ցանկալիին: Կարճ ասած՝ այս հինգ տարրերի մարդու փորձառությունը տառապանք է: (Աստվածաշնչյան տեքստ. «Պրոֆետի օրենքի անիվը, Բուդդայի մեկնաբանությունը»)

Դասակարգված անուն լեյմին 类名

«Դասակարգված անուն» կարգը Մոհիստական դպրոցն օգտագործում էր նույնատեսակ իրեր անվանելու համար: Մոհիստներն ընդգծում էին, որ իրերը տարբեր ձևերով ու պատշաճ կերպով անվանելը կարևոր է դրանց իրական բնույթն արտացոլելու համար Նրանք ունեին իրերն անվանելու երեք միջոց՝ անսահմանափակ, դասակարգված և մասնավոր: «Դասակարգված անուն» եզրույթը վերաբերում է նույնանման երևույթներին: Այդպիսի օրինակ է «ձի»:

Մեջբերումներ 引例

«Անունը» լինում է անսահմանափակ, դասակարգված կամ մասնավոր («Մոցի»):

Որևէ երևույթի «ձի» անուն տալը դասակարգման տեսակ է: Եթե իրականում կա նման երևույթ, պետք է օգտագործենք այս անունը («Մոցի»):

Պատշաճ կերպով կառավարիչ հարստությունն ու ճիշտ խոսիչ

լի ցայ ջեն ցի 理财正辞

Արտահայտությունը նշանակում է՝ ինչպես հարկն է կար-

գավորել հարստությունն ու ճիշտ խոսել: Հին չինացիները համարում էին, որ սրանք իշխանության երկու հիմնական գործառույթներն են: «Հարստությունը կառավարել» նշանակում է հնարավորություն տալ, որ հարստությունը խելամտորեն և կանոնավոր կերպով բաշխվի. «ճիշտ խոսել» նշանակում է ստիպել, որ պաշտոնյաները խոսեն նորմերին և օրենքներին համապատասխան, ապա ուղղորդեն մարդկանց խոսքերն ու արարքներն այնպես, որ դրանք էլ համապատասխանեն նորմերին ու օրենքներին: Երբ հարստության բաշխումը խելամիտ է, իսկ բառերն ու արարքները համապատասխանում են նորմերին ու օրենքներին, կարգուկանոն է հաստատվում ողջ երկրում և հասարակության մեջ: Որոշակի նմանություններ կան այս հասկացության և նրա միջև, ինչն այսօր նկարագրվում է որպես շոշափելի և ոչ շոշափելի զարգացում:

Մեջբերում 引例

Երկրի մեծագույն առաքինությունն այն է, որ այն ծնունդ է տալիս բոլոր կենդանի երևույթներին, իսկ իմաստունի մեծագույն գանձը նրա բարձր կարգավիճակն է: Ինչպե՞ս է պահպանվում այդ բարձր կարգավիճակը: Ուրիշներին սիրելու և հոգ տանելու միջոցով: Ինչպե՞ս են միավորում մարդկանց: Հարստության միջոցով: Ինչպե՞ս են պատշաճ կերպով կառավարում հարստությունը, խոսում ճիշտ և մարդկանց հետ պահում վատ արարքներ գործելուց: Արդարության միջոցով («Փոփոխությունների գիրքը»):

**Կենտրոնացիր նրա վրա, ինչ առաջնային նշանակություն ունի դրամայում
լի չունաո 立主脑**

Մին դինաստիայի վերջի և Ցին դինաստիայի սկզբի դրամայի տեսարան Լի Յուն (1611-1680թթ.) օգտագործում էր

այս եզրույթը՝ առաջարկելով, որ դրամատիկ իրադարձությունները պետք է ծավալվեն հիմնական կերպարների և իրադարձությունների շուրջ: Նա ասում էր, որ երբ հին ժամանակներում գրողը էստե էր գրում, մշտապես, նախ, զարգացնում էր հիմնական թեման: Հիմնական թեման այն է, ինչի մասին նա ցանկանում էր գրել: Դրաման նույնպես պետք է ծավալվի առանցքային կերպարի և առանցքային իրադարձության, մասնավորապես՝ դրամայի հիմնական թեմայի շուրջ, որը կխթանի սյուժեի զարգացումն ու կերպարների շփումը: Առանցքային իրադարձությունն այն է, որը կենտրոնական դեր է խաղում դրամայի սյուժեի զարգացման մեջ և միմյանց է կապում սյուժեի բոլոր տարրերը: Օրինակ, Լի Յուն ասում էր, որ «Արևմտյան պալատի սիրավեպը» ստեղծագործության հիմնական կերպարը Ջան Չունրույն էր, ում Սպիտակ ձիավոր գեներալը փրկեց, և ում շուրջ պտտվում էին մյուս բոլոր կերպարները, և հյուսվում էին իրադարձությունները: Հիմնական կերպարներն ու իրադարձությունները հավասարապես կարևոր էին: Բազմաթիվ լեգենդար դրամատիկ ստեղծագործությունների հեղինակներ գիտեին՝ ինչպես կերտել հիմնական հերոսին, բայց չգիտեին, թե ինչպես ներկայացնել գլխավոր իրադարձությունը: Արդյունքում նրանց ստեղծագործությունները մնան էին կտրված մարգարտաշարի կամ առանց սյուժեի տան: Հիմնական թեմայի սահմանումը շատ կարևոր էր դրամայի կառուցվածքի համար:

Մեջբերումներ 引例

Երբ հին ժամանակներում գրողն էստե էր գրում, մշտապես, նախ, զարգացնում էր հիմնական թեման: Այդպիսի թեման ոչ այլ ինչ է, եթե ոչ այն, ինչ նա մտադիր էր մեկնաբանել էստեի ընթացքում: Նույնը վերաբերում է դրամատիկ լեգենդներին (Լի Յու. «Պատահական գրառումներ՝ թեթև շարժումներով»):

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

Էստե գրելիս կարելի է ամփոփել դրա նպատակը մեկ նախադասության մեջ և ընդլայնել այն՝ հասցնելով հազարավոր նախադասությունների: Ահա թե ինչ է նշանակում «հիմնական թեմա». այն մոտավորապես մեկ նախադասությունից կազմված ամփոփում է (Լիու Սիցայ. «*Գրական փեսությունների ակնարկ*»):

Շահ / Օգուտ 利 利

Շահ նշանակում է այն բոլոր գործոնները, որոնք նպաստում են անհատների և խմբերի գոյատևմանն ու ձևավորմանը: Հները հաճախ հակադրում էին շահն ու արդարատությանը: Գոյություն ունի մասնավոր և հանրային շահ: Առաջինը կապված է անհատների, նրանց ընտանիքների կամ հատուկ խմբերի հետ և բաղկացած է այնպիսի երևույթներից, ինչպիսիք են ապրանքները, փողը, հեղինակությունը, իշխանությունն ու կարգավիճակը: Երբ անձնական շահերը բախվում են ուրիշների շահերին, մարդիկ հակված են օգուտ քաղել իրենց համար այլ մարդկանց հաշվին: Հանրային շահը բաժանվում է հասարակության բոլոր անդամների միջև և հիմնականում ենթադրում է մեծ բնակչություն, առատ սեփականություն, հանրային կարգուկանոն և բարձր բարոյական չափանիշներ: Ելնելով տարբեր հեռանկարներից ու դիրքորոշումներից՝ Հին Չինաստանի մտքի դպրոցները զգալիորեն տարբերվում էին շահի հանդեպ իրենց մոտեցումներում:

Մեջբերումներ 引例

Թագավորն ասաց. «Պարոն, դուք եկել եք, չնայած հազար լի երկարությամբ ճանապարհ եք անցել: Եվ հավանաբար ունեք ինչ-որ բան, որից իմ թագավորությունը կշահի»: Մենցիուսը պատասխանեց. «Ձերդ գերագնացություն, ինչու՞ եք խոսում շահի մասին: Չէ՞ որ կա նաև սեր այլոց հանդեպ

և արդարամտություն, որի մասին պետք է խոսել: Եթե ձերը մեծությունն ասում է՝ «Ի՞նչ օգուտ կարող ես տալ իմ երկրին», ապա բարձրաստիճան պաշտոնյան կասի՝ «Ի՞նչ օգուտ կարող ես տալ իմ ընտանիքին», իսկ ազնվականներն ու հասարակ մարդիկ կասեն՝ «Ի՞նչ օգուտ կարող ես տալ ինձ»: Հետևաբար, վերադասներն ու ստորադասները կմրցեն միմյանց դեմ շահի համար, և պետությունը կհայտնվի վտանգի մեջ» (*«Մեկնիու»*):

Առանց բացառության, հին ժամանակներում բոլոր արքաները, դքսերն ու հայտնի մարդիկ, ովքեր երկրներ էին կառավարում, ցանկանում էին, որ իրենց պետությունները լինեն հարուստ, ժողովուրդները՝ բազմաթիվ, իսկ տուգանքներն ու կառավարումը՝ ճիշտ կազմակերպված (*«Մոցի»*):

Գրասենյակային գիր

լիշու 隶书

Գրասենյակային գիրը չինական վայելչագրության տարբերակ է, առաջացել է դրա զարգացման ընթացքում, հայտնի է նաև «պաշտոնական գիր» կամ «գեղագրության հնագույն ոճ» անուններով: Ջարգացել է կնքագրից և դրա պարզեցված տարբերակն է: Ինչ վերաբերում է վրձնահարվածներին, ապա այս դեպքում կլոր նախշերը փոխարինվել են կտրուկ շրջադարձերով: Կառուցվածքային առումով յուրաքանչյուր տառանշան ավելի լայն ու հարթ էր, երկար հորիզոնական ու կարճ ուղղահայաց գծերով, որոնց բնորոշ է նրբագեղ ոճը, ինչպես «մետաքսաորդի գլուխն ու վայրի սագի պոչը» և «մեկ ալիք ու երեք թեք գիծ»: Գրասենյակային գիրն, ասում են, հորինվել է Չեն Միաո անունով կրտսեր գրագրի կողմից, ով ապրում էր Յին դինաստիայում: Բայց իրականում այն ծագել է Պատերազմող պետությունների ժամանակաշրջանի սկզբում: Չեն Միաոն միայն կարգի է բերել և ստանդարտացրել գեղագրական այս ոճը: Կնքագրի համե-

Չինական մտքի եւ սշակույթի հիմնական հասկացություններ

մատ սա ավելի պարզ կառուցվածք ուներ և ավելի հարմար էր գրելու համար: Այն տարածում գտավ Արևելյան Հան շրջանում՝ հասնելով զարգացման աննախադեպ բարձրության: Ուեյ և Չին շրջաններում գրասենյակային գիրը նաև համարվում էր կանոնավոր գիր կամ պատշաճ գիր, որը նույնն է, ինչ գրագրի ոճը, բայց՝ ձախակողմյան և աջակողմյան վրձնահարվածներով:

Մեջբերումներ 引例

Ցին դինաստիայի առաջին կայսրը հրամայեց այրել դասական երկերը և հսկայական թվով կառավարական պաշտոնյաներ ու զինվորներ ուղարկեց հարկադրված աշխատանքի կամ սահմանը հսկելու, ինչի հետևանքով կառավարական գրասենյակներում և բանտերում հսկայական թվով առօրյա խնդիրներ մնացին չլուծված: Արդյունքում ստեղծվեց գրասենյակային գիրը՝ մեծ թվով փաստաթղթերը կարգավորելու համար (Մու շեն. «Գրի բացատրություն և գրանշանների մեկնություն»):

Կնքագիրը տարածվել է Ցին դինաստիայում: Ավելի ուշ, քանի որ առիթները բազմաթիվ էին և շատ դժվար էր դրանք գրանցել կնքագրով, կայսրը կրտսեր գրագիրներին առաջարկեց կրկնօրինակել կառավարական փաստաթղթերը: Այդտեղից էլ առաջացավ «գրասենյակային գիրը»: Հան դինաստիան շարունակում էր օգտվել գեղագրության այս ոճից, բացառությամբ այն դեպքերի, երբ տառանշանները փորագրվում էին հրամանատարի, կայսեր կնիքի, դրոշմների վրա, որոնք օգտագործվում էին որպես հուշուժ, հորիզոնական տախտակների կամ սրահի մուտքի մոտ վեր խոյացող սյուների վրա: Գրասենյակային գիրը զարգացել է կնքագրից և դարձել ավելի հարմար գրելաձև («Չին դինաստիայի պատմությունը»):

Ծախսի և հարկի / Ծրագիր կազմելուց առաջ պետք է մանրամասն հաշվարկել ծախսերը, եթե ուզում եք եկամուտներ հավաքագրել
լիանչու-ջիրու 量出制入

Երկիրը պետք է նախապես հաշվարկի իր ամենամյա ծախսերը և այս հիմքի վրա որոշի այն եկամուտների ծավալը, որ պետք է ստանա ժողովրդից: Սա հայտնի է՝ որպես «ծախսի և հարկի» սկզբունք, ֆինանսական սկզբունք, որին հետևում են բոլոր կառավարիչները Հան դինաստիայից ի վեր: Այն ներառում է բյուջետային մտածողության որոշ տարրեր, որոնք պահպանվել են հետագա սերունդների կողմից:

Մեջբերումներ 引例

Կառավարիչը պետք է հաշվարկի կառավարության բոլոր մակարդակների պաշտոնյաների և վարչարարների համար նախատեսված աշխատավարձերի ընդհանուր գումարը և դրա հիման վրա որոշի ժողովրդից ստանալիք հարկերը (*«Հան դինաստիայի պատմությունը»*):

Կառավարությունը կարող է հավաքագրել հարկ արծաթի լյանի մեկ տասներորդի չափով հարյուր սեփականագրկված մարդու աշխատանքի համար: Հավաքման ենթակա հարկի ամբողջ գումարը, նախ, պետք է հաշվարկվի, և դրա հիման վրա հարկեր գանձվեն մարդկանցից: Սա կոչվում է «ծախսի և հարկի» (*«Հին Թան պատմություն»*):

Սամարա / Վերածնունդ / Վերամարմնավորում
լունհույ 轮回

Բոլոր արարածներն անդադար շարժվում են ծննդից մահ, ինչպես անիվն է պտտվում: «Պտտվող անիվ» գաղա-

փարը, այսինքն՝ վերամարմնավորումը ենթադրում է, որ հոգին չի ենթարկվում մարմնի քայքայմանն ու անհետացմանը: Դա է պատճառը, որ կյանքի ու մահվան հերթափոխում այն կարող է անվերջ վերադառնալ ու տեղավորվել նոր մարմնում: Հնդկաստանում, բուդդիզմի ծննդից առաջ վերամարմնավորումն արդեն իսկ տարածված գաղափար էր: Քանի որ վերամարմնավորման դեպքում անհատը պետք է պասիվորեն ենթարկվի նախորդ կյանքում տեղի ունեցած գործողությունների արդյունքներին, գործընթացն ընդհանուր առմամբ ցավոտ է: Բուդդիստական մտքի հիմնարար բացատրությունն է՝ հասկանալ կյանքի ընթացքը, այս ցիկլում գնալու ու վերադառնալու գործընթացը, պատճառի ու ազդեցության անվերջ, շարունակական շարքը: Ավելին, այն շեշտում է, որ պատճառները վերացնելիս մարդը կարող է վերացնել արդյունքները և ի վերջո կասեցնել «վերամարմնավորումը»՝ այդպիսով ազատվելով այս տառապանքից:

Մեջբերում 引例

Կյանքի ու մահվան անվերջ շրջափուլում մարդ արարածները կուրանում են անգիտությունից և միմյանց կապվում տենչանքով: Անիվն անդադար պտտվում է, և մարդը չզիտի տառապանքի իրական պատճառը («*Տարբեր կալնանական տեքստեր*»):

Ինքնագոհությունը հանգեցնում է ձախողման, համեստությունը՝ հաջողության

ման ջառ սուն, ցյան շոու յի 满招损, 谦受益

Մնապարծությունը և ինքնագոհությունը հանգեցնում են ձախողման, մինչդեռ համեստությունն ու խոհեմությունը հաջողություն են բերում: Հին չինացիները հավատացած էին, որ բոլոր երևույթները մշտական փոփոխության մեջ են, իսկ առավելությունները կարող են վերածվել թերությունների և

Չինական մտքի եւ սշակույթի հիմնական հասկացություններ

հակառակը: Պետք է միշտ համաքայլ ընթանալ ժամանակի հետ, ջանասիրաբար աշխատել և երբեք չգոհանալ ձեռք բերածով: Պետք է բավարարվել քչով, լինել համեստ ու ձգտել հաղթահարել սեփական թուլությունը: Նույն սկզբունքը կիրառվում է թե՛ անհատի, թե՛ երկրի կյանքում: Այս հասկացությունը վկայում է չինացիների՝ մշտապես ինքնակատարելագործման ձգտման մասին:

Մեջբերում 引例

Ինքնագոհությունը հանգեցնում է ձախողման, իսկ համեստությունը՝ հաջողության: Սա համընդհանուր օրենք է, որ կառավարում է երկնքի տակ ամեն ինչ («Պապմության գիրքը»):

**Լուսավորիչ անտեղյակներին և ստիպիչ բռնել
ճշմարիտ ուղին
մեն յի յան ջեն 蒙以養正**

Անտեղյակներին պետք է լուսավորել կրթությամբ, որպեսզի նրանք բռնեն ճշմարիտ ուղին: Սա պետք է սկսվի վաղ մանկությունից: Մեն (蒙 տգիտություն) բառն այստեղ վերաբերում է երիտասարդների միամտությանն ու գիտելիքի բացակայությանը: Յան (養) նշանակում է կրթություն: Չենը (正) ենթադրում է ճշմարիտ ուղի, պատշաճ ճանապարհ և շիտակ պահվածք: Այս եզրույթը, որն ընկած է չինական մանկավարժության հիմքում, շեշտում է գործառույթի կարևորությունը և կրթության արժեքը:

Մեջբերում 引例

Լուսավորիչ անտեղյակներին կրթության միջոցով, որպեսզի նրանք ճշմարիտ ուղի բռնեն. սա է իմաստունների պատգամը («Փոփոխությունների գիրքը»):

**Միասնություն ներսում և ընդլայնում դրսում
մու նեյ թու ուայ 睦内图外**

Միայն երբ երկիրը հասել է ներքին միասնության, այն ի վիճակի կլինի ընդլայնվել և զարգանալ դրսում: «Միասնություն ներսում»՝ նշանակում է, որ ժողովուրդն ապրում է բարիդրացիական պայմաններում և մեկ մարդու պես միասնական է: «Ընդլայնում դրսում» գաղափարն ի սկզբանե նշանակում էր պատերազմ սկսել հարևան պետության դեմ: Հիմա այն նշանակում է արտաքին զարգացում ավելի մեծ շահ ստանալու համար: Երկրում հուսալի ներքին զարգացումն ու միասնությունը արտաքին զարգացման նախապայմաններն ու երաշխիքներն են: Սա կիրառելի է երկրի, ձեռնարկության, կազմակերպության կամ ընտանիքի հարցում: Սա վկայում է այն մասին, որ չինացիները մեծ կարևորություն են տալիս ներքին զարգացմանն ու պահպանում խաղաղության սկզբունքը:

Սեջբերում 引例

Որպես պաշտոնյա՝ արտաքին ընդլայնման մասին մտածելուց առաջ պետք է փորձել հասնել ներքին միասնության: Եթե դա նրան չհաջողվի, ներքին ճեղքերն ու հակադրություններն անխուսափելի են: Ինչու², նախ, չձգտել ներքին միասնության («Դիսկուրսներ պետությունների կառավարման մասին»):

**Վայելչագրության հյուսիսային և հարավային դպրոցները
նան-բեյ շուփայ 南北书派**

Հյուսիսային և հարավային դպրոցները ներկայացնում են հին չինական վայելչագրության երկու առանձին ոճ: Օույան Սիուն (1007-1081) և Ջաո Մենձիանը (1199-1267) Մուն դինաստիայից և Չեն Յիսին (1648-1709) և Հե Ջուոն (1661-

1722) Յին դինաստիայից հետագոտել են այս երկու ոճի տարբերությունները: Ավելի ուշ Ռուան Յուանը (1764-1849) նույնպես Յին ժամանակաշրջանից հստակ ու խորությամբ անդրադարձել է այս խնդրին իր «Գեղագրության հարավային և հյուսիսային ոճերի մասին» երկում: Նրա կարծիքով՝ երկու ոճերն էլ ծագել են Ջուն Յաոյից (151-230), Հան դինաստիայի վերջից մինչև Երեք թագավորությունների վաղ շրջան և Ուեյ Գուանից (220-291թթ., երեք թագավորությունների շրջան), իսկ Սուո Ծինը (239-303, Արևմտյան Չին դինաստիա) հյուսիսային ոճի հիմնադիրն էր: Հյուսիսային դպրոցն աչքի է ընկնում քարերի վրա գեղագրական մակագրություններով, ինչը վկայում է Հան դինաստիայում պաշտոնական գրի պարզության մասին: Մյուս կողմից, Հարավային ոճը հիմնականում կարելի է գտնել թղթի վրա, և այն Յին դինաստիայի կնքագրին կամ Հան դինաստիայի գրասենյակային գրին հետևելու փոխարեն որդեգրում է ուշ Հան դինաստիայի կանոնավոր գիրը, Արևմտյան Չին դինաստիայի կիսաթեք գիրը կամ շատ ավելի երկար ժամանակահատվածում խիստ մեծ տարածում գտած թեքագիրը: Այն հմայիչ է ու գեղեցիկ:

Մեջբերումներ 引例

Հարավային Չին և Սուո դինաստիաներից հետո գեղագրության հյուսիսային և հարավային ոճերը բաժանվեցին. Հյուսիսում գերակշռում էր պարզությունը, և գրասենյակային գիրը մեծ տարածում գտավ, իսկ Չինի ֆորմալ նրբագեղությունն անհետացավ (Ջաո Մենձյան. «Գեղագրության մասին»):

Արևելյան Չին, Սուո, Յի, Լիան և Չեն շրջանների գեղագրությունը հայտնի էր որպես հարավային ոճ, մինչևեռ Ջաո, Յան, Ուեյ, Յի, Ջոու և Սույ շրջաններում այն կոչվում էր հյուսիսային ոճ: Հարավային ոճը հիմնականում հանդիպում է կայսերն ուղղված խնդրագրերում, փաստաթղթերում ու

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

նամակներում, մինչդեռ հյուսիսային ոճն օգտագործվում էր վայելչագրական մակագրություններում, որոնք արվում էին քարերի ու սկավառակների վրա: Լի Շիմինը՝ Թանի Թայցուն կայսրը, հատկապես սիրում էր Ուան Սիջիի գեղագրությունը: Նրա նախարարներից մեկը՝ Յու Շինանը, հետամուտ եղավ Ուանի ոճին ու այն հասցրեց գեղագիտական բարձր մակարդակի: Նրա վայելչագրությունը ներառում էր թե՛ հարավային, թե՛ հյուսիսային ոճերի առավելությունները (Ռուան Յուան. «Վայելչագրության հարավային և հյուսիսային ոճերի մասին»):

**Սովորելու պատրաստակամությունը
ինքնակատարելագործման հնարավորություն է տալիս
նեն ցի դե շի ջե ուան 能自得師者王**

Եզրույթը բառացի նշանակում է, որ նա, ով ի վիճակի է ուսուցիչ գտնել և ցանկություն ունի սովորելու, կարող է թագավոր դառնալ: Այսինքն՝ համեստ մարդը, ով ցանկանում է սովորել ուրիշներից, կունենա մեծ ձեռքբերումներ: Թագավոր բառն ի սկզբանե վերաբերում է նրան, ում պատկանում է երկրի գերագույն իշխանությունը, բայց նաև նրան, ով մեծ ձեռքբերումներ է ունեցել և մեծ նպատակ է իրագործել: Եզրույթն ունի երկու ընկալում: Նախ, երկրի գերագույն իշխանությունն ունեցող մարդը չպետք է բանեցնի իր իշխանությունն ուրիշների հանդեպ՝ մտածելով, որ միշտ իրավացի է. փոխարենը, նա պետք է համեստ ու բարեկիրթ լինի արժանավոր մարդկանց նկատմամբ: Այսպիսով նա կշահի մարդկանց աջակցությունը և մեծ ձեռքբերումներ կունենա: Երկրորդ, երբ մարդը համեստ է ու ցանկանում է սովորել ուրիշներից, կկարողանա ավելացնել իր գիտելիքները, ինքնակատարելագործվել և, ի վերջո, դառնալ մեծ ուժի տեր մարդ:

Չինական մտքի եւ սշակույթի հիմնական հասկացություններ

Մեջբերում 引例

Մարդը, ով ի վիճակի է ուսուցիչ գտնել ու ցանկանում է սովորել, կարող է թագավոր դառնալ: Գոռոզ մարդը, ով միշտ կարծում է, որ ոչ ոք իրենից լավը չէ, կկործանվի: Համեստ մարդը, ով հաճախ հարցեր է տալիս, կդառնա լայնախոհ: Սնափառ մարդը, ով կարծում է, որ միշտ իրավացի է, նեղմիտ կլինի («Պատմության գիրքը»):

**Պատկերի ստեղծում օբյեկտի նմանակման միջոցով
նի ու լի սյան 拟物立象**

Սա վերաբերում է այն գործընթացին, երբ նկարիչը ստեղծում է կոնկրետ առարկաների իր յուրահատուկ գեղարվեստական մեկնաբանությունները, որոնք կարելի է գտնել բնության մեջ և հասարակական կյանքում՝ ընդօրինակելով, բարեփոխելով և համադրելով զգայական պատկերները: Գեղարվեստական արարման այս գաղափարը ծագում է «Փոփոխությունների գրքից», որն օգտվում է հեքսագրամների պատկերներից և դրանց միջոցով խորհրդանշում բնության մեջ ամեն ինչ և փոփոխության օրենքները: «Փոփոխությունների գիրքը» ներշնչանքի աղբյուր է դարձել գրականության և արվեստի համար՝ խրախուսելով օգտագործել կոնկրետ գեղարվեստական պատկերներ՝ բնությունն ու ինքնին մարդ արարածին մեկնաբանելու և նկարագրելու համար: Մտածողության այս կերպը տևական ազդեցություն է ունեցել գրական և գեղարվեստական տեսությունների վրա Հին Չինաստանում՝ հանգեցնելով պատկերագրության տեսության ստեղծմանը:

Մեջբերումներ 引例

«Փոփոխությունների գրքում» նկարագրված հեքսագրամներն ու տրիգրամներն իմաստուններին թույլ տվեցին ու-

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

սումնասիրել երկնքի տակ ամեն ինչի նրբությունները, որ-պեսզի որոշեն, թե ինչն է հարմար երևույթների ձևերի նմա-նեցմանը: Ահա թե ինչու են դրանք կոչվում նմանակներ (*«Փոփոխությունների գիրքը»*):

Կոնֆուցիոսն ասում է. «Գիրը չի կարող լիարժեք արտա-հայտել այն, ինչ խոսվում է, իսկ այն, ինչ խոսվում է, չի կա-րող լիարժեք արտահայտել խոսողի մտքերը»: Այդ դեպքում հնարավոր է արդյոք հասկանալ իմաստունի մտքերը»: Կոն-ֆուցիոսն ասում է. «Իմաստուններն արտահայտում են իրենց մտքերը լիարժեք, պատկերների միջոցով...» (*«Փոփո-խությունների գիրքը»*):

Սահմանիր գների համապատասխան մակարդակ փինջուն 平准

Սա նշանակում է՝ պահպանել ապրանքների գների որո-շակի չափ: Այսինքն՝ տնտեսական միջոց էր, որն օգտա-գործվում էր Հին Չինաստանում: Մասնավորապես, ստեղծ-վում էին հատուկ պաշտոններ ու գործակալություններ, որոնք վերահսկում էին որոշ կարևոր ապրանքներ: Դրանք վաճառվում էին, երբ շուկայական գները չափազանց բարձր էին, և գնվում էին, երբ գները չափազանց ցածր էին: Այսպես վաճառականներին թույլ չէին տալիս ապրանքների չափա-զանց շատ պաշարներ հավաքել, իսկ գները կայուն էին մնում: Այս մոտեցման հիմքում ընկած էր այն գաղափարը, որ կառավարությունը կրում է շուկաները կարգավորելու պատասխանատվություն: Կառավարությունը շուկան կար-գավորում էր տնտեսական միջոցերով և շուկայական գործո-ղություններով. կառավարության կողմից շուկայի կարգա-վորման նպատակն էր՝ ճնշել մասնավոր մենաշնորհները, ապահովել հավասարակշռություն ու արդարություն, պաշտ-պանել ընդհանուր հանրության շահերը և ապահովել տնտե-սական ու սոցիալական կայունություն:

Մեջբերում 引例

Հարկային եկամուտների համար պատասխանատու նախարարի գրասենյակները, աղի ու երկաթի պետական մենաշնորհ ունեցողները և պետական ֆինանսական գործակալությունները պետք է ունենան ապրանքների մեծ պաշարներ: Դրանք վաճառվում են, երբ գները բարձր են, և գնվում են, երբ գները ցածր են. այսպիսով հարուստ վաճառականները չեն կարողանում դիմել չարաշահումների, վաճառքը վերադառնում է բնականոն ընթացքի, և որևէ ապրանքի գնի մեջ մեծ տատանումներ չեն լինում: Քանի որ սա արվում է բոլոր ապրանքների գները համահարթեցնելու համար, գաղափարը հայտնի է որպես «համահարթեցնել գները՝ որոշակի մակարդակ սահմանելու համար» (*«Պատմաբանի արշահագրություններ»*):

Կանխատեսում / Մարզարեություն
յյանշի 前识

Այս եզրույթը վերաբերում է այն գիտելիքին, որ ձեռք ես բերում ինչ-որ բանի մասին, մինչ այն կպատահի կամ տեղի կունենա քո կյանքում: Առաջին անգամ ի հայտ է եկել «Լաոցզիում» և վերաբերում էր այն գիտելիքին, որ մարդը ձեռք է բերում ինչ-որ բանի վերաբերյալ, մինչ մյուսները կիմանան այդ մասին: Ովքեր հավատում են, որ կարող են նախապես գիտելիք ձեռք բերել, իրենց համարում են մարզարեներ: Սակայն Դաոսական դպրոցը հավատացած է, որ այսպիսի կանխատեսումը միայն երևույթների մասին անձնական ըմբռնում է և դժվար թե բացահայտի իրերի ճշմարիտ էությունը: Եթե ինքնիշխան կառավարիչը կառավարում է ըստ այս կանխատեսումների, հավանաբար կվնասի իր ժողովրդի բարեկեցությունն ու կհանգեցնի խռովությունների:

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

Մեջբերումներ 引例

Նրանք, ում մասին ասում են, որ ունեն կանխատեսելու ունակություն, Դաոյի հավակնոտ տարբերակներն են, իսկ այս՝ այսպես կոչված կանխատեսումը հանգեցնում է անգրագիտության (Լաոցզի):

Պնդել, որ գիտես ինչ-որ բան, քանի դեռ այն քեզ հետ չի պատահել, կամ նույնիսկ գործել ըստ կանխատեսումների կամ մարգարեության, նման է անհիմն գուշակություններ անելուն (Հանֆեյցի):

Անձնական փորձից քաղված գիտելիք ցինջի 亲知

Անձնական փորձից քաղված գիտելիքը գիտելիքի և այն ձեռք բերելու միջոց է, որն առաջարկում էր Մոխիստական դպրոցը: Նրանց կարծիքով՝ գիտելիքը ձեռք է բերվում երեք ճանապարհով. անձնական փորձով, խոսքուզրույցով և բացատրությամբ: Անձնական փորձից սովորել՝ նշանակում է գիտելիք ձեռք բերել երևույթները ուսումնասիրելով կամ դրանց հետ փոխազդելով: Սա գիտելիք ձեռք բերելու ուղղակի ճանապարհ է:

Մեջբերումներ 引例

Գիտելիքը ձեռք է բերվում խոսքուզրույցից, բացատրությունից կամ անձնական փորձից (Մոցի):

Ինչ-որ բան ինքնուրույն ուսումնասիրելը նշանակում է սովորել սեփական փորձով (Մոուցզի):

**Ուսումնասիրել բոլոր երևույթների էությունը
ցյունլի-ձինսին 穷理尽性**

Եզրույթը նշանակում է խորապես և հիմնովին ուսումնասիրել բնությունը, մարդկության և գոյություն ունեցող ամեն ինչի օրենքները, ներառյալ բնական երևույթների, տիեզերական օրենքների և տեղական իրադարձությունների հետազոտությունը: Մենք պետք է լիարժեք հասկանանք, թե ինչպես են միմյանց կապված բոլոր երևույթները, որպեսզի կարողանանք նպաստել դրանց բարգավաճմանը: Սույն դիմաստիայի նեոկոնֆուցիական գիտնականներն այս գաղափարը վերցրել են՝ որպես աշխարհը հասկանալու, սեփական բարոյականությունը զարգացնելու և երկնքի սկզբունքները խորությամբ իմանալու հիմնարար միջոց: Ուան Յանմինը (1472-1529) պնդում էր, որ օրենքներն ու էությունը տարբեր երևույթներ չեն: Երևույթների օրենքներն ուսումնասիրել՝ նշանակում է պարզել նրանց էությունը: Հին չինացիները հավատացած էին, որ աշխարհը և ինքն իրեն հասկանալը, կյանքը բարեփոխելն ու ինքնակատարելագործվելը փոխազդեցության և միասնության գործընթաց են: Միայն այսպիսի գործընթացի դեպքում մարդկության և ամեն ինչի միջև ներդաշնակություն կհաստատվի:

Մեջբերումներ 引例

Խորությամբ բացահայտիր մարդկության և բոլոր երևույթների էությունը և առավելագույնի հասցրու դրանց բնական դերերը, և միայն այդ ժամանակ կհասնես իդեալական վիճակի, երբ մարդիկ կգործեն օրենքների համապատասխան և կապրեն բնության հետ խաղաղ ու ներդաշնակ (*«Փոփոխությունների գիրքը»*):

Ուան Թինը մի անգամ կոչ արեց իր երիտասարդ աշակերտներին. «Շատ կարևոր է խորությամբ ուսումնասիրել

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

մարդկության և բոլոր երևույթների էությունը և օգնել, որ դրանք իրականացնեն իրենց դերը» («Մուն ղինասարխայի պատմությունը»):

**Բարեգործ կառավարում
րենջեն 仁政**

Սա վերաբերում է պետության կառավարմանը, որը հիմնված է բարեգործության վրա: Առաջին անգամ առաջարկել է Մենցիուսը (մթա.372?-289): Նրա խոսքով՝ ամեն ոք ծնվում է բարի սրտով, բայց բարեգործության առաքինություն ձեռք բերելու համար պետք է մշտապես սնել սիրտը: Կառավարիչը պետք է բարյացակամ լինի, հոգ տանի ենթակաների մասին՝ նրանց ապահովելով կյանքի համար անհրաժեշտ պարագաներով և պահպանի պատշաճ հասարակական կարգ: Եթե կառավարիչն այսպես ղեկավարի, կկարողանա միավորել ողջ ժողովրդին և ունենալ ուժեղ երկիր:

Մեջբերումներ 引例

Մենցիուսն ասում էր. «Ամեն ոք ունի կարեկից սիրտ: Անցյալում թագավորները բարի սիրտ ունեին, ուստի բարեգործ կառավարում էին իրականացնում: Բարեգործությամբ պետությունը կառավարելը նույնքան հեշտ է, որքան փոքր խաղալիքով խաղալը» (Մենցիուս):

Մենցիուսը պատասխանեց. «Հարյուր քառակուսի լի տարածքում հնարավոր է կառավարել որպես ճշմարիտ արքա: Եթե ձերդ մեծությունը կառավարի՝ առաջնորդվելով բարեգործությամբ, հեռու մնա դաժան պատիժներից, թեթևացնի ժողովրդից գանձվող հարկերն ու տուրքերը, մարդիկ կհերկեն հողն ու կհեռացնեն մոլախոտը: Ամրակազմ մարդիկ ազատ օրերին հոգ կտանեն իրենց ծնողների մասին, որդիական սեր, հավատարմություն ու բարի կամք կդրսևորեն: Տա-

Չինական մտքի եւ սշակույթի հիմնական հասկացություններ

նր կծառայեն իրենց հայրերին ու եղբայրներին, իսկ տնից հեռու՝ ավագներին ու վերադասներին: Ուստի ի վիճակի կլինեն հաղթել Յին և Չու գործին նույնիսկ փայտերով (Մեն-ցիուս):

**Պատվի արժանացրու ու պատժիր նրանց,
ովքեր արժանի են դրան
շան սին ֆա բի 赏信罚必**

Եզրույթն ի սկզբանե նշանակում է պարգևատրել նրանց, ովքեր արժանի են դրան, և պատժել նրանց, ովքեր ենթակա են պատժի: Ավելի ուշ այն կիրառվում էր հետյալ նշանակությամբ՝ կառավարման գործում պետք է լինել խիստ, արդար ու թափանցիկ: Հին չինացիները հավատացած էին, որ պատիվներն ու պատիժները կարևոր սկզբունքներ ու մեթոդներ են պետության կամ բանակի կառավարման մեջ: Այս միջոցներն օրինակ են ծառայում: Պարգևատրելու նպատակն է՝ մարդկանց խրախուսել անելու լավ գործեր, իսկ պատժելու նպատակն է՝ արդարադատության առաջ բերել օրինախախտներին: Պարգևատրումներն ու պատիժները մարդկանց խրախուսում են հետևել օրենքներին և օգտագործվում են՝ արժանիքը սխալից և լավը վատից տարբերակելու համար: Պատշաճ կիրառվելու դեպքում պարգևատրումներն ու պատիժներն օգնում են խուսափել կողմնակալությունից և մարդկանց մղում են կատարելագործման:

Մեջբերումներ 引例

Ջոուի Ուեն արքան հարցրեց Ծյան Թայգունին. «Պարգևատրումներն օգտագործվում են, որպեսզի մարդկանց դրդեն անել բարի գործեր, իսկ պատիժները՝ զգուշացնելու, որ մարդիկ հեռու մնան վատ արարքներից: Ես ցանկանում եմ պարգևատրել մեկին՝ հարյուրավոր մարդկանց քաջալերելու համար, և պատժել մեկին՝ բազմաթիվ մարդկանց հեռու պա-

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

հելով վատ գործերից: Ինչպե՞ս անեմ դա»: Ծյանը պատասխանեց. «Կարևոր է պարզևատրել և պատժել մարդկանց: Գովասանքն ու պատիժը կարելի է լսել և տեսնել: Իսկ նրանք, ովքեր դեռ սեփական մաշկի վրա չեն զգացել այն, կագրվեն» (*«Վեց ռազմավարություն»*):

Պետության համար հիմնարար օրենք է պարզևատրել քարեգործին և պատժել չարագործին: (*«Պետության կառավարման դիկտիոններ»*)

Պետության կառավարման կարևոր միջոց է մարդկանց քաջալերել լավ գործեր անելու և պատժել նրանց, ովքեր չար գործեր են անում՝ վարելով գովեստի ու պատժի խիստ ու հստակ քաղաքականություն: (Ուան Ֆու. *«Ճգնաժամի դիկտարկումներ»*)

Հավասարակշռի հնարածն ու իրականությունը չեն սյուշի 申虚实

Եզրույթն առաջին անգամ օգտագործել է ուշ Մին և վաղ Ցին շրջանի դրամայի տեսաբան Լի Յուն (1611-1680) իր «Պատահական գրառումներ՝ թեթև շարժումներով» գրքում: Այն նշանակում է, որ դրամատիկ ստեղծագործության կերպարների և սյուժեի զարգացման ընթացքում պետք է պահպանել երևակայության և ոչ երևակայության ճիշտ հավասարակշռությունը: Ըստ Լիի՝ դրամատիկ ստեղծագործության նյութը կարող է վերցված լինել անցյալից կամ ներկայից, հիմնված լինել մի թեմայի վրա, որը հեղինակը լսել է ուրիշներից կամ նրա, ինչ իրականում տեղի է ունեցել: Դրամատիկ ստեղծագործությունն ասես առասպել լինի: Եթե այն լավ ասելիք ունի, կարևոր չէ՝ սյուժեն իրական է, թե ոչ: Այնուամենայնիվ, լեգենդար դրամայի հեղինակը պետք է պահպանի իրականության և հնարանքի հավասարակշռությունը՝ նկարագրությունն ու սյուժեի զարգացումը համապատաս-

Չինական մտքի եւ սշակույթի հիմնական հասկացություններ

խանեցնելով մարդու մտածողության բնականոն ձևին: Հնարովին և իրականությունը հավասարակշռելու ջանքը գեղարվեստական ստեղծագործության պահանջ է, բանականությունն ու մարդկային զգացմունքները՝ գեղարվեստական իրողության գնահատման չափանիշ: Այն ընդգծում է գեղարվեստական իրականության և միապաղաղ իրականության տարբերությունը: Այս տեսակետը գրական ստեղծագործության օրենքների պատշաճ ընկալում է:

Մեջբերումներ 引例

Լեգենդար դրամայի նյութը կարող է լինել հին կամ նոր, հնարած կամ իրական: Գրողն ընտրում է ցանկացած նյութ, որ անհրաժեշտ է համարում: Լեգենդար դրաման սովորաբար լինում է հորինված, ինչպես առասպելը: Եթե ցանկանում ես հորդորել մարդկանց որդիական սեր դրսևորել ծնողների հանդեպ, պիեսում օգտագործիր մի ծնողասեր որդու անուն: Եթե առաքինի գործն արժանի է նրան, որ այդ մասին խոսեն, պարտադիր չէ, որ այն իրական լինի (Լի Յու. «Պարահական գրառումներ՝ թեթև շարժումներով»):

Գեղարվեստական ստեղծագործության կամ դրամայի հեղինակը պետք է հավասարակշռություն հաստատի իրականության և երևակայության միջև: Այդ դեպքում նրա ստեղծագործությունը կլինի գրավիչ և անսահմանափակ: Պետք է լիակատար ազատություն տալ զգացմունքներին ու սյուժեի զարգացումներին: Կարևոր չէ՝ դրանք իրական են, թե հորինված (Միե Ջաոչե. «Սովորական պայտում հիևզ փարբեր առաջարկների մասին»):

Լուսավորություն կրթության միջոցով

շի ֆա ջի հուա 师法之化

Լուսավորություն կրթության միջոցով գաղափարն առաջադրել է Մունցին (մթա. 313?-238): Նա հավատացած էր, որ

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

մարդիկ իրենց էությունը ձգտում են արտաքին երևույթների: Սակայն եթե այս բնական ցանկությունը չսահմանափակվի, կհանգեցնի միջանձնային հակադրությունների, և արդյունքում հասարակությունը կհայտնվի քաոսում: Հետևաբար, պետք է մարդկանց լուսավորել կրթության միջոցով՝ թե՛ ցանկությունները բավարարելու, թե՛ բացատրելու և թե՛ էթիկայի կանոնները պահպանելու նպատակով: Լուսավորության հիմնական ձևը նրանց ցանկությունները, խոսքերն ու արարքները կրթության միջոցով ուղղորդելն է:

Մեջբերում 引例

Մարդու բնական ազդակները չվերահսկելու դեպքում, անկասկած, կծագեն հակադրություններ: Սա կհանգեցնի սոցիալական նորմերի խախտման և սոցիալական կարգի աղավաղման, ինչն էլ, ի վերջո, կհանգեցնի սոցիալական հուզմունքների: Հետևաբար, անհրաժեշտ է ունենալ ուսուցիչներ և օրինակելի անհատներ, որոնք կուղղորդեն մարդկանց ու կլուսավորեն՝ սովորեցնելով էթիկայի սկզբունքներ: Այս դեպքում կզարգանա բարեկրթությունն ու ակնածանքը, մարդիկ իրենց խոսքով ու գործով կպահպանեն սոցիալական կարգը, և խաղաղությունն ու կայունությունը կիշխեն ամենուր (Մունցի):

**Հեղափոխություն բանաստեղծների շրջանում
շիցիե-զեմին 诗界革命**

Բանաստեղծների շրջանում հեղափոխությունը մշակութային շարժում էր 19-րդ դարի Չինաստանում: Որպես Լուսավորական շրջանակների հեղափոխության մի մաս՝ այն նպատակ ուներ բարեփոխել բանաստեղծական արտահայտչամիջոցները: Լիան Յիչաոն (1873-1929) շարժման առաջնորդն էր: Իր «Իմ օրերը Հաուայիում» ստեղծագործության մեջ նա պնդում էր, որ արդի պեոզիան պետք է մոտե-

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

նա դասական պոեզիայի ոճին ու ձևաչափին, բայց նաև պետք է մշակել նոր գեղարվեստական կոնցեպցիա և արտահայտություններ՝ ժամանակակից կյանքը պատկերելու համար: Նա հակադրվում էր դասական չինական պոեզիայի անհասկանալիության ու ձևական սահմանափակումներին՝ պնդելով, որ եթե բանաստեղծների շրջանում հեղափոխություն չլինի, պոեզիան Չինաստանում կմարի: Նրա խոսքով՝ նոր պոեզիան պետք է լինի լեզվական առումով պարզ, արտահայտի նոր գաղափարներ և տարածի արդի արժեքներ՝ Չինաստանի ժողովրդին լուսավորելու համար: Լիան Ցիչանն, Հուան Ցունսիանը (1848-1905), Յան Ֆուն (1854-1921), Սիա Ցենյոուն (1863-1924), Թան Սիթունը (1865-1898) և Ցիու Ուեյալուանը (1874-1941) պոեզիա են գրել արդի չինարենով և իրենց ստեղծագործությունները հրապարակել են թերթերում և ամսագրերում: Ընդհանուր առմամբ Բանաստեղծների շրջանում հեղափոխության ազդեցության ներքո գրված բանաստեղծությունները չունեին բարձր գեղարվեստական արժեք: Ավելին, դրանք հին էին ոճով, բայց նոր էին բովանդակությամբ, մինչդեռ սահուն չէին ընթերցվում: Ինչևէ, դրանց ստեղծարար ոգին հետագայում զարկ տվեց իսկապես տեղական լեզվով գրված նոր պոեզիային:

Մեջբերումներ 引例

Անցումային շրջանում պետք է լինի հեղափոխություն, բայց հեղափոխությունը պետք է արմատախիլ անի հնաոճ պոեզիայի ոչ թե ձևը, այլ նյութը: Մեր օրերում մեզնից շատերին դուր է գալիս խոսել բանաստեղծների շրջանում հեղափոխության անհրաժեշտության մասին: Դա ճիշտ է, բայց եթե մտածենք, որ հեղափոխություն նշանակում է օգտագործել նորաստեղծ արտահայտությունների մի կույտ, ուղղակի կվերածվենք քվազի-բարեփոխիչների, ինչպես Ցինի արքունիքի բանաստեղծներն էին: Հեղափոխության նպատակն է՝ նոր տեսլականը ներմուծել հին ոճ: Եթե դա արվի, բանաստեղծության մեջ այստեղ-այնտեղ մեկ-երկու ժամանակա-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

կից արտահայտությունը մեծ խնդիր չի լինի: Եթե ոչ, բանաստեղծն իր ընթերցողներին միայն ցույց կտա բովանդակության թվառությունը: (Լիան Յիչաո. «Գրառումներ բանաստեղծների ու պոեզիայի մասին *Ice-drinker's Studio-ից*»):

Այսօր բոլոր բանաստեղծներից Հուն Յունսիանն է նշանավոր, որովհետև նոր գաղափարները ներառում է հին ձևի մեջ (Լիան Յիչաո. «Գրառումներ բանաստեղծների ու պոեզիայի մասին *Ice-drinker's Studio-ից*»):

Բարդ իրավիճակները գրողներին մղում են ստեղծել որակյալ բանաստեղծություններ
Չի ցյուն էրհոու զոն 诗穷而后工

Բանաստեղծը կկարողանա որակյալ բանաստեղծություն գրել, միայն երբ դժվար ու վտանգավոր միջավայրում լինի ու թվա, թե շնչահեղձ է լինում կուտակված գայրույթից ու հուսախաբությունից: *Յիուն* (穷 դժվարություն) բառը չի նշանակում ֆիզիկական զրկում նյութական միջոցներից, այլ վերաբերում է կյանքի անբարենպաստ իրավիճակներին: *Գուն* (工 որակ) նշանակում է գեղարվեստական առումով մշակված ու գեղեցիկ: Գաղափարն առաջադրվել է Օույան Սիուի (1007-1072) Հյուսիսային Սուն դինաստիայի գրական աշխարհի հայտնի առաջնորդի կողմից: Նա հավատացած է, որ անբարենպաստ իրավիճակները բանաստեղծներին հնարավորություն են տալիս անդրանցել աշխարհիկ շահերի տենչն ու օգնում են խորությամբ և մտահայեցությամբ պատկերել իրական աշխարհում գոյություն ունեցող տեսարաններն ու մարդկանց, որոնք ունեն համաշխարհային նշանակություն: Օույան Սիուի տեսությունը ոչ միայն շարունակում է, այլև զարգացնում է Սիմա Յիանի (մթա. 145 կամ 135-?) «Գրիր՝ վրդովմունքիդ ազատություն տալու» և Հան Յուի (768-824) «Աղաղակիր անարդարության դեմ» հասկացությունները: Այս գաղափարն այլևս չի կենտրոնանում բա-

Չինական մտքի եւ սշակույթի հինական հասկացություններ

նաստեղծի սեփական վրդովմունքը կամ հուսախաբությունն արտահայտելու վրա, փոխարենը ձգտում է ցույց տալ, թե ինչպես է մեծ բանաստեղծություն ծնվում: Հետագայում առաջարկությունը դարձավ գրական քննադատության հիմնական տեսություն, որը վերաբերում է գրական գլուխգործոցների ծագմանը:

Մեջբերում 引例

Ասում են՝ բանաստեղծները հազվադեպ են հաջողության հասնում պաշտոնի որոնումներում: Շատերն ունենում են վերելքներ ու անկումներ: Դա իսկապե՞ս ճիշտ է: Գուցե և ճիշտ է, որովհետև բանաստեղծությունները, որոնք շրջանառվում են ընթերցողների շրջանում, հիմնականում գրվում են նրանց կողմից, ում հավակնություններն իրականություն չեն դարձել: Հնարավոր է, որ նրանք որակյալ բանաստեղծություններ են գրում այն ժամանակ, երբ տառապում են տարաբախտությունից: Փաստորեն, ոչ թե գրելն է տառապանք բերում մարդկանց, այլ բանաստեղծները բացառիկ երկեր են գրում այն ժամանակ, երբ տառապում են (Օույան Սիու. «Մեյ Յաոչենի բանաստեղծությունների ժողովածուն»):

Պոեզիան չի ենթարկվում կայուն մեկնաբանության չի ու դա զու 诗无达诘

Եզրույթն ի սկզբանե վերաբերում էր «Երգերի գրքի»՝ միջազգայնորեն ընդունված մեկնաբանության կամ բացատրության բացակայությանը: Առաջին անգամ առաջադրվել է Հան դինաստիայի մեծն կոնֆուցիական գիտնական Գուն Ջունչուի (մթա.179-104) կողմից: Ավելի ուշ օգտագործվել է որպես գրաքննադատության ընդհանուր եզրույթ, ինչը ենթադրում է, որ փոփոխվող պատմական պայմանների և ընթերցողների կյանքի տարբեր փորձառության արդյունքում պետք է որ լինեն նույն գրական գործի զանազան մեկնաբա-

նություններ կամ բացատրություններ: Այն, որ պոեզիան չի ենթարկվում կայուն մեկնաբանության ցանկացած փորձի, սկիզբ է առնում Գարնան և աշնան ժամանակաշրջանի ավանդույթներից, երբ բանաստեղծական տողերն արտասանվում էին սեփական տեսակետը, դիրքորոշումը կամ զգացմունքներն արտահայտելու համար: Քաղաքական կամ դիվանագիտական տեսանկյունից իրենց արդարացնելու համար ժամանակի քաղաքական գործիչները մեջբերում էին «Երգերի գիրքը», բայց չէին փորձում պարզել մեջբերումների կոնկրետ նշանակությունը՝ երբեմն նույնիսկ աղավաղելով դրանք: Հան դինաստիայի կոնֆուցիական գիտնականները «Երգերի գիրքը» մեկնաբանում էին ամենատարբեր ձևերով, ինչը պայմանավորված էր տարբեր գիտական կողմնորոշումներով: Դուրս Ջունշուն առաջադրեց այս գաղափարը, որպեսզի վիճելի հարցն ունենա տեսական հիմք: Որպես գրական տեսություն՝ այն առնչվում է տեքստի և դրա գեղագիտական արժեքի վերաբերյալ տարբեր ընթերցողների գանազան մեկնաբանությունների հետ: Ըստ այս տեսակետի՝ քանի որ բանաստեղծական միջոցները երկիմաստ ու խրթին են, ընթերցողները չպետք է ձգտեն մակերեսորեն հասկանալ բանաստեղծությունը: Փոխարենը պետք է խորասուզվեն բանաստեղծի սրտի մեջ և ձևավորեն նրա բանաստեղծության սեփական ընկալումը, մեկնաբանությունը և մտահայեցությունը: Այն փաստարկը, որ չկա բանաստեղծությունների որոշակի անփոփոխ մեկնաբանություն, կիրառելի է, քանի որ ցույց է տալիս, որ բանաստեղծական լեզուն կարող է լինել երկիմաստ, և որ մեկնաբանությունները, հետևաբար, կարող են փոփոխվել: Սակայն սա չի նշանակում, որ կարելի է չափազանց ազատ մեկնաբանել բանաստեղծությունը:

Մեջբերումներ 引例

Լսել եմ, որ չկա «Երգերի գրքի» ամրագրված մեկնաբանություն, չկա «Փոփոխությունների գրքի» հստակ լուսաբանում, չկա «Գարնան և աշնան տարեգրքերի» որոշակի ու

Չինական մտքի եւ սշակույթի հիմնական հասկացություններ

հստակ ձևակերպում: Մենք պետք է ճկուն լինենք և ենթարկվենք օրենքներին, ըմբռնենք դասականների խորքային ասելիքը: Այս համադրենք այդ երկուսը՝ առանց խախտելու երկնքի կամ իմաստունների բարոյական հրահանգները (Գուն Ջունշու. «Գարնան և աշնան փարեգրքերի շքեղ գոհարները»):

Մի անգամ ասացի, որ «Երգերի գիրքը» տարբերվում է այլ կոնֆուցիական դասականներից: Ուստի այն պետք է ընթերցվի այլ կերպ: Գրքում բանաստեղծները հավանաբար օգտագործել են կյանքի որոշակի երևույթներ, որպեսզի հեշտ լինի հղումներ անել: Նրանց ձևակերպումները նրբին են, իսկ ասելիքը՝ խոր: Մինչդեռ նրանք հաճախ ասում էին մի բան, սակայն նկատի ունեին միանգամայն այլ բան: Հետևաբար, մենք չպետք է խիստ դատենք գրքի տողերը մեկնաբանելիս (Հե Լիանձուն. «Ակադեմիական նոթեր Four Buddies Studio-ից»):

Իրավիճակ / Միտում

շի 勢

Եզրույթը վերաբերում է իրերի զարգացման իրավիճակին կամ միտումին: Իրավիճակի ձևավորումը, գոյությունն ու փոփոխությունը կախված է նրանից, թե ինչպես են դասավորված հանգամանքները, ինչպիսին է դրանց հարաբերական ուժը, և ինչպես են հաղորդակցվում միմյանց հետ: Վերաբերում է նաև տեղագրությանը, օրինակ՝ ղեկավար դիրք զբաղեցնել բարձր տեղանքում: Այն կարող է ցույց տալ նաև, թե ինչպիսի վարք են դրսևորում մարդիկ իրենց սոցիալական դիրքի ազդեցության տակ: Ինչ վերաբերում է գրական երկին, միտումն այն կոնկրետ ուժն է, որն անցնում է գրական երկի միջով՝ բխելով նրա կառուցվածքից և ոճից: Մարդկանց և սոցիալական իրողությունների վրա միտումների ազդեցու-

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

թյունը հանգեցնում է բնությունը և սոցիալական զարգացումը կառավարող օրենքների ստեղծմանը: Մարդը կարող է շատ ձեռքբերումներ ունենալ, եթե հետևի կամ ձեռք բերի սոցիալական միտումների հրաշալի իմացություն: Որոշակի պայմանների ներքո մարդը փոխում է իրերի զարգացման ընթացքը՝ ստեղծելով միտումներ:

Մեջբերումներ 引例

Տեղագրությունը որոշում է, թե որտեղ և ինչպես է հոսում ջուրը: Նույն կերպ նաև պատերազմում հաղթելու ռազմավարությունը պետք է կառուցվի թշնամու ճամբարում տիրող իրավիճակի ըմբռնման վրա: Ուստի, քանի որ չկա ջրի հոսքի որոշակի հստակ ձև, չկա նաև բանակը ղեկավարելու հստակ ռազմավարություն: Նրանք, ովքեր հաղթում են պատերազմում՝ փոխելով իրենց ռազմավարությունը թշնամու իրավիճակի փոփոխություններին համապատասխան, իրապես պատերազմական գործի վարպետ են (*«Պատերազմի արվեստը»*):

Միտում թելադրելու ուժ ունեցող ինքնիշխան կառավարիչը կարող է ապահովել, որ իր հրամաններն ու արգելքները իրագործվեն: Իշխանություն՝ նշանակում է վերահսկողություն այլոց կյանքի ու մահվան նկատմամբ, մինչդեռ միտումներ թելադրելու ունակությունը ողջ հանրությանը կառավարելու միջոց է (*«Հանֆեյցի»*):

Տարբեր խառնվածքով ու ճաշակով տարբեր գրողներ տարբեր մոտեցումներ ունեն գրելուն և այդ տարբեր գրական ոճերն օգտագործում են ըստ նրա, թե ինչի մասին են ուզում գրել: Այդ ընթացքում նրանք ստեղծում են որոշակի գրական ուժ (Լիու Սիե. *«Գրական միտքն ու վիշապներ քանդակելը»*):

**Իրադարձությունների հոսքը պայմանավորված է
փոխներգործությամբ**
շի շի ջի լիու, սյան ծի շի բան 事勢之流，相激使然

Միտումների կամ իրավիճակների փոփոխությունները ծագում են գործոնների և ուժերի բախումներից ու խթաններից: Սա պատմության բացատրություն էր, որն առաջարկել է հայտնի հին չինացի պատմաբան Սիմա Յիանը (մթա. 145 կամ 135?-?): «Միջոցառումներն» հիմնական միտումները կամ իրավիճակներն էին աշխարհում. դրանց «ընթացքը» վերջիններիս փոփոխությունն էր ժամանակի ընթացքում, ինչպես գետերի հոսքը: Սիմա Յիանը զգում էր, որ թեև պատմությունը կազմված է առանձին մարդկանց պատմություններից, այն չի կարող փոխվել որևէ մեկ մարդու կամ մարդկանց կամքով: Ավելին, իրադարձությունների արդյունքը հիմնականում վճռվում էր գործընթացում ներգրավված տարբեր գործոնների և ուժերի բախումով կամ խթաններով: Սա մարմնավորում է գուգամետության և պատմական ուժերի հարաբերակցության գաղափարները:

Մեջբերումներ 引例

Միտումների կամ իրավիճակների փոփոխությունները տարբեր գործոնների և ուժերի միջև միտումների կամ իրավիճակների փոփոխությունների արդյունք են: Ի՞նչ տարօրինակ բան կա դրա մեջ («Պատմաբանի գրառումներ»):

Միտումների կամ իրավիճակների փոփոխությունները որոշվում են երկնքով, այլ ոչ թե մարդկանց թվով («Հյուսիսային դինաստիաներից Չոուի պատմությունը»)

Վայելչագրության ճանապարհը
շուդաո 书道

Եզրույթը ցույց է տալիս գեղարվեստական վիճակ, երբ-

վայելչագիր-նկարիչը ձգտում է գեղագրական ստեղծագործության միջոցով հասնել մարմնի ու հոգու միասնության, որպեսզի ըմբռնի տիեզերքի և կյանքի մասին ճշմարտությունները: Գաղափարը կրում էր Կոնֆուցիոսի (մթա. 551-479) ազդեցությունը, ով ասում էր. «Հղկված մարդիկ ձգտում են գնալ մեծ ճանապարհով, գործել բարոյականության սկզբունքներով, կարեկցանքով վերաբերվել բոլոր մարդ արարածներին և քաջատեղյակ լինել արվեստի տարբեր ճյուղերի ու հմտությունների մասին»: Այն ավելի շատ կրում էր Ջուանցիի (369?-286) գեղագիտական մտածողության ազդեցությունը. «Եթե կարողանանք կատարելության հասնել հմտությունների որոշակի ոլորտում, կմոտենանք հենց մեծ ճանապարհին»: Գեղագրի նպատակն ավելի բարձր է վայելչագրության արվեստից. այն ձգտում է հասնել մեծ ճանապարհին՝ անցնելով գեղագրության՝ զուտ որպես հմտության կամ արվեստի ձևի սահմանները: Քանի որ վայելչագիրներն ավելի մեծ շեշտ էին դնում տարբեր ձևերի ու հմտությունների վրա, Թան դինաստիայում արդեն սկսել էին օգտագործել նոր եզրույթ՝ «վայելչագրական տեխնիկա»: Այն իրենից ներկայացնում էր վայելչագրության սկզբնական փուլը՝ շոշափելի, մակերեսային և ինչ-որ առումով «ավելի ցածր» մակարդակ: Սա, մյուս կողմից, վայելչագրական տեխնիկայի առաջադեմ փուլ էր, երբ ուշադրություն էր դարձվում համաշխարհային, վերացական ու հետևաբար շատ «ավելի բարձր» հարցերի: Այս գաղափարը հասավ Ճապոնիա և հետագայում ձեռք բերեց ինքնակրթության և լուսավորության ավելի լայն ներիմաստներ: Այն իր հերթին ազդեցություն թողեց արդի չինական վայելչագրական արվեստի զարգացման վրա:

Մեջբերումներ 引例

Թան դինաստիայի երկրորդ կեսին վայելչագրությունն անկում ապրեց, և վայելչագրական սքանչելի ստեղծագործությունները դարձան գրեթե անհասանելի (Հուան Բոսի. «Կայսերական պահոցների ղեկավարի այլ ստեղծագործու-

*Չինական մտքի եւ սշակույթի հիմնական հասկացություններ
թյուններ, որոնք ավելացվել են էսսեների հավաքածուին»):*

Գրասենյակային գիրը ծագել է կնքագրից: Այն կնքագրի «ապօրինի որդին է»: Ինչու²: Կնքագրում յուրաքանչյուր հորիզոնական կամ ուղղահայաց գիծ, կեռ կամ կետ ունի որոշակի պատճառներ ու օրենքներ: Դրանք գաղափարագրական, նկարագրական, գաղափարահնչյունային, ասոցիատիվ միացություններ կամ փոխանցված և փոխառված իմաստներ են. այստեղից էլ առաջացել է «տառանշանները ստեղծելու վեց միջոց» եզրույթը: Գրասենյակային գիրը, կնքագրի հարթ և կլորավուն վրձնահարվածները փոխարինելով սուր և կտրուկ լուծումներով, ամբողջությամբ ձևափոխում է կառուցվածքն ու խախտում կնքագրի մեթոդաբանությունը: Այսպիսով, տառանշանների ձևավորման վեց միջոցների պատճառներն ու օրենքները կորան, երբ գրասենյակային գիրը գերիշխող դարձավ (Յիան Յուն. «*Լյույուսնուս գեղագրության ուսումնասիրության մասին աշխատությունների հավաքածու*»):

Փաստաթղթեր բամբուկի կամ փայտի վրա շուցի 书契

Եզրույթն ունի երկու իմաստ: Մեկը վերաբերում է ընդհանրապես բամբուկի կամ փայտե շիվերի վրա արվող մակագրություններին: Մյուս իմաստը վերաբերում է վավերագրությանը, մասնավորապես ունեցվածքի սեփականության ապացույցին, որը մինչ թղթի հայտնագործությունը գրվում էր բամբուկի կամ փայտի վրա: Դիմերեսին արձանագրություններ էին արվում տարբեր գործողությունների կամ հարցերի մասին: Սի կողմում արվում էին ատամնաձև նշաններ: Սովորաբար լինում էր փաստաթղթի երկու օրինակ, յուրաքանչյուրը պահվում էր կողմերից մեկի մոտ, ով շահագրգռված էր դրա ապագա վերահաստատմամբ: Արևմտյան և Արևելյան Հան դինաստիաներից հետո բամբուկի կամ փայ-

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

տի վրա մակագրություններն աստիճանաբար դուրս եկան գործածությունից, իսկ ապացուցողական փաստաթղթերի համար դրանց կիրառությունը շարունակվեց:

Մեջբերումներ 引例

Հին Չինաստանում մարդիկ հանգույցներ էին անում՝ ինչոր բան արձանագրելու համար: Հետագա սերունդների ուսյալ մարդիկ գիրն էին օգտագործում նույն նպատակով («Փոփոխությունների գիրքը»):

Շու տառանշանը վերաբերում է գրավոր տառանշաններին, իսկ *ցին*՝ այն նշաններին, որոնք արվում են բամբուկի կամ փայտի վրա՝ որոշակի դեպքեր ու գործողություններ արձանագրելու համար: Ըստ այլ մեկնաբանության՝ *շուցին* վերաբերում է այն փաստաթղթերին, որոնք երաշխավորում են գրավի կամ ապացույցի վավերականությունը (Լու Դեմին. «Կոնֆուցիական և այլ դասականներ»):

Վայելչագրության իմաստունը

շուշեն 书圣

Այսպես էին անվանում ականավոր գեղագիր Ուան Սիջիին, ով ապրել է Արևելյան Չին շրջանում 303-ից 361 (կամ 307-365 կամ 321-379) թվականներին: «Իմաստուն» բառն այստեղ վերաբերում է գերագույն ձեռքբերումների հասած մարդուն: Հին Չինաստանում բացառիկ տաղանդ կամ հմտություններ ունեցող մարդուն կոչում էին «իմաստուն»՝ այդպես գնահատելով նրա բացառիկ ձեռքբերումները, նշանակալի գործերն ու խոր ազդեցությունը: «Գեղագրության իմաստուն» եզրույթը ոչ միայն ընդգծում է Ուան Սիջիի գերագույն վարպետությունը գեղագրական արվեստում, այլև նրա բարոյականությունն ու ազնվությունը: Մանրամասն ուսումնասիրելով գեղագրության առանձնահատկությունները,

նմանակելով ու օգտագործելով դրանք՝ Ուանը միշտ պատրաստ էր սովորել ուրիշների ձեռքբերումները: Նա բացառիկ տաղանդավոր էր գեղագրության բոլոր չորս տարբեր ձևերում՝ գրասենյակային գիր, թեքգիր, կանոնավոր գիր և արագագիր: Նրա վայելչագրությանը բնորոշ չէին Հան և Ուեյ դինաստիաներում գեղագրության առանձնահատկությունները. Ուանը ստեղծում էր իր սեփական ոճը: Նրա ամենանշանակալի ու հայտնի գործը՝ «Խողորձի այգում գրված բանաստեղծությունների նախաբանը», դարեր շարունակ համարվել է երբևէ ստեղծված լավագույն արագագիր: Լիան դինաստիայի Ու կայսր Սիաո Յանը (464-549), Թան դինաստիայի Թայցուն կայսր Լի Շիմինը (599-649) և Մուն դինաստիայի Թայցուն կայսր Ջաո Գուանյին (939-997) այն երեք ղեկավարներն էին, ում օրոք Ուանի վայելչագրությունը մեծ վերելք ապրեց, և նա ճանաչվեց բոլոր ժամանակների մեծագույն վայելչագիր:

Մեջբերումներ 引例

Ուան Սիջիի վայելչագրությունը, որը թե՛ եռանդուն է, թե՛ նրբագեղ, նման է հսկա վիշապի, որը ցատկում է Երկնային դարպասի միջով, կամ կատաղի վագրի, որը ճնմում է Թագավորական պալատում: Այն հասել է բարձրագույն մակարդակի: Հետևաբար, մարդիկ դարեր շարունակ այն համարել են զանձ և հավերժական դասական մոդել («*Լիանի Ու կայսեր անկնաբանությունները վայելչագիրների մասին՝ Հան դինաստիայից մինչև Հյուսիսային Լիան դինաստիա*»):

Ուան Սիջին միակն է, ով մանրամասն ուսումնասիրել է թե՛ հնագույն, թե՛ ժամանակակից վայելչագրությունը՝ այն հասցնելով կատարելության («*Չին դինաստիայի պատմությունը*»):

**Գործելով մարդու էության համաձայն
շուայսին 率性**

Մարդկային էության ու բնույթի համաձայն գործելու գաղափարն առաջին անգամ ի հայտ է գալիս «Ոսկե միջինի դոկտրինում»: Ըստ դրա՝ բոլոր մարդիկ ներքուստ ունեն առաքինություն, որը սկիզբ է առնում երկնքից: Մարդիկ պետք է հետևեն և լիարժեք օգտագործեն երկնքի կողմից օժտված այս շնորհը և իրագործեն այն խոսքով ու արարքներով: Ներքին էությանը առաջնորդվելը մարդու առաքինության նշաններից մեկն է: Հետագայում գիտնականներն այն համարում էին երկնային օրենք, որը դրսևորվում էր մարդկային էության մեջ: Ըստ մարդկային էության գործելը, հետևաբար, համարվում էր երկնային օրենքի շարունակություն:

Մեջբերում 引例

Այն, ինչ երկինքը շնորհել է մարդկանց, կոչվում է մարդկային էություն: Ըստ դրա գործելը կոչվում է Ճանապարհ (Դաո). բարոյական էության զարգացումը կոչվում է կրթություն («Ոսկե միջինի դոկտրին»):

**Չուկը չի ապրում, եթե ջուրը չափազանց պարզ է
շույ ջի ցին ցե ու յու 水至清则无鱼**

Չուկը չի կարող գոյատևել ջրում, եթե այն չափազանց պարզ լինի: Եթե ջրի մեջ չլինի կենդանական աշխարհ, ձուկն ուտելու ոչինչ չի ունենա ու կմեռնի: Սա բնական երևույթ է: Այս գաղափարից ներշնչված՝ հին չինացիները հավատացած էին, որ պետք չէ չափազանց բարձր նշաձող դնել մարդու կամ որևէ բանի առաջ, քննադատել մարդուն կատարյալ չլինելու համար կամ խիստ վերաբերվել ուրիշներին: Փոխարենը նրանք պնդում էին, որ պետք է լինել հանդուրժող և բաց

Չինական մտքի և սշակույթի հիմնական հասկացություններ

բոլորի համար: Եզրույթն արձագանքում է «ունենալ մեծ առաքինություն և հարմարվել ամեն ինչին» գաղափարը:

Մեջբերում 引例

Ձուկը չի կարող ապրել ջրում, որը չափազանց մաքուր ու վճիտ է: Մարդն ընկերներ չի ունենա, եթե խորամանկ լինի (*«Հան դինաստիայի պատմությունը»*):

Հեքիաթասացություն (Պատմողական արվեստ)

շուտիուա 说话

Հեքիաթասացությունը խոսքի և երգի միջոցով պատմություններ պատմելու գեղարվեստական ձև է, որը ծագել է Յինից առաջ ընկած ժամանակներում: Հան դինաստիայի վերջին տարիներից մինչև Ուեյ և Չին շրջաններ բուդդիստներն ու դաոսականները մեկնաբանում էին կրոնական գրերը առօրյա խոսակցական լեզվով և վառ պատմություններով: Թան դինաստիայում վանականները խոսքի և երգի միջոցով մեկնաբանում էին կրոնական դոկտրիններ: Այս առաջին փորձերի հիման վրա պատմողական արվեստը Սուն դինաստիայում ծաղկում էր: Պատմություններ էին պատմում ոչ միայն տաճարներում, այլև բեմում և շուկաներում, որտեղ այն դարձել էր զվարճանքի միջոց: Ժանրն ուներ բազմաթիվ ենթաժանրեր, ինչպիսիք են Հանից մինչև Թան դինաստիաների հեղինակների երկերի վրա հիմնված պատմությունները, խոսքով ու երգերով համեմված երգիծական պատմությունները, ֆարսերը, Երեք թագավորությունների, Հինգ դինաստիաների ու Տասը թագավորությունների պատմությունները: Հարավային Սուն դինաստիայում պատմությունները հիմնականում չորս թեմաներով էին պատմություններ, որոնք ներկայացվում էին փողային գործիքների ուղեկցությամբ, ռազմի պատմություններ, նախկին դինաստիաների պատմություններ, ինչպես նաև բուդդիստական այլաբանություններ:

ներ և հեքիաթներ իմաստուն մտքերի մասին, որոնք ստեղծվել են սրբավայրերում երկրպագելու ներշնչանքից: Պատմողները հրաշալի խոսում էին, երգում ու կատակներ պատմում. հարվածային գործիքներ, կոչնագանգեր և այլ երաժշտական գործիքներ էին օգտագործվում՝ ժանրն ավելի գրավիչ դարձնելու համար: Ներկայացման սկզբում ընթերցում էին բանաստեղծական տողեր, անեկդոտ էին պատմում, դերասանները հնարքներ էին անում՝ արժանանալով վաղ եկածների բացականչություններին ու ծափահարություններին, իսկ ուշ ժամանողներն անմասն չէին մնում հիմնական շոուից: Ներկայացումները հաճախ ավարտվում էին այլ բանաստեղծական տողերի ասումներով: Պատմողական արվեստը շատ տարածված էր հասարակ ժողովրդի շրջանում Սուն դինաստիայում: Այդպես ստեղծված գրերը դարձան հին ժամանակներում առօրյա խոսակցական լեզվով գրված չինական գեղարվեստական գրականության կարևոր մաս:

Մեջբերումներ 引例

Պատմությունները ծավալվում էին չորս թեմայի շուրջ. առաջին, մարմնավաճառներ, որոնք ծարավ են սիրո, բարի ու չար հոգիներ և տղամարդկանց ու կանանց սիրավեպեր, երկրորդ, գեղարվեստական լեզենդներ զինված թափառական ասպետների կամ թշվառությունից հարստության հասած տղամարդկանց մասին, երրորդ, պատերազմի հերոսներ, չորրորդ, բուդդիստական պատմություններ կամ քննարկումներ տանտիրոջ և հյուրի միջև, երբ վերջինս գալիս է տաճար: Բացի այդ, ներկայացվում էին թեմաներ պատմության, պատերազմների, ինչպես նաև դինաստիաների վերելքի ու անկման մասին, ինչպես արձանագրված է հոդվածներում ու կենսագրություններում (Նայդեուեն. «*Լինան քաղաքի հրաշքները*»):

Պատմողը ձգտում է հաջողության հասնել իր սահուն խոսքի միջոցով (Ու Յիմու. «*Երագողի նոթեր*»):

Գիտելիք՝ բացատրությունից

շուոջի 说知

Սա գիտելիքի և այն ձեռք բերելու միջոց է, որն առաջարկում էր Մոհիստական դպրոցը: Նրանց կարծիքով՝ գիտելիքը ձեռք է բերվում երեք ճանապարհով՝ անձնական փորձով, լսելով և բացատրությամբ: Բացատրությամբ սովորել՝ նշանակում է օգտագործել սեփական գիտելիքն ու տեղեկատվությունը՝ եզրահանգումներ անելով և լսածն ըմբռնելով:

Մեջբերումներ 引例

Իմացությունը ձեռք է բերվում խոսք ու գրույցից, բացատրությունից կամ անձնական փորձառությունից (Մոցցի):

Չսահմանափակվել միայն սեփական հնարավորություններով. սա է բացատրությունից գիտելիք ձեռք բերելու գաղափարը (Մոցի):

Մասնավոր անուն

սիմին 私名

«Մասնավոր անուն» կարգը Մոհիստական դպրոցն օգտագործում էր հատուկ առարկաներ անվանելու համար: Մոհիստներն ընդգծում էին, որ կարևոր է պատշաճ անուն տալ իրերին՝ այդպիսով արտացոլելով դրանց իրական էությունը: Նրանք ունեին իրերն անվանելու երեք ձև՝ անսահմանափակ, դասակարգված և մասնավոր: «Մասնավոր անուն» ասելով նկատի էր առնվում, օրինակ, հատուկ անունը, որը տրվում էր հատուկ անհատի:

Մեջբերումներ 引例

«Անունը» լինում է անսահմանափակ, դասակարգված կամ մասնավոր (Մոցի):

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

Որևէ մեկին «ստրուկ» անվանելիս «ստրուկը» մասնավոր անուն է: Անունը սահմանափակվում է տվյալ մարդով (Մոցի):

**Ոչ մի այլասերված միտք
սի ու սիե 思无邪**

Սա մտքի վիճակ է, մաքուր ու պատշաճ, զուրկ այլասերումից ու չարիքից: Այս հայտնի չափանիշը սահմանել է Կոնֆուցիոսը 300 բանաստեղծությունից կազմված հավաքածուի՝ «Երգերի գրքի» մասին իր հայտնի քննադատության մեջ: Նրա կարծիքով՝ այս բանաստեղծությունները մաքուր են, ներկայացնում են պատշաճ մտքեր, այլասերումներ չկան, պահպանված է չափավոր գեղեցկությունը: Գաղափարը մշտապես մեծ հարգանքի է արժանացել գիտնականների կողմից շնորհիվ այն կարևոր դիրքի, որ զբաղեցնում էին թե՛ Կոնֆուցիոսը, թե՛ «Երգերի գիրքը»: Եզրույթը հաճախ օգտագործվում է՝ գրողներին և նրանց ստեղծագործությունները գնահատելու և քննադատելու համար, չնայած «Երգերի գրքում» բանաստեղծություններից մի քանիսն ամբողջությամբ չեն համապատասխանում «ոչ մի այլասերված միտք» չափանիշին, որովհետև երբեմն արտահայտում են անսանձ զգացմունքներ և անկեղծություն:

Մեջբերում 引例

Կոնֆուցիոսն ասում էր. «Մեկ արտահայտությամբ կարելի է ամփոփիչ խոսք ասել «Երգերի գրքի» 300 բանաստեղծությունների մասին, այն է՝ «ոչ մի այլասերված միտք» (*«Անալեկոներ»*):

**Միախառնիր զգացողություններդ ու պատկերը
սի յու ծին սին 思与境偕**

Եզրույթը վերաբերում է բանաստեղծի սեփական զգացմունքները իր իսկ բանաստեղծության մեջ պատկերված տեսարանների հետ միախառնելուն: Առաջին անգամ կիրառվել է Թան դինաստիայի պոեզիայի քննադատ Սիկուն Թուի (837-901) կողմից, երբ նա մեկնաբանում էր նույն ժամանակաշրջանում Ուան Չիայի՝ տողում հինգ տառանշանով բանաստեղծությունները: Մի (思 զգացմունքներ) գաղափարն այստեղ խորհրդանշում է բանաստեղծի մտքերը, զգացմունքներն ու տրամադրությունները, իսկ ծին (境 պատկեր)՝ արտաքին տեսարանը, ինչպես նաև բանաստեղծության ստեղծած գեղարվեստական մթնոլորտը: Սին (偕 միախառնում) արտաքին երևույթների և բանաստեղծի ներքին աշխարհի միասնությունն է: Երբ բանաստեղծի զգացմունքներն ու տեսարանը միահյուսվում են, սուբյեկտիվության և օբյեկտիվության միջև սահմանն անհետանում է, և պոեզիայի արվեստում կատարյալ միասնություն է ստեղծվում: Հետագա շրջանի քննադատները սա համարում էին գեղարվեստական տեսության առանցքային գաղափար:

Մեջբերումներ 引例

Դեղին գետի և Ֆենհե գետի գրավիչ բնապատկերը կարող է ականավոր բանաստեղծներ ծնել: Մեր ժամանակակից Ուան Չիան ապրում է այստեղ: Նա երկար ժամանակներ շնչված է եղել այս մթնոլորտով: Դա նրան տվել է հինգ տառանշանով բանաստեղծություններում գերազանցության հասնելու հնարավորություն: Նա հրաշալի միախառնում է զգացմունքն ու տեսարանը՝ այդպիսով ճանաչման հասնելով բազմաթիվ այլ բանաստեղծների կողմից (Սիկուն Թու. «Նամակ Ուան Չիային՝ պոեզիայի մեկնաբանություններով»):

Գրական ստեղծագործությունը բարձրաձայնում է մար-

դու զգացմունքներն ու մտքերը, բայց հուզում է մյուսներին, քանի որ միաձուլում է զգացմունքն ու տեսարանը: Լավ բանաստեղծության առանձնահատկությունն այս երկու գործոնների կատարյալ միասնությունն է, մինչդեռ այլ բանաստեղծություններ գերազանց են կամ զգացմունքի, կամ տեսարանի առումով (Ֆան Ջիհոու. «Ուան Գուուեյի բանաստեղծական մեկնաբանությունները» երկի երկրորդ մասի նախաբան):

Սուն դինաստիայի բանաստեղծական դրամա

Սոնգաջու 宋杂剧

Սուն դինաստիայի բանաստեղծական դրաման կատակերգական ներկայացումների, երգի ու պարի և զանազան շոուների համադրություն է: Այն ավանդական չինական դրամայի վաղ ձևն է, որը հիմնված է Յանցունսիի (Թան դինաստիայի կատակերգական երկխոսություններով պիեսներ) վրա և պարունակում է երգի, պարի, ինչպես նաև ժողովրդական արվեստի այլ տարրեր: Այն հիմնականում կատակերգական և երգիծական է: Բաղկացած է երկու մասից: Առաջինը աշխուժացնող մասն է, երկրորդը՝ «իրական շոուն»: Երբեմն կանոնավոր շոուին ավելացվում էին երգիծական տարրեր՝ զվարճանքն ավելացնելու համար: Յուրաքանչյուր բանաստեղծական դրամայում կա չորս կամ հինգ կերպար, որոնցից մեկը հիմնական երգիչն է, ով երգելով պատմում է իրադարձությունների մասին, իսկ մյուսները հանդես են գալիս բնավոր հատվածներում, հանպատրաստից թեթև երգիծական մեկնաբանություններ անում կամ ուղղակի երգում ու պարում: Դրամատիկ ներկայացումները շատ տարածված էին Հյուսիսային Սուն շրջանում, հատկապես Քայֆենում և Լուոյանում: Հյուսիսային և Հարավային Սուն դինաստիաներում բանաստեղծական դրաման շարունակեց զարգանալ և հասավ նոր բարձունքների՝ բաժանելով դերերը, փոփոխելով դրությունը և էլ ավելի խճճելով սյուժեն:

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Սուն դինաստիայի բանաստեղծական դրաման նախորդել է Յուան դինաստիայի բանաստեղծական դրամային: Դրա գեղարվեստական ձևերն ու տեխնիկական միջոցներն ուղղակիորեն ազդել են դրամայի հետագա ձևերի վրա:

Մեջբերումներ 引例

Սուն դինաստիայի բանաստեղծական դրամայում *մոնիև* տղամարդու հիմնական դերն է, իսկ չորս կամ հինգ կերպարները միասին կատարում են ամբողջ պիեսը: Նրանք սկսում են խաղարկելով առօրյա կյանքից վերցված ծանոթ իրավիճակ (*յանդուան*). սա ներկայացման ներածական մասն է: Ապա սկսվում է բանաստեղծական դրաման: Կերպարների ամբողջ խմբից միայն *մոնիև* է միշտ ուշադրության կենտրոնում: *Յինսիև*, իր հերթին, առաջնորդում է շուն՝ ուղղություն տալով կամ անհրաժեշտության դեպքում հուշելով: *Ֆուշիևը* պետք է հանդես գա ծաղրածուի դերում, իսկ *ֆունուն* երգիչական մեկնաբանություններ է անում: Երբեմն, սյուժեի զարգաման կարիքներից ելնելով, կարող է հայտնվել կառավարության որևէ պաշտոնյա (Նայդեուն. «*Լինան քաղաքի հրաշքները*»):

Ինչպես ասում է Հուան Թինծիանը, «Պոեզիա գրելը նման է դրամա գրելուն: Սկսում ես ընդհանուր դասավորությունից, իսկ վերջում ստիպված ես ամփոփիչ խոսք ասել՝ հանուն գվարճանքի անելով որոշ անսովոր մեկնաբանություններ»: Սրա պատճառը հավանաբար այն է, որ նա չէր սիրում Յին Գուանի ստեղծագործությունները, քանի որ դրանք զուրկ էին նպատակից (Ուան Ջիֆան. «*Իմ մեկնաբանությունները բանաստեղծական սրեղծագործության մասին*»):

**Գիր, որը հոսում է ջրի նման
սույ ու ֆու սին 随物赋形**

Եզրույթն ի սկզբանե վերաբերում էր ջրին, որն առանց

Ֆիքսված ձևի հոսում է առարկաների միջով կամ գետնի մակերեսով: Սույն դինաստիայի գրող Սու Շին (1037-1101) դրա միջոցով նկարագրում էր գրական ստեղծագործություն, որը ջրի նման սահում ու ազատ է և ցույց է տալիս թե՛ գրողի ստեղծագործական ուժը, թե՛ բնության ու մարդկային հասարակության օրենքներին ենթարկվելու ունակությունը: Այս գրական ոճը ձգտում է ներդաշնակության հասնել մոտիվի ու արտահայտչական տեխնիկական միջոցների միջև՝ մեկ գեղագիտական ամբողջության մեջ միաձուլելով զգացմունքը, բնապատկերները, իրադարձություններն ու բարոյական դասերը: Հավանաբար եզրույթի վրա ազդեցություն են թողել հետևյալ դառասական սկզբունքները՝ «բարձրագույն առաքինությունը նման է ջրի», «ջուրը ճանապարհի ամենաճշգրիտ համարժեքն է, ինչպես նաև կարմայի մասին բուդդիստական գաղափարները: Այն նաև հնարավորություն է տալիս արտահայտել արտիստի անհատականությունը, գեղարվեստական նվաճումներն ու կարողությունները:

Մեջբերումներ 引例

Աշխարհում ամենասքանչելին, միանշանակ, ջուրն է: Գետի հզորությունն ու ծովի խորությունը կարելի է տեսնել երևակայության միջոցով: Քանի որ ջուրը չունի ֆիքսված ձև, այն տարբեր տեղանքներով հոսելիս ստանում է տարբեր ձևեր: Ուստի, թեև ջրի հոսքը խիստ տարբեր է, այն հետևում է բնության ներքին օրենքներին (Սու Շի. «Ներքող Յանյու ժայռին՝ Յանզցե գետի Յուֆան կիրճից»):

Երբ գրում եմ, բառերն աղբյուրի պես թափվում են: Չէ՞ որ աղբյուրներն էլ հոսում են սարերից ու չեն ընտրում, թե ինչ բարձրությունից են հոսելու. բառերը, ինչպես ջուրը, առատորեն հոսում են հարթ գետնի վրայով և ամեն օր երկար ճանապարհ անցնում: Հետո հայտնվում են ամեն տեսակ ժայռեր, բայց բառերը հոսում են դրանց շուրջ՝ ստանալով այն ձևը, որը թելադրում է տեղանքը: Դժվար է գուշակել, թե ի վերջո

Չինական մտքի եւ սշակույթի հիմնական հասկացություններ

ինչ կլինի, բայց գիտեմ, որ անհրաժեշտության դեպքում ջուրը կանգ կառնի կամ կշարժվի (Սի Շի. «Մեկնաբանություններ իմ սրեղծագործության վերաբերյալ»):

Թուն-Ղուան պոեզիայի դպրոցը

Թուն-Ղուանթի 同光体

Թուն-Ղուան պոեզիայի դպրոցը, որն ի հայտ եկավ Ցին շրջանի կայսրեր Թունցիի (1862-1874) և Ղուանսուի (1875-1908) թագավորության օրոք, շարունակեց ծաղկել Չինաստանի Հանրապետության առաջին տարիներին՝ 20-րդ դարի սկզբին: Անվանումը ծագել է երկու կայսրերի թագավորությունների անունների առաջին տառանշանների համադրությունից: Չեն Սանլին (1852-1937), Շեն Յենցին (1850-1922), Չեն Յանը (1856-1937) և Ջեն Սյաոսուն (1860-1938) այս դպրոցի ներկայացուցիչներին էին: Նրանք բարձր էին գնահատում Սուն դինաստիայի ցի պոեզիան՝ դասական չինական լիրիկական պոեզիան, որն օգտվում էր բանաստեղծական տաղաչափությունից. վերջինս հիմնված էր ֆիքսված ռիթմով ֆորմալ ձևերի որոշ նմուշների վրա: Նրանց նպատակն էր՝ «բանաստեղծի պոեզիան» միաձուլել «գիտնականի պոեզիային»՝ մեկ ամբողջության մեջ ներկայացնելով բանաստեղծի ձգտումները, զգացմունքները, ակադեմիական մոտեցումներն ու բարոյական ձեռքբերումները: Նրանք մեկնաբանությունները ներառում էին իրենց բանաստեղծություններում և մանրամասն ընտրում բառերը: Ոճական առումով ձգտում էին խիզախության և ուղղախոսության՝ փորձելով ճանապարհ հարթել «ամայի անապատի միջով»: Տարածաշրջանային և ոճական տարբերությունների պատճառով բանաստեղծական արարման այս դպրոցը հետագայում բաժանվեց Ֆուձիան, Ջեյժիան և Չիանսի ճյուղերի:

Մեջբերումներ 引例

«Պոեզիայի Թուն-Գուան դպրոցը» զվարճալի եզրույթ է, որ Ջեն Սիաոսուն և ես հորինել ենք դեռևս Թունցիի ու Գուանսուի ժամանակներից, որոնք բանաստեղծություններ գրելիս չէին ենթարկվում պոեզիայի՝ Թան դինաստիայի ամենաբարեկեցիկ շրջաններում գերակշռող օրենքներին (Չեն Յան. «Շեն Յենցիի բանաստեղծությունների ժողովածուի նախաբան»):

Երբ մայրաքաղաքում էի, Ջեն Սիաոսուն մի անգամ այցի եկավ ինձ: Նա ասաց, որ Շեն Յենցիի բանաստեղծությունները, ինչպես իմը, պատկանում են պոեզիայի Թուն-Գուան դպրոցին: Բազմաթիվ ստեղծագործություններ, որ մենք գրում էինք միմյանց ողջունելու համար, նման էին թարմ գինու, որի գույնն ու բույրը ժամանակի ընթացքում երբեք չեն խամրում (Չեն Յան. «Չինական գրված չորս բանաստեղծություն՝ Շեն Յենցիին ներկայացնելու համար»):

Գրի Ունչեն դպրոցը
Թոնչենփայ 桐城派

Գրի այս դպրոցը ներկայացնում էր Յին դինաստիայի ամենաազդեցիկ ոճը՝ դասական չինական գիրը: Այս ուղղության բոլոր ներկայացուցիչները բնիկ Թունչենից էին, Անհույ նահանգից, որից էլ ծագել է անվանումը: Ուղղությունը ձևավորվել է Քանսի կայսեր (1662-1722) օրոք և գազաթնակետին հասել Յիանլուն կայսեր (1736-1795) և Ծիացին կայսեր (1796-1820) օրոք: Գրա հիմնադիր Ֆան Բաուն (1668-1749) հավատացած էր, որ ուսյալ մարդիկ պետք է հետևեն ոչ մեռ-կոնֆուցիական մորալիստներ Չեն Հաոյի (1032-1085), Չեն Յիի (1033-1107) և Ջու Սիի (1130-1200), ինչպես նաև հայտնի մտավորականներ Հան Յուի (768-824) և Օույան Սիուի (1007-1072) գրելաոճին: Սա հիմք դարձավ այս

դպրոցի ստեղծման համար: Ուղղության ականավոր ներկայացուցիչներն էին Դայ Մինչին (1653-1713), Լիու Դակույը (1698-1779), Յաո Նայը (1732-1815), Մեյ Յենլիանը (1786-1856), Ֆան Գունչուն (1772-1853) և Ու Ռուլունը (1840-1903): Այս դպրոցի գրողներն ընդգծում էին, որ ստեղծագործությունները պետք է հաղորդեն բարոյական իդեալներ և ձևով լինեն հղկված ու կառուցիկ: Գրի այս ոճը հիմնված էր Ֆան Բայի՝ «լավ արձակ գրելու ուղենիշերի», Յաո Նայի՝ «արդարամիտ պատգամները, փաստերն ու վկայությունները, հռետորաբանությունն ու տեխնիկան շեշտելու» և Լիու Դակույի «գրավոր ստեղծագործության և դրա հեղինակի հմայքի» տեսության վրա: Թունչենի գրական դպրոցը ժառանգել է չինացի գիտնականների՝ դասական չինարենով գրելու ավանդույթը և տեսականորեն ամփոփում է արձակը: Այն մեծ հեղինակություն էր վայելում մինչև Գրողների շրջանում տեղի ունեցած հեղափոխությունը, որն առաջնորդում էր Լիան Յիչաուն (1873-1929) և քննադատվում՝ որպես պահպանողականության խորհրդանիշ:

Մեջբերումներ 引例

«Ներքին ուժն» այն է, ինչ արձակագիրները ջանում են արտահայտել: Էսսեն պետք է աշխույժ լինի, բայց հաղորդի հեղինակի ներքին ուժը: Առանց դրա էսսեն հիմք չի ունենա և անիմաստ կթափառի օդում: Հեղինակի ներքին ուժն էսսեի հոգին է, իսկ վերջինս առաջինի կոնկրետ դրսևորումն է: Հեղինակի ներքին ուժը խտացրած ձևն ու էսսեի էներգիայի հիմքն է: Մեր նախնիները կարող են միայն մեզ փոխանցել գրելու հմտությունները: Եթե գրողին չհաջողվի հաղորդել ստեղծագործության էությունը, և նա ենթարկվի միայն մակերեսային օրենքներին, դրանք կխանգարեն նրան (Լիու Դակույ. «Պարսահական մտքեր գրի մասին»):

Լավ ստեղծագործությունը ենթադրում է ոչ միայն ենթարկվել օրենքներին, այլև խիզախաբար հեռանալ դրան-

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

ցից: Մեր ժամանակներում մարդն ավելի բարեկեցիկ է ապրում, քան ցանկացած նախորդ դարաշրջանում, բայց կան սակավաթիվ ուսյալ մարդիկ, ովքեր լավ են ստեղծագործում դասական շինարենով: Երկու լավագույն գրողներն են փոխվարչապետ Ֆան Բաոն՝ երեկ և մեր մեծն Լորդ Լիուն՝ այսօր: Երկրի լավագույն գրական արձակի մնուշները հավանաբար գրվել են ծնունդով Թունչենից գիտնականների կողմից (Յաո Նայ. «Շնորհավորական նամակ Լիու Հայֆենի ութսուներորդ ծննդյան տարեդարձին»):

Խուսափիր կարծրատիպերից

թուռ քեծյու 脱稟白

Եզրույթը նշանակում է, որ դրամա գրելիս գրողը չպետք է ընկնի հին մնուշների ետևից: Պետք է ոչ միայն խուսափել նախորդ գործերի կարծրատիպերից, այլև դիմակայել դրա փորձերին իր իսկ սեփական ստեղծագործություններում: Եզրույթն առաջարկվել է Սին դինաստիայի վերջի և Յին դինաստիայի սկզբի տեսաբան Լի Յուի (1611-1680) կողմից՝ նրա «Պատահական գրառումներ՝ թեթև շարժումներով» գրքում: Նրա կարծիքով՝ դրամատիկ ստեղծագործությունները պետք է յուրօրինակ լինեն թե՛ բովանդակությամբ, թե՛ բառապաշարով, և չպետք է կուրորեն հետևեն նախկինում գրված ստեղծագործություններին: Սիայն այդպիսի ստեղծագործություններն են արժանի կոչվել չուանցի (լեգենդար պատմություն): Կարծրատիպերից խուսափելու նրա կոչը նպատակ ուներ խրախուսել ստեղծարարությունն ու բազմազանությունը գեղարվեստական ստեղծագործության մեջ՝ այդպիսով բերկրանք պարզևելով հանդիսատեսին:

Մեջբերումներ 引例

Լիրիկական ստեղծագործություն գրելիս մեծագույն դժվարությունը, իմ պատկերացմամբ, կարծրատիպերից

Չինական մտքի եւ սշակույթի հիմնական հասկացություններ

ազատվելն է, իսկ լիրիկա գրելիս պետք է խուսափել հին կարծրատիպերը կրկնօրինակելուց (Լի Յու. «Պարսահական գրառումներ՝ թեթև շարժումներով»):

Ոչ միայն մեր նախնիների երկերն են մեծամասամբ հնացած, այլև այն ստեղծագործությունները, որոնք ինքս եմ գրել: Եվ այսօր դրանք դիտարկելիս հասկանում եմ, որ պետք է բարեփոխվեն: Այսօր, երբ այլևս չեմ տեսնում այն, ինչ տեսնում էի երեկ, հասկանում եմ, որ այն, ինչ չեմ տեսել, նոր է, իսկ ինչ տեսել եմ՝ հին (Լի Յու. «Պարսահական գրառումներ՝ թեթև շարժումներով»):

Գեղարվեստական ներշնչանք ստացիր

թե՛ ներսից, թե՛ դրսից

ուայ շի ցաոհուա, ջուն դե սինյուան 外师造化, 中得心源

Ըստ այս պատվիրանի՝ գեղարվեստական ստեղծագործության ձգտելիս անհրաժեշտ է ներշնչանք ստանալ բնության մեջ ամեն ինչից և ներքին մտքերից: *Ցաոհուա* (造化) նշանակում է բնություն: *Սինյուանը* (心源) բուդդիստական եզրույթ է, որը նշանակում է, որ մարդու մտքի ճշմարիտ արթնացումն ողջ բուդդիստական ուսուցման հիմքն է: Այս տեսակետը, որն ի սկզբանե նկարագրվել է Թան դինաստիայի նկարիչ Ջան Յաոյի կողմից, մեջբերվել է հետագայում Թան դինաստիայի հեղինակ Ջան Յանյուանի կողմից իր «Պատմության հայտնի կտավներ» գործում: Ի սկզբանե այն բնականաբար սկզբունք էր, որի նպատակն էր ստեղծել թե՛ ճշմարտանմանության, թե՛ վաղանցիկության զգացողություն և հաղորդել սարերի, գետերի, լճերի, ծառերի ու ժայռերի նրբություններն իրական կյանքում՝ մանրամասն ուսումնասիրելով դրանց կառուցվածքը, ձևերն ու գույները: Նկարչին խրախուսում էին սրտով զգալ դրանց գեղեցկությունն ու այն արտացոլել նկարում: «Բնություն» և «ներշնչանք ներսից» հասկացություններն ավելի շատ փոխարացնող են, քան

հակադրվող. դրանք ավելի շատ միասնության, քան հակադրության հարաբերության մեջ են: Թան դինաստիայի՝ պոեզիայի մասին էստեները նույնպես անդրադառնում են «հոգուն» և «ներսից բխող ներշնչանքին»: Բանաստեղծական ստեղծագործությունների նկարագրությունները շատ չեն տարբերվում նկարչության գործընթացի մասին Ջան Յաոյի մեկնաբանությունից: Դասական չինական արձակն ու պոեզիան նման են նկարչությանն այն իմաստով, որ ընդգծում են տարբեր ֆիզիկական պատկերներից մեկ զեղագիտական ամբողջություն ձուլելու կարևորությունը: Դրանք գնահատում են գրական ստեղծագործության արժեքը՝ արտաքինը, այսինքն՝ էությունը միախառնելով ներքինին՝ մտքին:

Մեջբերումներ 引例

Բի Հունը՝ պաշտոնյան, ով վերահսկում էր արքայազնի բնակատեղին, հայտնի մարդ էր: Նա հիանում էր Ջան Յաոյի՝ գրեթե մաշված վրձնով նկարելու ունակությամբ: Երբ տեսավ, թե Ջան Յաոն ինչպես է ժամանակ առ ժամանակ դիպչում չներկած մետաքսին, որի վրա Ջանը նկարում էր, հարցրեց Ջանին, թե ինչպես է ձեռք բերել այդ հմտությունը: Ջանն ասաց. «Սովորել եմ թե՛ բնությունից, թե՛ ներքուստ» (Ջան Յանյուան. «Պայմանության մեջ հայրնի նկարներ»):

Ներքին ներշնչանքը նման է հնոցի, իսկ վրձինը՝ այրվող քարածխի: Նկարիչը ստանում է առարկան հնոցից և վրձնով կոնկրետ առարկաներ փորագրում: Նրա մտքերն ու զգացմունքները հորդում են բազմաթիվ վառ արտահայտությունների ազատ հոսքով (Լիու Յուսի. «Դունի գրառումները Ուլինից» գրքի նախաբան):

Կառավարիչը պետք է հարստացնի մարդկանց ուան ջե ֆու մին 王者富民

Մեծ ու բարեգործ կառավարիչը կհարստացնի իր ժո-

դովրդին ու կմիավորի երկիրը: Եզրույթի ենթատեքստն այն է, որ մեծ գործը կարող է հաջողության հասնել միայն ժողովրդի աջակցության դեպքում: Հետևաբար, հեռատես առաջնորդը պետք է առաջնահերթությունը տա ողջ ժողովրդի, այլ ոչ միայն որոշ մարդկանց, առավել ևս՝ մի շարք անհատների շահերին: Այս եզրույթը «ժողովուրդը պետության հիմքն է» և «մարդկանց ապահովել հարստությամբ» մտածողության արձագանքն է:

Սեջբերում 引例

Եվ այսպես, բարեգործ կառավարիչը կհարստացնի իր ժողովրդին: Իսկ այն կառավարիչը, ով ցանկանում է վերահսկել բոլոր դքսերին ու արքայազններին, կհարստացնի միայն իր բանակը: Պետությունը, որ հարստացնում է միայն իր նախարարներին, հազիվ թե գոյատևի. պետությունը, որը լցնում է միայն կառավարչի դրամարկղն ու գանձարանները, դատապարտված է: Անխուսափելիորեն, այդպիսի պետության մեջ մարդիկ կթաղվեն աղքատության մեջ... Այդպիսի պետությունը կարճ ժամանակ անց կփլուզվի («*Umligh*»):

Գրական շրջանակների հեղափոխությունը ուենծիե գեմին 文界革命

Գրական շրջանակների հեղափոխությունը, որը տեղի ունեցավ արդի Չինաստանի սկզբնական շրջանում, մշակութային շարժում էր, որը նպատակ ուներ փոխել դասական չինական լեզուն ու գրականությունը: 1899 թվականին Լիան Ցիչաոն (1873-1929), հուսախաբված 1898 թվականի Բարեփոխումների շարժումից, զգաց, որ չինացի ժողովրդի ազգային հոգեկերտվածքը շտապ բարեփոխման ու վեհացման կարիք ունի: Նա գրի միջոցով արևմուտքից ներմուծեց նոր գաղափարներ՝ հուսալով, որ սա կօգնի լուսավորել և կրթել իր համերկրացիներին և փոխել նրանց մտածողությունը:

Այս հեղափոխության թիրախը գրական արձակի թունչն էր, որը հիմնադրվել էր Անհույ նահանգի թունչն էր կոմսության որոշ բնիկների կողմից՝ Յին դինաստիայի առաջին տարիներին: Մյուս թիրախը *Փիսնուենն* էր՝ ռիթմիկ արձակ, որին բնորոշ էր զուգահեռությունն ու ճոխությունը: Այս հեղափոխությունը նպատակ ուներ համադրել դասական բանավոր չինարենն ու դասական գրավոր չինարենը մեկ ձևի մեջ և օգտագործել նոր ոճն ու բառամթերքը արդի արևմտյան հասկացություններ ու գաղափարներ մեկնաբանելու նպատակով: Լիան Յիչաոն ստեղծեց նոր ոճ՝ կիրառելով բազմաթիվ խոսակցական արտահայտություններ և օտար լեզուների քերականությունը: Նրա ստեղծագործությունները լի էին զգացմունքներով: Գրական շրջանակների հեղափոխությունն ուներ նույն նպատակները, ինչ Բանաստեղծների հեղափոխությունն ու Գեղարվեստական գրականության հեղինակների հեղափոխությունը՝ խթանել գրական ոճի բարեփոխումները: Այն մեծացրեց տեղական չինարենի մասսայականությունը, ոգեշնչեց Մայիսի 4-ի (1919) գրական հեղափոխությունը և ճանապարհ հարթեց տեղական լեզվով պոեզիայի ու արձակի զարգացման համար՝ հաստատելով չինական գրական երկերի գերիշխանություն:

Մեջբերումներ 引例

Տոկուտոմի Սոհոն Ճապոնիայի երեք մեծ լրագրողներից մեկն էր: Նրա գիրն ազատ է, առանց սահմանափակումների, խոր ու նրբագեղ ոճով: Նա արևմտյան գրելաոճը ներմուծեց ճապոնական գրականություն և նոր հորիզոն ստեղծեց գրական շրջանակների համար: Սիրում էմ նրա գրելաոճը: Եթե Չինաստանում երբևէ լինի գրական հեղափոխություն, այն պետք է լինի այնպես, ինչպես սկսվել է: (Լիան Յիչաո. «Իմ օրերը Հավայիում»):

Ինձ երբեք դուր չի եկել արձակի թունչն ոճը: Երբ գրում էի դեռ երեխա ժամանակ, նմանակում էի Ուեյ և Չին գրա-

կան շրջանակների ոճն ու պաշտում նրանց մանրակրկիտ ու համառոտ գրելաճճը: Հիմա, երբ ազատագրվել ենք, կարող ենք թեթևացնել և հեշտացնել մեր ոճը՝ օգտագործելով ժամանակակից խոսակցական լեզու, հանգային արտահայտություններ և օտար լեզվի քերականություն: Ես անկաշկանդ էի իմ գրելաճճում: Բազմաթիվ գիտնականներ հպարտորեն նմանակում են ինձ՝ իմ գրելաճճը կոչելով «թարմ ու նոր ոճ»: Ավելի մեծ սերնդի ներկայացուցիչները, սակայն, ատում ու ծաղրում են այն՝ համարելով «անամոթաբար շեղված» ոճ: Բայց իմ գրածը տրամաբանական է, ճիշտ շարադրված և տենչագին: Այն մոգական հմայքով գրավում է իմ ընթերցողներին (Լիան Յիչաո. «Յին դինասարիայի ակադեմիական պարունոթյան ուրվագծեր»):

Խոսքուգրույցից քաղված գիտելիք ուենջի 闻知

Խոսքուգրույցից ստացված գիտելիքը գիտելիքի տեսակ է և այն ձեռք բերելու միջոց, որն առաջարկել է Մոհիստական դպրոցը: Նրանց կարծիքով՝ գիտելիքը ձեռք է բերվում երեք ձևով՝ անհատական փորձառություն, խոսքուգրույց և բացատրություն: Խոսքուգրույցից գիտելիք ես ստանում, երբ այն պատմում կամ սովորեցնում են ուրիշները. սա գիտելիք ձեռք բերելու անուղակի ձև է:

Մեջբերումներ 引例

Իմացությունը գալիս է խոսքուգրույցից, բացատրությունից կամ անհատական փորձից (Մոցի):

Երբ ինչ-որ բան ես իմանում մեկ ուրիշի պատմածից, սա կոչվում է խոսքուգրույց (Մոցի):

Անատման / Անանձնականություն

ուռու 无我

Այս գաղափարը նշանակում է, որ չկա իրականում գոյություն ունեցող «ես»: Բուդդիզմը պնդում է, որ այսպես կոչված սուբյեկտը վերամարմնավորման մեջ բոլորովին գոյություն չունի: Այդ պատճառով այն կոչվում է «եսի չգոյություն»: Գաղափարն ի սկզբանե ուղղված է եղել այն ժամանակ մեծ մասսայականություն վայելող Բրահմանիզմի մտածողության դեմ: Այս կրոնը ենթադրում է, որ անկանխատեսելի և բարդ սուբյեկտիվ փորձում կա հավերժական և անփոփոխ «ես»: Մինչդեռ Բուդդիզմը պնդում է, որ այսպես կոչված «ես»-ը ընդամենը բազմաթիվ հոգեբանական և ֆիզիկական երևույթների ամբողջությունն է: Գաղափարը հետագայում տարածվեց կյանքի սուբյեկտներից անդին, այն է՝ մարդիկ և գոյություն ունեցող ամեն ինչ զուրկ են «եսից»: Ոչինչ չունի տևական ու մշտական առանցքային էություն կամ իրական ես:

Մեջբերում 引例

Բոլոր բուդդաներն ամբողջությամբ ըմբռնում են, որ չկա ոչ «ես», ոչ որևէ բան, որ պատկանում է «ես»-ին: Ուստի նրանք կարող են լքել մարմինն ու կյանքը (*«Ասրվածաշնչյան Կարեկցանքի լուրտսը»*)

Հինգ տարրերի ցիկլը

ուդե ջունշի 五德终始

Հինգ տարրերի ցիկլը, որոնք պարբերաբար հետևում են իրար որոշակի հատակ հաջորդականությամբ, մեկնաբանում էր դինաստիաների վերելքն ու անկումը և քաղաքական փոփոխությունները: Այն առաջարկվել է պատերազմող պետու-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

թյունների շրջանի մտածող Յոու Յանի (մթա.324?-250) կողմից: Հինգ տարբերն են մետաղը, փայտը, ջուրը, կրակն ու հողը. դրանք հայտնի են նաև որպես հինգ առաքելություն, որոնք պարբերաբար կրկնվում են: Յոու Յանը հավատացած էր, որ մարդկության պատմության մեջ փոփոխությունները նման են բնության փոփոխություններին և վերահսկվում են այս հինգ ֆիզիկական տարրերով: Յուրաքանչյուր նոր դինաստիայի ծնունդը ներկայացնում էր որոշակի «առաքինության» վերելք: Դինաստիաների փոփոխության և քաղաքական փոփոխությունների պատճառը հինգ տարրերի հաջորդականությունն էր, որոնք ձևավորում կամ հաղթում էին միմյանց: Քաղաքական առաքինության և ցիկլային պատմության այս գաղափարը, որի արմատները պետք է փնտրել ինի ու յանի մեջ, ինչպես նաև հինգ տարրերի տեսությունը սկզբից ի վեր մեծ ազդեցություն է ունեցել ավանդական չինական մշակույթի վրա:

Մեջբերում 引例

Յինի առաջին կայսրը հավատում էր առաքինության հինգ տարրերի ցիկլային հաջորդականության տարածված գաղափարին: Նա հավատացած էր, որ Յին դինաստիան ունի կրակի առաքինություն: Երբ Յին դինաստիան փոխարինեց Ջոու դինաստիային, նա նշեց, որ սրանով սկիզբ դրվեց ջրի առաքինությանը, որը գերիշխում էր կրակի առաքինությանը («Պարմաբանի արձանագրություններ»):

**Աճել և նվազել
սյաոսի 消息**

Աճել և նվազել. սրանք երևույթների փոփոխության երկու ձևերն են, միմյանց հակադիր, բայց և միմյանց փոխարինող: Մինչև որոշակի կետ աճելուց հետո երևույթը կսկսի անկում ապրել, իսկ մինչև որոշակի աստիճան անկում ապրելուց հե-

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

տո նորից կսկսի աճել: Երկնքի ու երկրի միջև աճի ու նվազման գործընթացն անցնում է իր ներքին օրենքների համապատասխան: Մարդիկ պետք է ընդունեն այս օրենքը և գործեն համապատասխանաբար այնպես, ինչպես երևույթներն են աճում ու նվազում:

Սեջբերումներ 引例.

Առաքինի մարդը գնահատում է աճի ու նվազման, լիության և դատարկության ընթացքը. դրանք երկնային շարժումներն են (*«Փոփոխությունների գիրքը»*):

Երբ արևը հասնում է միջօրեին, սկսում է մայր մտնել, իսկ լիալուսինն աստիճանաբար նվազում է: Երկինքն ու երկիրը լցվում ու դատարկվում են, աճում ու նվազում են ժամանակի հետ: Նույնը վերաբերում է նաև մարդկանց: Ոգիներին ու աստվածներին՝ նույնպես (*«Փոփոխությունների գիրքը»*):

Մտաբերում / Արթնացում

սին 兴

Արթնացումը մտքի վիճակ է, երբ արտաքին երևույթներն արթնացնում են մարդու ներքին զգացմունքները և գեղագիտական գնահատական տալիս: Որպես գեղագիտական եզրույթ՝ արթնացումը նշանակում է թե՛ խթանում, թե՛ զուգորդում: Գեղարվեստական գնահատման մեջ Կոնֆուցիոսը արթնացում ասելով նկատի ուներ պոեզիայի ընթերցման հոգեբանական ազդեցությունն ու կրթական գործառույթը, և այն չէր համարվում զուտ գրական եզրույթ: Գեղարվեստական արարման մեջ արթնացում՝ նշանակում է զուգորդություն, որը վեց բանաստեղծական ձևերի շարքում է, մասնավորապես՝ բալլադներ, պատումներ, մանաբանություններ, զուգորդություն, արքունական հիմներ և ներբողներ, ինչպես նկարագրված է «Երգերի գրքում»: Առաջին երեքը վերաբե-

րում են դասական չինական պոեզիայի բովանդակությանն ու ենթատեսակներին, իսկ վերջին երեք տարրերը «Երգերի գրքում» օգտագործված գեղարվեստական միջոցներ են: Արթնացումը միմյանց նման երևույթների միջոցով ստեղծում է փոխաբերություն, որը երևակայության և զուգորդության միջոցով մեկնաբանում է ասելիքը պատկերային համակարգերի օգնությամբ և ընդգծում է պոեզիայի նրբությունները: Մարդու երևակայությունն արթնանում է բանաստեղծություն կարդալիս, և փորձառությունը դառնում է հաճելի: Սա հռետորական միջոց է, որը հաճախ օգտագործվում է դասական չինական պոեզիայում: Սկզբում արթնացումը սերտ կապի մեջ էր համանմանության հետ: Դրա առնչություններն ու գեղագիտական հատկությունները սկսեցին անկախ զարգանալ Ուեյ, Չին և Հարավային ու Հյուսիսային դինաստիաների ժամանակահատվածում և վերջապես դարձավ պոեզիայի ոլորտի եզրույթ, որը տարբերվում էր համաբանությունից և զուգորդությունից: Արթնացումը կենտրոնանում է մարդու զգացմունքների վրա արտաքին երևույթների ներգործության ուժով:

Մեջբերումներ 引例

Մարդը պոեզիայի միջոցով արթնացնում է սեփական կամքը, ծեսերն ու էթիկայի կանոնները կարգավորում են նրա վարքագիծը, իսկ երաժշտությունը ձևավորում է նրա բնավորությունը (*«Անսալեկտներ»*):

Արթնացումը արտաքին աշխարհի երևույթների օգտագործումն է մարդու զգացմունքներն ու ձգտումներն արթնացնելու համար: «Երգերի գիրքը», օրինակ, խոսում է ծառերի, խոտի, թռչունների և կենդանիների մասին՝ զգացմունքներ արթնացնելու նպատակով (Կուն Ինդա. *«Մաոյի «Երգերի գրքի ծանոթագրությունների» ուղղումներ»*):

«Երգերի գիրքը» ներկայացնում է վեց ժանր՝ բալլադներ,

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

պատումներ, նմանաբանություններ, զուգորդումներ, արքունական հիմներ և գովեստներ: Չորրորդը՝ «զուգորդումը», նշանակում է, որ բանաստեղծն օգտվում է արտաքին աշխարհի երևույթներից՝ իր զգացմունքներն ու ցանկությունը բարձրաձայնելու համար. այսպես ստեղծվում է բանաստեղծություն (Ուան Կայուն. «*Բանաստեղծություն, որը գրվել է պարոն Հուանին պոեզիայի ստեղծումը ներկայացնելու համար*»):

Խթանի օգտակարը, վերացրու վնասակարը
սինլի-չուհայ 兴利除害

Խթանել այն, ինչ օգտակար է մարդկանց համար, վերացնել այն, ինչ վնաս է բերում: Իշխանություն ունեցողները պետք է հանրային շահը դնեն մտահոգությունների կենտրոնում, սահմանեն, թե ինչն է օգտակար մարդկանց համար, և վերացնեն այն, ինչ վնաս է տալիս: Հին Չինաստանում կոնֆուցիականները, մոհիստներն ու լեզալիստները կարծում էին, որ սա կառավարչի հիմնական պարտականությունն է, որով որոշվում է՝ արդյո՞ք կա հանրային աջակցություն, թե՛ ոչ, և հետևաբար, արդյո՞ք նրա կառավարումն ունի քաղաքական լեգիտիմություն: «Կառավարել մարդկանց» ներկայիս արտահայտության արմատներն այս հասկացության մեջ են:

Մեջբերումներ 引例

Իմաստուն հին կառավարիչները խրախուսում էին այն, ինչ օգտակար էր մարդկանց, և վերացնում այն, ինչ վնասում էր նրանց՝ այդպիսով ձեռք բերելով նրանց հավատարմությունը: Օգտակար նշանակում է այն, ինչ լավ է գյուղատնտեսության համար, վնասակարն այն է, ինչ վնաս է հասցնում գյուղատնտեսությանը (Գուանցի):

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

Բարեգործ կառավարում՝ նշանակում է անել այն, ինչ բխում է ողջ ժողովրդի շահերից, և վերացնել ընդհանուր չարիքները (Մոցի):

Թե՛ Շանի Թան արքան, թե՛ Ջոուի Ու արքան հետևում էին այս սկզբունքին. խթանել այն, ինչ օգտակար է բոլորի համար, և վերացնել այն, ինչ վնասում է բոլորին: Սա է պատճառը, որ նրանց ժողովուրդները հավատարիմ էին նրանց (Սունցի):

Ամենագործություն

սյունհուն 雄浑

Այս եզրույթը, որը բառացի նշանակում է իշխանություն և ճոխություն, վերաբերում է բնական և հզոր գեղարվեստական ոճին ու գեղագիտական ճաշակին: Գաոսիզմի տեսանկյունից՝ ճանապարհը բնության մեծ ուժն է. այստեղից էլ առաջացել է եզրույթը: Հեղինակը միտումնավոր չի ստեղծում այն: Ավելին, այն գեղարվեստական արտահայտության փառահեղ, հզոր ոճ է, որը, բնականաբար, բխում է արվեստի գործի ներքին ուժից: Այն չի կարող ձեռք բերվել արհեստականորեն և մեծապես կապված է հեղինակի հակումների և ինքնագարգացման հետ: Այսպիսի ստեղծագործությունն ունի հզոր ոճ բառամթերքի, շարահյուսական կառուցվածքի կամ պատկերային ներկայացման տեսանկյունից: Լիարժեք արտահայտելով հեղինակի զգացմունքները՝ այն թողնում է հզոր գեղարվեստական ազդեցություն:

Մեջբերումներ 引例

Վիթխարի արտաքինը Գաոյի արտաքին դրսևորումն է, իսկ ճշմարիտ կենսական ուժն ինքնին ներթափանցում է այդ արտաքինի մեջ: Վերադառնալով հանդարտ դատարկության վիճակին՝ մարդը դարձյալ զգում է, որ լիարժեք է, կու-

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

տակում է ներքին ուժ և ստեղծում հզոր գործեր (Սիկուն Թու. «Պոեզիայի քասնչորս ոճ»):

Ամենագործությունն անհաղթահարելի ուժ և կենսական էներգիայի անբաժանելի զանգված է (Յան Թինջի. «Սիկուն Թուի պոեզիայի քասնչորս ոճերի մակերեսային մեկնաբանություն»):

Սուն (քամի)

սուն 巽

Սունը (քամի) ութ եռագրերից մեկն է, որը ներկայացված է այս նշանով` ☴: Այն նաև 64 հեքսագրամներից մեկն է, որը կազմված է երկու տրիգրամից և ունի հետևյալ տեսքը` ☴☴: Ութ-եռագրամային համակարգում այն խորհրդանշում է քամին: Քամին փչում է ու մեղմորեն տարածվում ամեն ինչի վրա: Եզրույթը կազմված է մեկ բեկված և երկու չբեկված գծերից: Այն համարվում է *իւ* տրիգրամ և խորհրդանշում է կնոջը: Քանի որ բեկված գիծն ընկնում է երկու ամբողջական գծի հիմքում, այն համարվում է ավագ *իւ* տրիգրամ ու նշանակում է ընտանիքի ավագ դուստր:

Մեջբերումներ 引例

Սուն նշանակում է թափանցել ամեն ինչի մեջ («Փոփոխությունների գիրքը»):

Սուն նշանակում է մեղմ քամի: Կառավարիչը պետք է հրամաններ տարածի ու մեղմորեն կառավարի («Փոփոխությունների գիրքը»):

Խոսիր ըստ էության, գործիր հաստատակամորեն

յան յոու ու, սին յոու հեն 言有物，行有恒

Այն, ինչի մասին մարդը խոսում կամ գրում է, պետք է ու-

նենա ամուր հիմք ու էություն. լեզուն և բառերը, որ նա օգտագործում է, պետք է համապատասխանեն իրական համատեքստին: Հիպերբոլը, չափազանցությունը կամ կեղծիքը պետք է հակադրվեն: Որևէ գործ անելիս պետք լինել հաստատական և կենտրոնացած, խոսքում՝ սկզբունքային ու պատվարժան: Պետք է դիմանալ՝ մինչ նպատակն իրականանա, ու երբեք չնահանջել կես ճանապարհից: Այս եզրույթը նաև նշանակում է, որ պետք է որդեգրել իրատեսական մոտեցում, ձգտել ճշմարտության և բարի գործեր անել:

Մեջբերում 引例.

Առաքինի մարդը պետք է խոսի ըստ էության և գործի հաստատականորեն (*«Փոփոխությունների գիրքը»*):

Կարմա յե 業

Այս եզրույթն ընդհանրապես ցույց է տալիս ցանկացած վարքագիծ, որը հետագայում կարող է թողնել որոշակի ազդեցություն: Նման վարքագիծը լինում է երեք տեսակ՝ նյութական, խոսքային և մտավոր: Բաժանումը համապատասխանաբար վերաբերում է մարմնի, խոսքի ու մտքի վարքագծին: Բոլորն էլ կարող են արդյունք տալ լավ, վատ կամ միջին արդյունք: Հետևաբար, ինչ վերաբերում է նրանց արժեքին, կարելի է տարբերակել օգտակար գործողություն, չարիք և այն, ինչ չի կարող բերել ոչ բարիք, ոչ չարիք: Բուդդիզմի վերամարմնավորման գաղափարում նախորդ կյանքում մարդու վարքագիծը վճռում է հաջորդ աշխարհում նրա գոյության ձևը: Դրա պատճառով անկախ նրանից՝ մարդն իրագործում է իր նպատակը, թե՛ ոչ, ցանկալի արդյունքին հասնելու համար խիստ կարևոր է վերահսկել սեփական երեք գործողությունները՝ մարմնական, խոսքային և մտավոր:

Մեջբերում 引例

Ուսյալ և ազնիվ աշակերտներն այլևս չեն կարող կատարել մարմնական, խոսքային կամ մտավոր գործողություն, և չեն հասնի չարիք բերող հանգրվաններից որևէ մեկին: Նույնիսկ անփույթ ու անխոհեմ՝ ազնիվ աշակերտները միանշանակ կզնան *սամբողիի* (կատարյալ լուսավորություն) ճանապարհով, ուստի նրանք գնում են մարդկային աշխարհ և երկինք գոյության յոթ ձևերով և վերջ են դնում տառապանքին («*Տարբեր կանոնիկ տեքստեր*»):

Ռազմական գործողությունները նման են ցանելուն, լավ կառավարումը՝ սերմի յի ու ուեյ ջի, յի ուեյ ուեյ ջուն 以武为植, 以文为种

Ձինված հակամարտությունների դեպքում զինվորական գործողությունները միայն լրացնում են լավ կառավարմանը, որը միասնության և կառավարման հիմքն է: Ու՝ նշանակում է *զինված* (武) ուժ կամ ռազմական միջոցներ, իսկ *ուեյ* (文) նշանակում է բարեգործ կառավարում և բարոյախոսություն: Գաղափարն առաջին անգամ առաջարկվել է Պատերազմող պետությունների շրջանի ռազմագետ Յուլիաոցիի կողմից: Ըստ նրա՝ թե որքան լավ կաճի բույսը, կախված է ավելի շատ սերմի որակից, քան գյուղացու հմտություններից ու խնամքից: Նա այս համաբանությունն օգտագործում էր ռազմական ուժի և լավ կառավարման հարաբերությունը ներկայացնելու համար, ինչը կարևոր է պետությունը միավորելու և կառավարելու համար: Հնագանդ բնակչության երկարատև և խաղաղ կառավարում հնարավոր է, եթե կառավարիչը լինի բարեգործ և կիրթ, իսկ ռազմական միջոցներն օգտագործվեն միայն որպես լրացում: Սա քաղաքականության և ռազմական գործի հարաբերության հնագույն նկարագրություններից է. բանակը մշտապես ենթարկվում և ծառայում է քաղաքականությանը:

Չինական մտքի և սշակույթի հիմնական հասկացություններ

Մեջբերում 引例

Ինչ վերաբերում է ռազմական գործին, այն նման է բույս տնկելուն, իսկ բարեգործ կառավարումը՝ սերմի: Առաջինը լրացնող է, երկրորդը՝ էական: Ովքեր հասկանում են այս հարաբերությունը, հասկանում են հաղթանակի կամ պարտության պատճառը (Յուլիանոս):

**Կարգավորել հարցերն ըստ բարոյականության
և արդարության
յի յի ջի շի 以义制事**

Գործել բարոյականության և արդարության հիման վրա՝ նշանակում է կարգավորել խոշոր քաղաքական և ռազմական հարցերը ըստ բարոյականության և արդարության սկզբունքների: Հին չինական քաղաքական դիսկուրսում ճիշտ չէր ենթադրել, որ իշխանությունը կարող է գործադրվել կամայականորեն: Հակառակը, ակնկալվում էր, որ իշխանության ստեղծման համար պետք է լինի օրինական հիմք, և որ այն պետք է իրագործվի բարոյական պատվիրանների համաձայն: Հին չինացիները մշտապես մեծ կարևորություն էին տալիս այս կետին: Բարոյականությունն ու արդարությունն ավելի հզոր էին, քան իշխանությունը. այդպիսին էր քաղաքական մթնոլորտը, որը բարձր էր գնահատվում:

Մեջբերում 引例

Կառավարիչը պետք է ջանք գործադրի մարդկանց շրջանում բարձր բարոյական չափանիշներ խրախուսելու և ճիշտ ճանապարհ ցույց տալու համար. նա պետք է պետական գործերը կազմակերպի ըստ բարոյական պատվիրանների և ուղղորդի ժողովրդի մտածողությունն ըստ էթիկայի կանոնների, որպեսզի հարուստ ժառանգություն թողնի նրանց, ովքեր գալու են իրենից հետո («Պատմության գիրքը»):

Մեկնաբանելով ստեղծագործությունը սեփական տեսանկյունից
յի յի նի ջի 以意逆志

Այս եզրույթը ներկայացնում է գրական ստեղծագործություն կարդալիս այն սեփական տեսանկյունից հասկանալու մոտեցումը: Առաջարկվել է Պատերազմող պետությունների շրջանի մտածող Մենցիուսի կողմից (մթա. 372-289), երբ նա խոսում էր, թե ինչպես ճիշտ հասկանալ «Երգերի գիրքը»: Հետագայում գաղափարը մեծ տարածում գտավ, ներթափանցեց հերմենևտիկայի ոլորտ և սկսեց լայնորեն կիրառվել պոեզիայի և բոլոր այլ գրական ստեղծագործությունների համար: Այն ընդգծում է, որ գրական երկեր կարդալիս ընթերցողները պետք է ակտիվացնեն իրենց անհատական փորձն ու մտածողությունը, որպեսզի ընկալեն կամ ենթադրեն այն զգացողությունները, որ հեղինակները փորձում են հաղորդել իրենց ստեղծագործության միջոցով՝ հասկանալով դրա բովանդակությունն ու հիմնական թեմաները: Հին չինական գրաքննադատության մեջ այս տեսակետը վերածվել է գեղարվեստական գնահատման տեսության:

Մեջբերում 引例

Բանաստեղծություն կարդալիս չպետք է սահմանափակվել ոչ բառերով (հնարավոր է՝ սխալ կարդաս տողերը), և ոչ էլ տողերով (հնարավոր է՝ սխալ ընկալես հիմնական իմաստը): Միայն սեփական փորձի միջոցով բանաստեղծի մտադրությունն իմանալով կարելի է պատշաճ կերպով գնահատել բանաստեղծությունը (Մենցիուս):

Արդարությունը բերում է հարստություն, իսկ այն հարստացնում է մարդկանց
յի յի շեն լի, լի յի ֆեն մին 义以生利, 利以丰民

Կառավարիչը պետք է հարստություն ստեղծի արդարու-

թյան և օրենքներին համապատասխան, ապա այդ հարստությունն օգտագործի, որպեսզի մարդիկ բարգավաճեն: *Ի* (义) հիմնականում նշանակում է արդարամտություն, բայց ընկալվում է նաև որպես պատշաճություն և օրենքներ: *Շենլի* (生利) նշանակում է հարստություն և շահույթ ստեղծել: *Ֆենմին* (丰民) նշանակում է հարստացնել մարդկանց, այն է՝ կառավարիչը պետք է վստահեցնի, որ ենթարկվում է արդարությանը և օրենքներին, բարիք բերի մարդկանց և բարելավի կենսապայմանները: Սա «արդարությունը հարստություն է բերում» և «մարդկանց ապահովել հարստությամբ» գաղափարների համադրությունն է:

Մեջբերում 引例

Մարդկանց պետք է ինքնիշխան կառավարիչ, որովհետև նրանք ցանկանում են, որ կառավարիչը սահմանի արդարություն և օրենքներ: Նա պետք է հարստություն ստեղծի ըստ արդարության և օրենքների, ապա օգտագործի այդ հարստությունը՝ ի բարօրություն մարդկանց (*«Պեկությունների կառավարման դիսկուրսներ»*):

Ժամանակի ընթացքում ամեն ինչ աճում կամ թառամում է յուշի-սյաոսի 与时消息

Ամեն ինչ աճում կամ թառամում է ժամանակի ընթացքում, առաջընթաց կամ հետընթաց ապրում, երբ փոխվում են հանգամանքները: Հին չինացիները հավատում էին, որ աշխարհը զարգացել է ժամանակի հետ, ամեն ինչ ենթարկվել է փոփոխության, և մարդիկ պետք է գործեն հանգամանքներին համապատասխան: Նրանք շեշտում էին, որ մարդը պետք է հետևի Երկնային ճանապարհին և քայլի ժամանակի հետ համընթաց:

Մեջբերում 引例

Երբ արևը հասնում է միջօրեին, սկսում է մայր մտնել, իսկ լիալուսինը սկսում է փոքրանալ: Երկինքն ու երկիրը հասնում են լիության ու դատարկության վիճակի և ժամանակի հետ աճում ու նվազում են: Նույնը վերաբերում է մարդկանց: Ինչպես նաև՝ հոգիներին ու աստվածներին («Փոփոխությունների գիրքը»):

**Ուժեղ բանակը կախված է բարեկեցիկ բնակչությունից
յու ցիան բին ջե, ու ֆու ցի մին 欲强兵者, 务富其民**

Ուժեղ բանակ ունենալու համար երկիրը պետք է ունենա բարգավաճ բնակչություն: Այլ կերպ ասած՝ բարգավաճող մարդիկ ռազմական ուժի հիմքն ու նախապայմանն են: Բարեկեցություն նշանակում է, որ պետության զանձարանը լի է, ուստի ռազմական պաշարները երաշխավորված են: Եթե ժողովուրդն ապրի լավ կյանքով, կլինեն մեծ ընտանիքներ, և բանակի համար տղամարդկանց քանակն ապահովված կլինի: Եթե հասարակությունը բարեկեցիկ է, բնակչությունը գոհ է և աջակցում է ազգային ռազմական քաղաքականությանն ու որոշումներին: Արտահայտությունը ցույց է տալիս, որ բնակչության և ռազմական ուժերի միջև սերտաճումն ուղիղ կապ ունի «ժողովուրդը ազգի հիմքն է» գաղափարի հետ:

Մեջբերում 引例

Որպեսզի ազգն ուժեղ լինի, ընդլայնիր սահմաններդ. բանակն ուժեղացնելու համար հարստացրու ժողովրդին: Եթե ուզում ես բոլորին ստիպել ընդունել քո իշխանությունը, կառավարիլ բարեգործությամբ: Եթե այս երեք նպատակներն իրագործվեն, երկնքի տակ ամեն ինչ բնական ճանապարհով քոնը կլինի («Պատերազմող պետությունների ռազմավարությունը»):

**Հետևելով Ռու միջօրեականին, ինչպես օրենքի
յուան դու յի ուեյ լին 缘督以为经**

Արտահայտությունը նշանակում է հետևել բնական միջօրեականին՝ ինչպես կայուն օրենքի: Սա ծագել է Ջուանցիի «Կյանքը սնելու մասին» ստեղծագործությունից: *Ռու* (督) այստեղ վերաբերում է մարդու ողնաշարով անցնող զենիթին, որը կենտրոնական է, բայց չունի ձև: Ջուանցի (մթա. 369?-286) պնդում էր, որ բնական երևույթները կառավարող օրենքներն ունեն նույն բնութագիրը: Նա այն տարբերակում էր նեղմիտ ու պայմանական բարոյական օրենքներից: «Հետևել Ռու միջօրեականին, ինչպես օրենքի»՝ նշանակում է հետևել բնական օրենքին, որն արդար է ու անտեսանելի, և մարդուն թույլ է տալիս անցնել երկնքի տակ ամեն ինչի միջով՝ առանց դրանց հակադրվելու:

Մեջբերում 引例

Բնական միջօրեականին որպես ընդհանուր օրենքի հետևելով՝ մարդը լավ հոգ կտանի իր առողջության, կյանքի և ընտանիքի անդամների մասին և կապրի երկար (Ջուանցի):

**Հանգ / Հմայք
յուն 韵**

Եզրույթն ունի երկու իմաստ: Նախ, որպես ոճական եզրույթ՝ գրականության մեջ այն ներկայացնում է նրբագեղ, հարմոնիկ և մեղեդային հնչյունների համադրություն: Հանգն ի սկզբանե չինարեն տառանշանների ճիշտ հնչյունաբանությանը նպաստող գործոններից մեկն էր: Հանգը կարևոր է պոեզիայի, այդ թվում և՛ *ցի* պոեզիայի, և՛ չափածո բալլադների համար: Այսպիսի ստեղծագործություններում կարևոր է,

Քե որտեղ է բանաստեղծական տողի հանգը՝ անկախ նրանից՝ հանգերը ճիշտ են համընկնում, թե՛ ոչ: Կարևոր են նաև հանգերի ներդաշնակ տարբերությունները, որոնք ցույց են տալիս չինարենի ռիթմիկ գեղեցկությունը: Երկրորդ, որպես գրական եզրույթ, այն նշանակում է հմայք, բնական սահունություն և նրբագեղ պարզություն: Այն հաճախ կիրառվում է այլ չինական տառանշանների հետ և նշանակում է ակնհայտ հմայք, նրբագեղություն կամ ստեղծագործական գունեղություն: Նրբագեղությունը լայնորեն կիրառվում էր նկարչության, վայելչագրության և երաժշտական կոմպոզիցիայի մասին մեկնաբանություններում: Գրավչությունն ու գունեղությունն այն աննկարագրելի հմայքն են, որ բխում է գեղարվեստական ստեղծագործությունից, բայց առաջինն ավելի շատ ներկայացնում է այնպիսի գաղափարներ, ինչպիսիք են ստեղծագործությունների նրբությունը, ներիմաստները, նրբագեղությունն ու բնական հոսքը:

Մեջբերումներ 引例

Գոյություն ունի նկարչության վեց օրենք. նկարը պետք է օժտված լինի կենսունակությամբ ու գեղարվեստական հմայքով. նկարչական վրձինը պետք է օգտագործվի այնպես, որ վրձնահարվածները լինեն բնական. նկարված պատկերը պետք է համապատասխանի պատկերվող առարկայի արտաքինին, գունավորումը պետք է համապատասխանի պատկերված առարկայի հատկություններին, նկարը պետք է ունենա ճիշտ կառուցվածք, որպեսզի թողնի ընդհանուր տեսողական էֆեկտ, իսկ անցյալի նկարիչների գլուխգործոցները պետք է կրկնօրինակվեն, որպեսզի դրանցից ներշնչանք ստանանք (Սիե Հե. «Չին նկարների գնահատում»):

Երբ առաջին անգամ կարդացի Թաո Յուանմինի բանաստեղծությունները, ինձ թվաց, որ ձանձրալի են: Միայն փոքրինչ ավելի խորությամբ կարդալուց հետո հայտնաբերեցի

Չինական մտքի եւ սշակույթի հինական հասկացություններ

դրանց հմայքը: Մեծ տարիքում Սու Շին ամենից շատ սիրում էր Թաոյի բանաստեղծությունները և հավատացած էր, որ նույնիսկ Լի Բայը կամ Դու Ֆուն չեն կարող համեմատվել նրա հետ: Թաոյի բանաստեղծություններում նրան գրավում էր հմայքը (Չեն Շան. «*Խիզախ մեկնաբանություններ գրականության մասին*»):

Հնագույն ժողովուրդների բանաստեղծությունները կարդալիս պետք է ուսումնասիրել նրանց ոգին ու հմայքը: Ոգին բանաստեղծի խարիզման է, իսկ հմայքն արտացոլում է նրա ոճն ու վայելչությունը: Սա նման է հրաշալի ծաղկով հիանալուն, երբ հասկանում ես, որ գեղեցկությունը պայմանավորված չէ միայն գույնով կամ ձևով (Ֆան Դունշու. «*Մեկնաբանություններ դասական պոեզիայի արժանիքների ու թերությունների մասին*»):

Չեն (Թրթիռ, տատանում)

ջեն 震

Չենը ութ եռագրերից մեկն է: Դիագրամն ունի հետևյալ տեսքը` ☳: Այն նաև 64 հեքսագրամներից մեկն է և կազմված է երկու տրիգրամից` ☳☳: Ութ տրիգրամային համակարգում սա հիմնականում նշանակում է ամպրոպ, որի հարվածից ամեն ինչ ցնցվում է: Հետևաբար, այն նշանակում է թրթռոց, ազդակ կամ մոբիլիզացիա: Մեկ ամբողջական և երկու բեկված գծից բաղկացած այս տառանշանը յան տրիգրամ է, որը մարդկային հարաբերություններում խորհրդանշում է տղամարդուն: Քանի որ ամբողջական գիծն այս տրիգրամի ներքևում է, այն խորհրդանշում է ընտանիքի ավագ որդուն:

Մեջբերումներ 引例

Չեն նշանակում է թրթռոց, ազդակ կամ մոբիլիզացիա («*Փոփոխությունների գիրքը*»):

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

Կրկնվող ամպրոպը թրթռոց է առաջացնում: Այդ հարվածի վախից մարդը մշտապես պետք է զբաղվի ինքնազարգացմամբ («Փոփոխությունների գիրքը»):

Արդարություն ջենյի 正義

Հնում այս եզրույթն ուներ երկու իմաստ: Առաջին, այն վերաբերում էր ճշգրտությանը կամ ուղղափառությանը, հատկապես հնագույն դասականների մեկնաբանության մեջ: Եզրույթը հաճախ օգտագործվում էր՝ որպես գրքի վերնագրի մաս, օրինակ, «Հինգ դասականների ճիշտ մեկնաբանություն»: Երկրորդ, այն վերաբերում էր արդարության սկզբունքներին, որոնք ընդունված ու ճշմարիտ էին ողջ աշխարհում: Արդի ժամանակներում գերիշխում է երկրորդ իմաստը: Այսօր այն դարձել է չինական հասարակության առանցքային արժեքներից մեկը:

Մեջբերում 引例

Գործել՝ ելնելով սեփական շահից, կոչվում է բիզնես: Գործել՝ ելնելով արդարությունից, կոչվում է առաքինություն (Մունցի):

Կառավարումը պետք է օգուտ բերի մարդկանց ջի գուո յոու չան, լի մին ուեյ բեն 制国有常, 利民为本

Երկրի կառավարման հիմքում ընկած անփոփոխ սկզբունքն այն է, որ այն պետք է օգուտ բերի ժողովրդին: Այստեղ «երկրի կառավարումը» վերաբերում է կառավարման ու քաղաքականության համակարգեր սահմանելուն և հրամանագրեր հաստատելուն, իսկ «ժողովրդին բարիք բերել»՝ նշանակում է պաշտպանել ժողովրդի շահերը և անել այն,

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ինչ լավագույնն է նրա համար: Սա «ժողովուրդն առաջին տեղում է» ավանդական չինական գաղափարի մեկ այլ արտահայտություն է: Այսօր այն ավելին է, քան մարդկանց ամեն ինչից բարձր դասելու և ավելի լավ կյանքի նրանց ցանկությունները բավարարելու գաղափարները:

Մեջբերում 引例

Պետության կառավարման անփոփոխ սկզբունքն է՝ ապահովել, որ բոլոր համակարգերի ու կառավարության հրամանագրերի նպատակը լինի ժողովրդին օգուտ բերելը: Կառավարման առաջին օրենքն է՝ երաշխավորել, որ հրամանագրերը հաջողությամբ իրականացվեն (*«Պատերազմող պետությունների ռազմավարությունը»*):

Պահպանելով ժողովրդի կենսապայմանները ջի մին ջի չան 制民之产

Արտահայտությունը նշանակում է՝ անվտանգ կենսապայմաններ ապահովել ժողովրդի համար. կառավարման այս պահանջն առաջարկել է Մենցիուսը (մթա. 372-289), ով հավատացած էր, որ եթե սովորական մարդիկ չունենան կայուն եկամուտ ու չկարողանան պահպանել իրենց գոյությունը, հանուն գոյատևման կշեղվեն բարոյական ուղուց: Կառավարիչները, հետևաբար, պետք է հասարակ մարդկանց ապահովեն առօրյա կյանքի համար անհրաժեշտ միջոցներով: «Պահպանել ժողովրդի կենսապայմանները» հիմք ու նախադրյալ է կառավարիչների համար, ովքեր ցանկանում են բարոյապես դաստիարակել ժողովրդին:

Մեջբերում 引例

Մենցիուսն ասաց. «Միայն կրթված մարդիկ են ի գորու առանց անհրաժեշտ կենսապայմանների առկայության

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

պահպանել բարոյական չափանիշները: Ինչ վերաբերում է հասարակ մարդկանց, առանց դրա նրանք չեն կարող հետևել բարոյական չափանիշներին: Այս դեպքում նրանք կանգ չեն առնի որևէ բանի առաջ՝ ինքնուրացում, բարոյական շեղում, արատավորություն և վայրի օրենքներ: Եթե այս ամենի արդյունքում հանցանք գործեն, նրանց պատժելը ծուղակ կլինի: Իսկ ի՞նչ պետք է անի բարեգործ կառավարիչը: Նա կկարգավորի ժողովրդի կենսապայմանները, որպեսզի վստահ լինի, որ նրանք ունեն բավարար ռեսուրսներ՝ ծնողների մասին հոգալու, կանանց ու երեխաներին աջակցելու համար, որպեսզի լավ ժամանակներում մշտապես գոհ լինեն, իսկ ծանր ժամանակներում զերծ մնան սովամահ լինելու վտանգից: Սրանից հետո կարող է նրանց ուղղորդել անել այն, ինչ բարի է, և այս դեպքում ժողովուրդը պատրաստակամորեն կհետևի նրան (*«Մենցիուս»*):

**Իմաստուն եղիր մտքով և գործիր ինչպես հարկն է
ջի յուան սին ֆան 智圓行方**

Եզրույթը նկարագրում է իմաստուն և պատշաճ գործող մարդուն: Նա ունի բազմակողմանի գիտելիքներ, նրբանկատ է, հարցեր լուծելիս ճկուն է և գիտի, որ գործում է սոցիալական նորմերի և էթիկայի օրենքներին համապատասխան: Մարդու այս տեսակը երբեք չի դիմում չարդարացված ռիսկի, բայց և ծուլորեն չի հետևում կյանքի հոսանքին: Հին չինացիները մեծ հարգանք էին տաժում մարդու հանդեպ, ով գիտի մեկտեղել գիտելիքն ու գործողությունը, տաղանդն ու առաքիհնությունը, ճկունությունն ու սկզբունքները:

Մեջբերում 引例

Մարդու հիմնական սոցիալական պահանջներն են՝ սառը դատողություն, բարձր ձգտումներ, բազմակողմանի գիտելիք և պատշաճ վարքագիծ... Նա պետք է իմանա ամեն ինչ՝ ինչ անել և ինչ չանել (Ուենցի):

Միջին ճանապարհը
ջունդաո 中道

Միջին ճանապարհը դրսևորում է անկողմնակալության սկզբունքը: Հին չինացիները հավատում էին, որ տիեզերքում ամեն ինչի գոյությունն ու փոփոխությունները ենթարկվում են մեկ հիմնական օրենքի, որը դրսևորվում է մարդու գործողությունների և վարքագծի միջոցով: Սա Միջին ճանապարհն է: Մարդիկ պետք է համապատասխանեն դրան թե՛ խոսքով, թե՛ գործողություններով: Ըստ կոնֆուցիական գիտնականների՝ դրան կարելի է հասնել, եթե խուսափես ավելորդ, ինչպես նաև ոչ տեղին խոսքից ու գործողություններից՝ այդպիսով հասնելով անբասիր բարոյականության վիճակի: Բուդդիստները պաշտպանում են Միջին ճանապարհի պրակտիկան, որը խրախուսում է ամեն ինչ տեսնել ճշմարիտ լույսի ներքո և ազատվել մարդկային տառապանքից: Մտքի տարբեր դպրոցներ և կրոնական ուղղություններ տարբերվում են այս գաղափարի հատուկ բովանդակության ընկալմամբ:

Մեջբերումներ 引例

Մենցիուսը մեկնաբանում էր. «Կոնֆուցիոսն ասում էր. «Եթե չես կարող ընկերանալ նրանց հետ, ովքեր հավատարիմ են Միջին ճանապարհին, զոնե մոտ եղիր տենչող կամ ազատ մտքերին: Առաջինն ունի բարձր նպատակներ, իսկ երկրորդը երբեք չի խախտում բարոյական օրենքները»: Արդյո՞ք Կոնֆուցիուսը չէր ցանկանում ընկերանալ մարդկանց հետ, ովքեր հետևում են այս սկզբունքին: Միջին ճանապարհին հավատարիմ մարդ գտնելը հեշտ չէ. գուցե դա է պատճառը, որ նա ձգտում էր հանդիպել ավելի ցածր կարգավիճակ ունեցողներին» (Մենցիուս):

Մի՛ ձգտեք ֆիզիկական հաճույքների, քանզի դրանք ցածր են ու հատուկ են հասարակ մարդկանց: Մի՛ ձգտեք ճգ-

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

նավորության միայն ձեզ համար: Սուրբ մարդիկ չեն դիմում ծայրահեղ տառապանքի: Այն չի բերում սպասված արդյունք: Միայն ծայրահեղություններից խուսափելու և միջինն ընտրելու դեպքում կարելի է հասնել կենտրոնացման՝ այդպիսով հայտնվելով իմաստության, խաղաղ մտքի, արթնացման ու նիրվանայի ճանապարհին (*«Միջին երկարության կանոնիկ տեքստեր»*):

**Միասնությունն ուժ է
ջունջի-չենչեն 众志成城**

Եզրույթը բառացի նշանակում է «միավորվելու դեպքում ամուր կլինենք, ինչպես ամրոցը»: Կենտրոնացված ջանքերի դեպքում մարդիկ համատեղ կարող են հսկայական ուժ ստեղծել և հաղթահարել բոլոր դժվարությունները: *Չին*՝ երկրորդ տառանշանը, նշանակում է կամք, իսկ *չենը*՝ վերջին տառանշանը, նշանակում է ամրոցի պատ: Ամբողջ եզրույթը ենթադրում է երեք ամենակարևոր տարրերը՝ 1. մարդկային կարողության գործունը, 2. մարդկային ոգին ու քաջությունը և 3. ժողովրդի միասնությունը:

Մեջբերումներ 引例

Եթե միավորվենք որպես մեկ ամբողջություն՝ ամրոցի պես ամուր կլինենք: Եթե խոսենք մեկ ձայնով, կկարողանանք մետաղ ձուլել (*«Պեպրությունների կառավարման դիսկուրսներ»*):

Երբ բոլորը մեկ մարդու պես միավորվեն, խաղաղությունը կտիրի ողջ երկրում (Հե Գուանյուան. *«Խրատրական անեկդոտների ժողովածու»*):

Ջուանցին երագում է թիթեռնիկ դառնալ
Ջուան Ջոու մեն դիե 庄周梦蝶

Ջուանցին (ուժ նաև անվանում են Ջուան Ջոու, մթա. 369?-286) երագում էր թիթեռնիկ դառնալու մասին: Պատմությունը ներառված է դասական «Ջուանցիի» «Ամեն ինչ հավասար տեսնելու մասին» գլխում: Ջուանցին երագում էր թիթեռնիկ դառնալու մասին, բայց արթնացավ ու հայտնաբերեց, որ ոչինչ չի փոխվել: Իրականում վստահ չէր՝ ի՞նքն է երագել թիթեռնիկ դառնալ, թե՞ թիթեռնիկն է երագել Ջուանցի դառնալ: Ջուանցին իր երագով հիշեցնում էր մարդկանց, որ հարաբերական տարբերություն կա քո և ուրիշերի, երագելու և արթնության ու առհասարակ ամեն ինչի միջև: Սակայն այս սահմանները բացարձակ չեն և կարող են խախտվել: Ամեն ինչ մշտական փոփոխության և շրջանառության մեջ է. նա այս երևույթը կոչում էր «իրերի կերպափոխում» (物化 ուիու):

Մեջբերում 引例

Մի անգամ երագ տեսա, որ դարձել եմ թռչող թիթեռնիկ, երջանիկ եմ ու անում եմ, ինչ սիրտս է ուզում: Մոռացել էի, որ Ջուանցին եմ: Հանկարծ արթնացա ու հասկացա, որ դարձյալ Ջուանցին եմ: Չգիտեի՝ Ջուանցի՞ն էր երագում թիթեռնիկ դառնալ, թե՞ թիթեռնիկն է երագել Ջուանցի դառնալ: Այս երկու երևույթների միջև տարբերություն կա, որը կոչում եմ «իրերի կերպափոխում» (Ջուանցի):

Մեծարիր առաքինի էությունը
ցուն դեսին 尊德性

Այս արտահայտությունը, որն առաջին անգամ ի հայտ է գալիս «Ոսկե միջինի դոկտրինում», վերաբերում է երկնքի կողմից մարդ արարածներին շնորհված առաքինի էության

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ

մեծարմանը: Գիտելիքի ձգտման հետ մեկտեղ այն կազմում է էթիկական չափանիշ: Ըստ «Ոսկե միջինի դոկտրինի»՝ բնությունը բոլորին շնորհում է երկնային առաքինություն: Հետագա սերունդների գիտնականներն էլ ավելի զարգացրին գաղափարը՝ առաջարկելով, որ մարդուն ներհատուկ էությունն ըստ էության մարդկային էության մեջ երկնային օրենքի արտացոլումն է: Պետք է մեծարել և լիարժեք արտահայտել ներքին առաքինի էությունը՝ երկնային օրենքին համապատասխանելու և առաքինությունն ամբողջությամբ իրագործելու համար:

Մեջբերում 引例

Հետևաբար, ազնվականը պետք է հարգի մարդկանց առաքինի էությունը և մշտապես ձգտի գիտելիք ձեռք բերել: Այսպես կունենա լայն, բազմակողմանի ու խոր գիտելիքներ, հասնել կատարելության և պահպանել Միջինի դոկտրինը: Կարող է նաև վերանայել անցյալում սովորածն ու նորովի ըմբռնել այն: Նա անկեղծ ու ազնիվ կլինի, եթե պահպանի ծեսերն ու էթիկայի կանոնները (*«Ոսկե միջինի դոկտրինը»*):

Հասկացությունների ցանկ 术语表

英文	中文
Աղաղակիր անարդարության դեմ	不平则鸣
Աճել և նվազել	消息
Ամենագորություն	雄浑
Ամուսնական արարողություն	婚礼
Անատման / Անանձնականություն	无我
Անհաղորդ կառավարում	静因之道
Անձնական փորձից քաղված գիտելիք	亲知
Անսահմանափակ անուն	达名
Արագագիր	草书
Արդարություն	正义
Արդարությունը բերում է հարստություն, իսկ այն հարստացնում է մարդկանց	义以生利, 利以丰民
Բարդ իրավիճակները գրողներին մղում են ստեղծել որակյալ բանաստեղծություններ	诗穷而后工
Բարեգործ կառավարում	仁政
Գեղարվեստական ներշնչանք ստացիր թե՛ ներսից, թե՛ դրսից	外师造化, 中得心源
Գիտելիք՝ բացատրությունից	说知
Գիր, որը հոսում է ջրի նման	随物赋形
Գլխարկ կրելու արարողություն	冠礼
Գործելով մարդու էության համաձայն	率性
Գրական շրջանակների հեղափոխությունը	文界革命
Գրասենյակային գիր	隶书
Գրի մեջ հակիրճությունը գնահատվում է	辞尚体要
Գրի Ունչեն դպրոցը	桐城派
Դասակարգված անուն	类名
Դուհկիա / Տառապանք	苦
Եթե երկու մարդ համամիտ լինեն, նրանց համատեղ ուժը մետաղ էլ կկոտրի	二人同心, 其利断金
Եղիր փակ, բայց ոչ մեկուսացած	比而不党
Երկու միջոց	二柄
Զենքը մահացու է. պատերազմն անբարոյական է	兵者凶器, 争者逆德
Թուն-Գուան պոեզիայի դպրոցը	同光体
Ժամանակի ընթացքում ամեն ինչ աճում կամ թառամում է	与时消息
Ժողովրդին լռեցնելն ավելի վնասակար է, քան գետ արգելափակելը	防民之口, 甚于防川
Ի խոյզ գիտելիքի	道问学
Իմաստուն եղիր մտքով և գործիր ինչպես հարկն է	智圆行方
Ինքնագրիությունը հանգեցնում է ձախողման, համեստությունը՝ հաջողության	满招损, 谦受益

Իրադարձությունների հոսքը պայմանավորված է փոխներգործությամբ	事势之流，相激使然
Իրավիճակ / Միտում	势
Լուսավորիչի անտեղակներին և ստիպիչ բռնել ճշմարիտ ուղին	蒙以养正
Լուսավորություն կրթության միջոցով	庀法之化
Խթանիչ օգտակարը, վերացրու վնասակարը	兴利除害
Խոշոր կնքագիր	大篆
Խոսիչ ըստ էության, գործիչի հաստատակամորեն	言有物，行有恒
Խոսքուզուրուցից քաղված գիտելիք	闻知
Խուսափիչ կարծրատիպերից	脱窠臼
Ծախսիչ և հարկիչ / Ծրագիր կազմելուց առաջ պետք է մանրամասն հաշվարկել ծախսերը, եթե ուզում եք եկամուտներ հավաքագրել	量出制入
Կանխատեսում / Մարզարեություն	前识
Կանոնավոր գիր	楷书
Կառավարիչը պետք է հարստացնի մարդկանց	王者富民
Կառավարիչը պետք է միավորի մարդկանց	君者善群
Կառավարումը պետք է օգուտ բերի մարդկանց	制国有常，利民为本
Կառուցվածք	结构
Կարգավորել հարցերը ըստ բարոյականության և արդարության	以义制事
Կարծա	业
Կենտրոնացիչ նրա վրա, ինչ առաջնային նշանակություն ունի դրամայում	立主脑
Համընկնող իմաստներ	格义
Հանգ / Հնայք	韵
Հանդարտ վերաբերվիչ իրականությանը	安时处顺
Հավասարակշռիչ հնարածն ու իրականությունը	审虚实
Հեղափոխություն բանաստեղծների շրջանում	诗界革命
Հետևելով Դու միջօրեականին, ինչպես օրենքի	缘督以为经
Հեքիաթասացություն (Պատմողական արվեստ)	说话
Հինգ տարրերի ցիկլը	五德终始
Հրահանգիչ միայն նրան, ով ձգտում է սովորել, սովորեցրու միայն նրան, ով ցանկանում է արտահայտվել, բայց չգիտի, թե ինչպես	不愤不启，不悱不发
Չուկը չի ապրում, եթե ջուրը չափազանց պարզ է	水至清则无鱼
Մասնավոր անուն	私名
Մեծարիչ առաքինի էությունը	尊德性
Մեկնաբանելով ստեղծագործությունը սեփական տեսանկյունից	以意逆志
Միախառնիչ զգացողություններով ու պատկերը	思与境偕
Միասնություն ներսում և ընդլայնում դրսում	睦内图外
Միասնությունն ուժ է	众志成城
Միջատագիր	虫书
Միջին ճանապարհ	中道
Մտաբերում / Արթնացում	兴
Շահ / Օգուտ	利

Ոչ մի այլասերված միտք	思无邪
Պահպանելով ժողովրդի կենսապայմանները	制民之产
Պահպանել օրենքն իշխանության միջոցով	抱法处势
Պայքարել արդար գործի համար	兵以义动
Պատկերի ստեղծում օբյեկտի նմանակման միջոցով	拟物立象
Պատշաճ կերպով կառավարիչի հարստությունն ու ճիշտ խոսիչ	理财正辞
Պատվի արժանացրու ու պատժիր նրանց, ովքեր արժանի են դրան	赏信罚必
Պոեզիան չի ենթարկվում կայուն մեկնաբանության	诗无达诂
Ջանասիրաբար աշխատիր և լավ հարաբերություններ պահպանիր այլոց հետ	敬业乐群
Ջեն (Թրթիռ, տատանում)	震
Ջուանցին երազում է թիթեռնիկ դառնալ	庄周梦蝶
Ռազմական գործողությունները նման են ցանելուն, լավ կառավարումը՝ սերմի	以武为植，以文为种
Սահմանիր գների համապատասխան մակարդակ	平准
Սամսարա / Վերածնունդ / Վերամարմնավորում	轮回
Սովորելու պատրաստակամությունը ինքնակատարելագործման հնարավորություն է տալիս	能自得师者王
Սուն դինաստիայի բանաստեղծական դրամա	宋杂剧
Սուն /քամի/	巽
Սունյատա / Դատարկություն	空
Վայելչագրության իմաստունը	书圣
Վայելչագրության հյուսիսային և հարավային դպրոցները	南北书派
Վայելչագրության ճանապարհը	书道
Վսեմությունն արվեստում	化境
Ուժ և եռանդ	风神
Ուժեղ բանակը կախված է բարեկեցիկ բնակչությունից	欲强兵者，务富其民
Ուպայա / Նպատակահարմարություն	方便
Ուսումնասիրել բոլոր երևույթների էությունը	穷理尽性
Փաստաթղթեր բամբուկի կամ փայտի վրա	书契

**Չինաստանի պատմության
հակիրճ ժամանակագրություն**

中国历史年代简表

Ճիսի դինաստիա		մթա 2070-1600
Ճիսի Շան դինաստիա		մթա 1600-1046
Չու Ջոու դինաստիա		մթա 1046-256
Չու դինաստիա	Ճիսի Չու Արևմտյան Ջոու դինաստիա	մթա 1046-771
	Ճիսի Չու Արևելյան Ջոու դինաստիա	մթա 770-256
Չի Ցի դինաստիա		մթա 221-206
Ճիսի Հան դինաստիա		մթա 206 – մթ 220
Ճիսի Հան դինաստիա	Ճիսի Հան Արևմտյան Հան դինաստիա	մթա 206-մթ 25
	Ճիսի Հան Արևելյան Հան դինաստիա	25-220
Յուան Երեք թագավորություն		220-280
Յուան Երեք թագավորություն	Յուան Վեյ թագավորություն	220-265
	Յուան Շու թագավորություն	221-263
	Յուան Ու թագավորություն	222-280
Չի Չի դինաստիա		265-420
Չի Չի դինաստիա	Ճիսի Չի Արևմտյան Չի դինաստիա	265-317
	Ճիսի Չի Արևելյան Չի դինաստիա	317-420
Յուան Նուսի Նուսի և Նուսի Նուսի դինաստիաներ		420-589

南北朝 և հյուսիսային դինաստիաներ	南朝 Հարավային դինաստիաներ		420-589
	南朝 Հարավային դինաստիաներ	宋 Սուն դինաստիա	420-479
		齐 Ցի դինաստիա	479-502
		梁 Լյան դինաստիա	502-557
		陈 Չեն դինաստիա	557-589
南北朝	北朝 Հյուսիսային դինաստիաներ		386-581
Հարավային և հյուսիսային դինաստիաներ	北朝 Հյուսիսային դինաստիաներ	北魏 Հյուսիսային Վեյ դինաստիա	386-534
		东魏 Արևելյան Վեյ դինաստիա	534-550
	北齐 Հյուսիսային Ցի դինաստիա	550-577	
	西魏 Արևմտյան Վեյ դինաստիա	535-556	
	北周 Հյուսիսային Ջոու դինաստիա	557-581	
	隋 Սույ դինաստիա		
唐 Թան դինաստիա			618-907
五代 Հինգ դինաստիաներ			907-960
五代 Հինգ դինաստիաներ	后梁 Ուշ Լյան դինաստիա		907-923
	后唐 Ուշ Թան դինաստիա		923-936
	后晋 Ուշ Չին դինաստիա		936-947
	后汉 Ուշ Հան դինաստիա		947-950
	后周 Ուշ Ջոու դինաստիա		951-960

宋 Սուն դինաստիա		960-1279
宋 Սուն դինաստիա	北宋 Հյուսիսային Սուն դինաստիա	960-1127
	南宋 Հարավային Սուն դինաստիա	1127-1279
辽 Լյաո դինաստիա		907-1125
金 Չին դինաստիա		1115-1234
元 Յուան դինաստիա		1206-1368
明 Մին դինաստիա		1368-1644
清 Ցին դինաստիա		1616-1911
中华民国 Չինաստանի Հանրապետություն		1912-1949
中华人民共和国 Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն		հիմնադրվել է 1949 թվականի հոկտեմբերի 1-ին

Քովանդակություն 目录

Հանդարտ վերաբերվիր իրականությանը	7
անշի-չուշուն 安时处顺	
Պահպանել օրենքն իշխանության միջոցով	8
բաո ֆա չու շի 抱法处势	
Եղիր փակ, բայց ոչ մեկուսացած	8
բիերբուդան 比而不党	
Պայքարել արդար գործի համար	9
բին յի յի դուն 兵以义动	
Չենքը մահացու է. պատերազմն անբարոյական է	10
բին ջե սյունցի, ջեն ջե նի դե 兵者凶器, 争者逆德	
Հրահանգիր միայն նրան, ով ձգտում է սովորել, սովորեցրու միայն նրան, ով ցանկանում է արտահայտվել, բայց չգիտի, թե ինչպես	11
բու ֆեն բու ցի, բու ֆեյ բու ֆա 不愤不启, 不悱不发	
Աղաղակիր անարդարության դեմ	12
բուփինցեմին 不平则鸣	
Արագագիր	13
ցաոշու 草书	
Միջատագիր	15
չունշու 虫书	
Գրի մեջ հակիրճությունը գնահատվում է	16
ցի շան թի յաո 辞尚体要	
Անսահմանափակ անուն	17
դամին 达名	
Խոշոր կնքագիր	17
դաջուան 大篆	
Ի խույզ գիտելիքի	19
դաո ուրնսյուե 道问学	
Երկու միջոց	19
երբին 二柄	
Եթե երկու մարդ համամիտ լինեն, նրանց համատեղ ուժը մետաղ էլ կկտրի	20
եր բեն բոն սին, ցի լի դուան ծին 二人同心, 其利断金	

Ուպայա / Նպատակահարմարություն	21
ֆանբիան 方便	
Ժողովրդին լռեցնելն ավելի վնասակար է, քան գետ արգելափակելը	22
Ֆան մին ջի քոում շեն յու ֆան չուան 防民之口, 甚于防川	
Ուժ և եռանդ	23
ֆենշեն 风神	
Համընկնող իմաստներ	25
գեյի 格义	
Գլխարկ կրելու արարողություն	26
գուանլի 冠礼	
Վսեմությունն արվեստում	27
հուածին 化境	
Ամուսնական արարողություն	28
հունլի 婚礼	
Կառուցվածք	29
ծիեգոու 结构	
Ջանասիրաբար աշխատիր և լավ հարաբերություններ պահպանիր այլոց հետ	31
ծին յե լե ցուն 敬业乐群	
Անհաղորդ կառավարում	32
ծին յին ջի դաո 静因之道	
Կառավարիչը պետք է միավորի մարդկանց	32
ջուն ջե շան չուն 君者善群	
Կանոնավոր գիր	33
քայշու 楷书	
Մունյատա / Գատարկություն	35
քուն 空	
Գուիկհա / Տառապանք	36
քու 苦	
Գասակարգված անուն	37
լեյմին 类名	
Պատշաճ կերպով կառավարիր հարստությունն ու ճիշտ խոսիր	37
լի ցայ ջեն ցի 理财正辞	

Կենտրոնացիր նրա վրա, ինչ առաջնային նշանակություն ունի դրամայում	38
լի չունաո 立主脑	
Շահ / Օգուտ	40
լի 利	
Գրասենյակային գիր	41
լիշու 隶书	
Ծախսիր և հարկիր / Ծրագիր կազմելուց առաջ պետք է մանրամասն հաշվարկել ծախսերը, եթե ուզում եք եկամուտներ հավաքագրել	43
լիանչու-ջիրու 量出制入	
Սամսարա / Վերածնունդ / Վերամարմնավորում	43
լունհույ 轮回	
Ինքնագոհությունը հանգեցնում է ձախողման, համեստությունը՝ հաջողության	44
ման ջաո սուն, ցյան շուու յի 满招损, 谦受益	
Լուսավորիչ անտեղյակներին և ստիպիր բռնել ճշմարիտ ուղին	45
մեն յի յան ջեն 蒙以养正	
Միասնություն ներսում և ընդլայնում դրսում	46
մու նեյ թու ուայ 睦内图外	
Վայելչագրության հյուսիսային և հարավային դպրոցները	46
նան-բեյ շուփայ 南北书派	
Սովորելու պատրաստակամությունը ինքնակատարելագործման հնարավորություն է տալիս	48
նեն ցի դե շի ջե ուան 能自得师者王	
Պատկերի ստեղծում օբյեկտի նմանակման միջոցով ...	49
նի ու լի սյան 拟物立象	
Սահմանիր զների համապատասխան մակարդակ	50
փինջուն 平准	
Կանխատեսում / Մարզարեություն	51
ցյանշի 前识	
Անձնական փորձից քաղված գիտելիք	52
ցինջի 亲知	

Ուսումնասիրել բոլոր երևույթների էությունը	53
ցյունլի-ձինսին 穷理尽性	
Բարեգործ կառավարում	54
րենչեն 仁政	
Պատվի արժանացրու ու պատժիր նրանց, ովքեր արժանի են դրան	55
շան սին ֆա բի 赏信罚必	
Հավասարակշռիր հնարածն ու իրականությունը	56
շեն սյուշի 审虚实	
Լուսավորություն կրթության միջոցով	57
շի ֆա ջի հուա 庠法之化	
Հեղափոխություն բանաստեղծների շրջանում	58
շիցիե-գեմին 诗界革命	
Բարդ իրավիճակները գրողներին մղում են ստեղծել որակյալ բանաստեղծություններ	60
շի ցյուն էրհուու գոն 诗穷而后工	
Պոեզիան չի ենթարկվում կայուն մեկնաբանության	61
շի ու դա գու 诗无达诂	
Իրավիճակ / Միտում	63
շի 势	
Իրադարձությունների հոսքը պայմանավորված է փոխներգործությամբ	65
շի շի ջի լիու, սյան ծի շի րան 事势之流, 相激使然	
Վայելչագրության ճանապարհը	65
շուդաո 书道	
Փաստաթղթեր բամբուկի կամ փայտի վրա	67
շուցի 书契	
Վայելչագրության իմաստունը	68
շուշեն 书圣	
Գործելով մարդու էության համաձայն	70
շուայսին 率性	
Չուկը չի ապրում, եթե ջուրը չափազանց պարզ է	70
շույ ջի ցին ցե ու յու 水至清则无鱼	
Հեքիաթասացություն (Պատմողական արվեստ)	71
շուտհուա 说话	

Գիտելիք՝ բացատրությունից	73
շուռջի 说知	
Մասնավոր անուն	73
սիմին 私名	
Ոչ մի ալյասերված միտք	74
սի ու սիե 思无邪	
Միախառնիր զգացողություններդ ու պատկերը	75
սի յու ծին սիե 思与境偕	
Մուն դինաստիայի բանաստեղծական դրամա	76
Սոնգաջու 宋杂剧	
Գիր, որը հոսում է ջրի նման	77
սույ ու ֆու սին 随物赋形	
Թուն-Գուան պոեզիայի դպրոցը	79
Թուն-Գուանթի 同光体	
Գրի Ունչեն դպրոցը	80
Թունչենփայ 桐城派	
Խուսափիր կարծրատիպերից	82
թուո քեծյու 脱窠臼	
Գեղարվեստական ներշնչանք ստացիր թե՛ ներսից, թե՛ դրսից	83
ուայ շի ցաոհուա, ջուն դե սինյուան 外师造化, 中得心源	
Կառավարիչը պետք է հարստացնի մարդկանց	84
ուան ջե ֆու մին 王者富民	
Գրական շրջանակների հեղափոխությունը	85
ուենծիե զեմին 文界革命	
Խոսքուզրույցից քաղված գիտելիք	87
ուենջի 闻知	
Անատման / Անանձնականություն	88
ուոու 无我	
Հինգ տարրերի ցիկլը	88
ուդե ջունշի 五德终始	
Աճել և նվազել	89
սյաոսի 消息	
Մտաբերում / Արթնացում	90
սին 兴	

Խթանի օգտակարը, վերացրու վնասակարը	92
սինլի-չուհայ 兴利除害	
Ամենագորություն	93
սյունհուն 雄浑	
Սուն (քամի)	94
սուն 巽	
Խոսիլը ըստ էության, գործիլը հաստատակամորեն	94
յան յոու ու, սին յոու հեն 言有物, 行有恒	
Կարմա	95
յե 业	
Ռազմական գործողությունները նման են ցանելուն, լավ կառավարումը՝ սերմի	96
յի ու ուեյ ջի, յի ուեն ուեյ ջուն 以武为植, 以文为种	
Կարգավորել հարցերը ըստ բարոյականության և արդարության	97
յի յի ջի ջի 以义制事	
Մեկնաբանելով ստեղծագործությունը սեփական տեսանկյունից	98
յի յի նի ջի 以意逆志	
Արդարությունը բերում է հարստություն, իսկ այն հարստացնում է մարդկանց	98
յի յի շեն լի, լի յի ֆեն մին 义以生利, 利以丰民	
Ժամանակի ընթացքում ամեն ինչ աճում կամ թառամում է	99
յուշի-սյաուսի 与时消息	
Ուժեղ բանակը կախված է բարեկեցիկ բնակչությունից	100
յու ցիան բին ջե, ու ֆու ցի մին 欲强兵者, 务富其民	
Հետևելով Գու միջօրեականին, ինչպես օրենքի	101
յուան դու յի ուեյ լին 缘督以为经	
Հանգ / Հմայք	101
յուն 韵	
Ջեն (Թրթիռ, տատանում)	103
ջեն 震	
Արդարություն	104
ջենյի 正义	

Կառավարումը պետք է օգուտ բերի մարդկանց	104
ջի գուտ յոու չան, լի մին ուեյ բեն 制国有常, 利民为本	
Պահպանելով ժողովրդի կենսապայմանները	105
ջի մին ջի չան 制民之产	
Իմաստուն եղիր մտքով և գործիր ինչպես հարկն է	106
ջի յուան սին ֆան 智圆行方	
Միջին ճանապարհը	107
ջունդաո 中道	
Միասնությունն ուժ է	108
ջունջի-չենչեն 众志成城	
Ջուանցին երազում է թիթեռնիկ դառնալ	109
Ջուան Ջոու մեն դիե 庄周梦蝶	
Մեծարիւ առաքինի էությունը	109
ցուն դեսին 尊德性	
Հասկացությունների ցանկ 术语表	111
Չինական պատմության հակիրճ ժամանակագրություն 中国历史年代简表	114

**ՉԻՆԱԿԱՆ ՄՏՔԻ
ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՀԻՄՆԱԿԱՆ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

հատոր 7

Անգլերենից թարգմանությունը՝
Աստղիկ ԱԹԱԲԵԿՅԱՆԻ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2019

Հրատ. խմբագիր՝ Հ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Թ. Մաթեոսյան
Էջադրումը՝ Թ. Հարությունյանի
Կազմի ձեւավորումը՝ Ա. Բաղդասարյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափերը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 8 տպ. մասուկ
Տպարանակը՝ 500:

Տպագրվել է «Գիպակ պլյուս» հրատարակչության տպարանում
Լ.Ղ.Ն. Ստեփանակերտ, Հ. Հակոբյան

«ԳԵԼarm» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

- «Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012
«Սիրիուսի սրնգահարները»/Վ.Խլեբնիկով, Ն.Գումիլյով,
Վ.Խոդասեւիչ/ - 2012
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012
Ժարկո Սիլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Գ.Պրիգով, Վ.Նեկրասով,
Լ.Ռուբինշտեյն/ - 2014
Հենրիխ Սապգիր. «Ջուզահեռ մարդը» - 2014
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014
«Կամուրջների խռովությունը.
մետամետաֆորիստներ» - 2015
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կավվածքը»- 2015
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուրը.
Պատմվածքներ» - 2015
Արդի ռուսական վերլիբը (անթոլոգիա) - 2015
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015
Մա Բայ. «Սրտի արձագանքներ» - 2015
Եվգենի Վոդյազկին. «Լավր» - 2015
Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015
Ռուս այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 1) - 2016

Յու Ջիան. «Անձրեից պատսպարվող թռչունը» - 2016
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ.
Փախուստ դրախտից» - 2016
Չժան Յզի-յան. «Երագ ծովի մասին» - 2016

Վան Չենչկի. «Երիտասարդ վանականի սիրո
պատմությունը» - 2016
Լյուդմիլա Պետրուշենկայա. «Սեր. երջանկություն.
ներվին» - 2016

Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016
«Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան»
(անթոլոգիա) - 2016

Ռուս մինիմալիստներ (անթոլոգիա) - 2016
Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը, ուդայականությունը,
դատսիզմը, քրիստոնեությունը եւ չինական
մշակույթը» - 2016

Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 2 եւ 3) - 2016

Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017
Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017
Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» - 2017
Ջիդի Մաջիա. «Ընձառյուծից մինչեւ Մայակովսկի» - 2017
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 4) - 2017

Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիուոդ» - 2017
Դոնգ Քիանգ. «Թաղում» - 2017
Դոնգ Քիանգ. «Փառատոներ» - 2017
Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» - 2017
Սյաո Յյան. «Վիշապի մորուքներն ընդդեմ
նախագծերի» - 2017

Ուան Յուլիան. «Մերձակցության աստիճաններ» - 2017
Ֆյոդոր Սոլոգուբ. «Չնչադեղ» - 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 5) - 2018
Ու Չուն. «Չինական մշակույթ. փիլիսոփայություն» -2018
Մարտիրոս Ռբն. «Մոմերն իզուր են այրվել
մեղքերիս համար» - 2018
Ռեյսին Սյուրն, Սյուն Ճու. «Չինաստանի յուրահատկո-
թյունները: Չինաստանի համաշխարհային
ժառանգությունը»- 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 6) - 2018
Ադի ձայնը (20-րդ դարի հետադարձական թվականների
սերնդի չին գրողների պատմվածքներ) -2019
20-րդ դարի ռուսական պատմվածք (անթոլոգիա) - 2019



Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

Էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru
հեռ.։ +37497252323